Աբրահամ Նահապետ

(Հայկական Լեռնաշխարհի Եվ Քանաանի Փոխառնչությունները Մ.Թ.Ա.IV-II Հազարամյակներում)

Ծագումնաբանական

Ներածություն

Առաջավոր Ասիայի երկու տարածաշրջանների՝ Հայկական լեռնաշխարհի եւ Քանաանի միջեւ հնագույն ժամանակներում տեղի ունեցած փոխշփումների եւ փոխազդեցությունների պատմությունը գիտական գրականության մեջ գլխավորապես սահմանափակվում է բրոնզե դարի ընթացքում նկատված նմանատիպ երեւույթների մի փոքր տեսությամբ: Որպես կանոն, այդ վկայությունները, ժամանակագրական ըզգալի ընդմիջումներով, վերաբերում են Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան հուշարձաններում առկա նյութերի հետ ակնառու կամ որոշակի նմանություն դրսեւորող՝ սիրիա-պաղեստինյան, նաեւ մասնակիորեն՝ եգիպտական հնավայրերում (դամբարաններ) հայտնաբերված գտածոների համադրման արդյունքներին: Առայժմ այդ նմանությունները ընդամենը նկատվել են, սակայն հիմնավոր պատմագիտական (մշակութաբանական, էթնիկական եւ այլ) եզրակացություններ չեն արվել:

Ատենախոսության նպատակը մ.թ.ա. III-II հազարամյակներում Հայկական լեռնաշխարհի եւ Քանաանի միջեւ տեղի ունեցած շփումների բոլոր դրսեւորումների փաստագրական հիմքերի վերհանումն է, դրանք գիտական շրջանառության մեջ դնելը: Այդ նյութերի հիման վրա կկատարվեն համապատասխան պատմագիտական եզրակացություններ, որոնք ներառում են ինչպես երկու տարածաշրջանների միջեւ ընդհանուր բնույթի շփումները, այնպես էլ հետագայում, արդեն մ.թ.ա.II-I հազարամյակների սահմանագլխում ձեւավորվող հայ եւ հրեա ժողովուրդների միջեւ առկա տարբեր բնույթի ընդհանրությունները (մարդաբանական, մշակութային - հոգեւոր, լեզվական): Ըստ էության, սա հայագիտության եւ ընդհանրապես Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մեջ նոր բնագավառ է, որով էլ բացատրվում է ատենախոսության որոշ բաժինների բանավիճային բնույթը: Ներկայացվող ուսումնասիրությունը դնում է այս խնդրի հետազոտության հիմնասյուները՝ հետագայում աղբյուրագիտական հենքի խորացման եւ ամրապնդման ակնկալիքով:

Ատենախոսության թեմայի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ մ.թ.ա. III-II հազարամյակների ընթացքում երկու տարածաշրջանների միջեւ ընթացած շփումները քննարկվում են ազգագոյացման գործընթացի ետնախորքի վրա: Սա այն ժամանակաշրջանն է, երբ թե Հայկական լեռնաշխարհը, թե Քանաանը էթնիկական առումով իրենցից ներկայացնում էին հաճախ դժվար բնորոշվող պատկեր: Այս տեւական ժամանակահատվածում Առաջավոր Ասիայի գրեթե բոլոր շրջաններում, առաջին հերթին՝ Հայկական լեռնաշխարհում վկայված են ժողովրդագրական խոշոր ցնցումներ, որոնք ներկայանում են տարբեր չափերի էթնիկական տեղաշարժերի ձեւով: Այդ տեղաշարժերը ներառնում էին ինչպես Հայկական լեռնաշխարհին անմիջականորեն սահմանակից շրջանները, այնպես էլ ավելի հեռու ընկած տարածքները: Այսօր հնագիտական նյութերը, որոշ դեպքերում նաեւ գրավոր աղբյուրները թույլ են տալիս մասնակիորեն վերականգնելու շուրջ երկու հազարամյակ ընդգրկող իրադարձությունների շղթան, սակայն պատկերը շատ դեպքերում թերի է:

Ատենախոսը որպես հիմք է ընդունել այն տեսական մոտեցումը, ըստ որի երկու եւ ավելի էթնոմշակութային համալիրների տեւական փոխշփումները, անկախ դրանց կրողների քանակից, պետք է պահպանվեին տվյալ տարածքի նյութական եւ հոգեւոր մշակույթի տարրերի տեսքով: Բրոնզե դարում դեպի սիրիա-պաղեստինյան տարածաշրջան Հայկական լեռնաշխարհից եւ հարակից շրջաններից ընթացած տեղաշարժերը պետք է հանգեցնեին այստեղ հնդեվրոպական եւ խուրրիական մակաշերտի (սուպերստրատ) ձեւավորմանը: Եվ եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ եկվորները տեղացիների համեմատ շատ դեպքերում գտնվում էին սոցիալական, քաղաքական եւ մշակութային զարգացման ավելի բարձր մակարդակի վրա, ապա դժվար չէ ենթադրել, որ նորամուտ մշակութային տարրերը, գոնե մասամբ, պետք է արմատավորվեին տեղում եւ պահպանվեին ավելի ուշ շրջանում այստեղ ձեւավորված էթնոսների, առաջին հերթին՝ հրեա ժողովրդի մեջ:
Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է ուսումնասիրության առարկայի հնագիտական-մարդաբանական ասպեկտին: Առանձնակի կարեւորություն ունեն Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան Կուր-Արաքսյան մշակույթի կրողների տեղաշարժերը, որոնք մ.թ.ա. III հազ. կեսերին

ծավալվեցին դեպի Փոքր Ասիա, Իրանական բարձրավանդակ, Սիրիա եւ Քանաան (Burney and Lang, 1971; Kelly-Buccellati, 1979; Burney, 1980; 1989; 1997; Palmieri,1986; Frangipane, 1993 եւ այլն) եւ որի հետեւանքով այստեղ ի հայտ եկավ Քիրբետ-Կերակյան մշակութային համալիրը:

Առ այսօր պարզ չէ Քիրբետ-Կերակի կրողների էթնոլեզվական պատկանելությունը (հնդեվրոպական թե խուրրիական, կամ գուցե երկուսը միասին): Սակայն անվիճելի է այդ տեղաշարժի ազդեցությունը սիրիա-պաղեստինյան տարածաշրջանի վրա. այստեղ գոյություն ունեցող քաղաքային կենտրոնները գրեթե ամբողջությամբ վերացան: Թե Կուր-արաքսցիների տեղաշարժերը ինչպիսի տարածք կարող էին ընդգրկել եւ ինչպիսի ժողովրդագրական փոփոխությունների հանգեցնել, ոչ միշտ է, որ ըմբռնելի է: Այնուհանդերձ, անհրաժեշտ է արձանագրել, որ վերոհիշյալ լայնածավալ ավերածությունները չէին կարող չավարտվել Կուր-Արաքսի կրողների հաստատումով Քանաանում, որից էլ բխում է նրանց մասնակցությունը այս տարածաշրջանի հետագա էթնոմշակութային զարգացումներում:

Սիրիա-պաղեստինյան տարածաշրջանի քաղաքական, տնտեսական եւ մշակութային զարգացումների վրա այսպես կոչված Կիրբեթ-Կերակյան մշակույթի կրողների թողած ազդեցության, ինչպես նաեւ Հայկական լեռնաշխարհում ավելի վաղ շրջանում (վաղ բրոնզեդար) այդ մշակույթի առկայության մասին մասնագիտական հրատարակություններում վաղուց ի վեր կատարվել են համապատասխան հետազոտություններ (Amiran, 1952; 1965; 1968; Braidwood and Braidwood, 1960; Todd, 1973; Kelly-Buccellati, 1979; Burney, 1989): Ատենախոսության մեջ նախորդ ուսումնասիրություններում օգտագործված նյութերը հավելվում են նորահայտ աղբյուրներով եւ թարմ մասնագիտական ուսումնասիրություններով:

Առաջին գլխի երկրորդ բաժնում քննարկվում է «արմենոիդ» մարդաբանական տիպի ներկայության խնդիրը Քանաանում: Այստեղ պատմական բոլոր ժամանակներում, սկսած նեոլիթից, արձանագրված է այդ տիպի զգալի դերը, որի բացատրությունը կարիք ունի ավելի խոր հետազոտության, դրա պատճառների վերհանման: Այս մարդաբանական տիպի լայն տարածումը, Քանաանից բացի, Առաջավոր Ասիայի տարբեր տարածաշրջաններում (Միջագետք, Սիրիա, Հայկական լեռնաշխարհ, Փոքր Ասիա, Իրանական բարձրավանդակ), ինչպես նաեւ Եվրոպայում եւ այլ շրջաններում (von Luschan, 1911; 1943; von Oppenheim, 1933; Coon, 1939; Angel, 1953; Phillips, 1965; Ferembach, 1966; Mellaart, 1966; 1965; Arensburg, 1973; Childe, 1973; Moisheson, 2001 եւ այլն), հարկադրում է համապատասխան հիմնավորում տալ դրա կրողների տեղաշարժերին:

Այս առումով կարեւոր է նշել մի հանգամանք: Հայկական լեռնաշխարհի եւ Քանաանի հասարակությունների անմիջական շփումները, որպես կանոն, կարող էին տեղի ունենալ միայն էթնիկական տեղաշարժերի փուլերում, քանի որ սրանց միջեւ առկա էր տարածական զգալի անջրպետ՝ Սիրիան եւ Հյուսիսային Միջագետքը: Ատենախոսության երկրորդ գլխում ներկայացվում է Հյուսիսային Միջագետքում մ.թ.ա. III հազ. վերջերին - II հազ. սկզբներին տիրող քաղաքական իրավիճակը (O'Callaghan,1948; Wilhelm, 1989; Salvini, 1998; Steinkeller, 1998 եւ այլն), այստեղ ընթացող գործընթացները, որոնց արդյունքում որոշ ժամանակ անց (միջին բրոնզե դարի վերջերին - մ.թ.ա. XVIII-XVIIդդ.) Հայկական լեռնաշխարհից եւ հարակից շրջաններից դեպի Սիրիա եւ Քանաան տեղի ունեցավ տեղաշարժային երկրորդ ալիքը, եւ որը լավ վկայված է գրավոր եւ հնագիտական նյութերով: Այս տեղաշարժն ընդգրկում էր Հյուսիսային Միջագետքի խուրրիներին եւ հնդեվրոպացի արիացիներին: Աշշուրի պետության անկման շրջանում խուրրիները եւ նրանց հետ սերտ շփումների մեջ գտնվող արիացիները աստիճանաբար ծավալվեցին դեպի հարավ-արեւմուտք՝ Սիրիա եւ Քանաան, որի հետեւանքով վերոհիշյալ ընդարձակ տարածաշրջանում առաջ եկան մեծաքանակ մանր քաղաքական միավորներ (O'Callaghan, 1948; Albright, 1966; Mayrhofer, 1966; Wilhelm, 1989 եւ այլն): Հատուկ ուշադրություն է դարձվում խուրրիների նախնական բնակության վայրի (Speiser, 1933; Ungnad, 1936; Gelb, 1944; Hrouda, 1971; Burney and Lang, 1971; Kammenhuber, 1977; Burney, 1980; Wilhelm, 1989; Steinkeller, 1998 եւ այլն), նրանց եւ արիացիների համակեցության հարցերին, որոնք կարեւոր նշանակություն ունեն ատենախոսության առջեւ դրված խնդիրների լուսաբանման համար:

Հայկական լեռնաշխարհի եւ Քանաանի միջեւ առնչությունների ետնախորքում նույնքան մեծ տեղ ունեն «արիացիները» (հնդիրանական լեզվախմբի առայժմ դժվարըմբռնելի մի ներկայացուցիչ), որոնց դերը անչափ մեծ է հայ եւ հրեա էթնոսների միջեւ քննարկվող ընդհանրությունների ձեւավորման

ասպարեզում: Արիացիների խնդիրը քննարկվում է խուրրիների պես միեւնույն կտրվածքով: Հրապարակի վրա առկա հետազոտություններում արիացիների իրական դերը որոշակիորեն թերագնահատված է (Kammenhuber, 1961; 1968; 1977; Дьяконов, 1970; Renfrew, 1988; Mallory, 1989 եւ այլն), չնայած նախկինում եւ այսօր էլ բացահայտված է այս էթնիկական խմբի մասնակցությունը Առաջավոր Ասիայի էթնոքաղաքական եւ մշակութային զարգացումներում (Mironov, 1933; O'Callaghan, 1948; Kronasser, 1963; Mayrhofer, 1966; 1974; Gamkrelidze and Ivanov, 1985 եւ այլն):

Խուրրիների եւ արիացիների եւս մեկ տեղաշարժ, այս անգամ արդեն հարկադիր, վկայված է մ.թ.ա. XV-XIVդդ.: Եգիպտական XVIII դինաստիայի փարավոնների (Թութմոս III, Ամենհոտեպ II) նվաճումների ընթացքում Միտաննիից գերեվարվեցին եւ Քանաանում բնակեցվեցին մեծաքանակ խուրրիներ եւ արիացիներ:

Ատենախոսության միեւնույն գլխում քննարկվում է մասնագիտական գրականության մեջ վաղուց ի վեր լուրջ բանավեճերի առարկա հանդիսացող հիքսոսյան խնդիրը (Albright, 1930-31; Engberg, 1939; Potratz, 1939; Redford, 1970; 1997; Helck, 1971; Ward, 1975; Bietak, 1997 եւ այլն): Եգիպտոսում հիքսոսների ներկայությանն առնչվող անվանաբանական եւ հնագիտական նյութերի քննարկման արդյունքում ատենախոսը կատարում է մի շարք դիտարկումներ, որոնք թույլ են տալիս զգալիորեն պարզելու հիքսոսների էթնիկական պատկանելության եւ նախնական բնակության վայրի հետ կապված կարեւոր խնդիրներ: Մասնավորապես, պարզություն է մտցվում հիքսոսյան անուններում սեմական լեզուների զգալի ներկայության հարցում:

Վերոհիշյալ տեղաշարժային ալիքների հետեւանքով Քանաանում ենթադրելի է խուրրի-արիական զգալի բնակչության հաստատում, որը, անկասկած, իր հետքն է թողել այս տարածաշրջանի բնակչության էթնո-մարդաբանական եւ մշակութային դիմագծի վրա:

Երկրորդ գլուխը եզրափակում է Սիրիայում եւ Քանաանում ժողովրդագրական իրավիճակի վրա վերոհիշյալ խուրրի-արիական ներգաղթի ունեցած հետեւանքներին նվիրված տեսությունը: Ի մի են բերվում տարբեր հետազոտողների կատարած ուսումնասիրությունների արդյունքները (Mironov, 1933; Dumont, 1947; Mayrhofer, 1966; 1974; Albright, 1966; Laroche, 1966):

Ատենախոսության երրորդ գլխում քննարկվում է հրեա ժողովրդի ծագումնաբանության հիմքում գտնվող Աբրահամ նահապետի հյուսիսմիջագետքյան առնչության խնդիրը: Հեղինակը, հենվելով ինչպես Սուրբ Գրքի տվյալների, այնպես էլ մի շարք այլ բնույթի փաստերի ու փաստարկների վրա, եզրակացնում է, որ Աբրահամի տոհմի նախնական բնակության վայրը ոչ թե հարավային Միջագետքի Ուր քաղաքն էր, այլ հյուսիսային Միջագետքի Ուրը (= հետագա ժամանակների Ուռհա-Ուրֆա):

Հատուկ քննարկվում է Հյուսիսային Միջագետքի, որպես Առաջավոր Ասիայի տարբեր տարածաշրջանների միջեւ ուրույն կապող օղակ, տարբեր էթնոմշակութային հանրությունների հանդիպավայր լինելու խնդիրը: Սեպագրական, անտիկ եւ հայկական աղբյուրների, պատմագիտական եւ լեզվաբանական ուսումնասիրությունների (Weidner, 1923; Luckenbill, 1926-1927; Smith, 1928; Ungnad, 1936; Gelb, 1944; O'Callaghan, 1948; Grayson, 1972-1976; Steinkeller, 1998 եւ այլն) լույսի ներքո հետազոտվում է այս տարածաշրջանի նշանակությունը որպես տարբեր ժողովուրդների միջեւ տեւական փոխառնչությունների իրացման կենտրոն: Ատենախոսը փորձում է հիմնավորել այն տեսակետը, որ Հյուսիսային Միջագետքում են դրվել հայերի, հրեաների, արամեացիների եւ մյուս ժողովուրդների միջեւ մասնագետների վեր հանած ընդհանրությունները լեզվի, կրոնի, կենցաղի եւ այլ ասպարեզներում: Ըստ ամենայնի, խուրրիները եւ արիացիները Հյուսիսային Միջագետքի այն ժողովուրդներն էին, որոնք կապող օղակ էին Հայկական լեռնաշխարհի եւ Քանաանի միջեւ, նրանց միջոցով պետք է ընթանային հայ եւ հրեա ժողովուրդների միջեւ վկայված ընդհանրությունները: Այս եզրակացության օգտին են վկայում մի կողմից խուրրիների եւ հայերի, մյուս կողմից՝ խուրրիների եւ աստվածաշնչային հրեաների միջեւ առկա լեզվական շփումները: Ատենախոսը հօգուտ այս եզրակացության բերում է մի շարք փաստական նյութեր (Աստվածաշնչում պահպանված խուրրիական սովորույթներ, հնդեվրոպական-հայկական բառեր):

Գլուխ Առաջին
Հայկական Լեռնաշխարհը Եվ Քանաանը. Վաղ Շփումներ

Կուր-Արաքսյան մշակույթը

Հայկական լեռնաշխարհի եւ Քանաանի միջեւ փոխհարաբերությունների ամենավաղ եւ հավաստի փուլը թվագրվում է մ.թ.ա. III հազ. կեսերով: Սա այն ժամանակաշրջանն էր, երբ ողջ Հայկական լեռնաշխարհում եւ հարակից շրջաններում գոյություն ուներ մի հզոր մշակութային համալիր, որը հնագետներն անվանում են տարբեր ձեւով՝ «Կուր-Արաքսյան» կամ «Վաղ Անդրկովկասյան» (Burney and Lang, 1971: 43ff.): Մ. Քելլի-Բուչելատին առաջարկել էր «Արտաքին բերրի կիսալուսին» (Kelly-Buccellati, 1979: 413f.) տերմինը, որը, սակայն, հետագայում չընդունվեց: Սրանցից առավել տարածվածը առաջինն է, որն էլ կիրառվում է ատենախոսությունում:

Կուր-Արաքսյան մշակույթը նախկինում մասնագետները թվագրում էին մ.թ.ա. IV հազ. վերջերից մինչեւ մ.թ.ա. III հազ. վերջերն ընկած ժամանակահատվածով (Burney and Lang, 1971; Kelly-Buccellati, 1979: 424 եւ այլն): Հետագա ուսումնասիրությունները, որոնք հենվում էին հնագիտական գտածոների ավելի ճշգրիտ թվագրման վրա, թույլ տվեցին զգալիորեն ետ տանել այդ թվագրությունը: Այսօր արդեն պարզ է, որ Կուր-Արաքսի սկիզբը անհրաժեշտ է համարել մ.թ.ա. IV հազ. կեսերից ոչ ուշ (Easton, 1976: 145ff.; Burney, 1989: 45; 1997: 178; Yakar, 1990: 94ff.; Badalyan et al., 1992: 48 n.6; Sagona, Pemberton and McPhee, 1993: 74):

Հայկական լեռնաշխարհի, առաջին հերթին այսօրվա Հայաստանի եւ հարավային Վրաստանի վաղ բրոնզեդարյան հասարակությունների համար այս ժամանակաշրջանը մեծ վերելքի փուլ էր: Ամենուրեք նկատելի է վաղ քաղաքային մշակույթի ձեւավորման սկիզբ: Կուր-Արաքսյան մշակույթի վերաբերյալ կատարվել են մեծաքանակ ուսումնասիրություններ հայ, վրացի, ռուս եւ այլազգի մասնագետների կողմից (Пиотровский, 1949; Մարտիրոսյան, 1964; անզաղյան, 1967; 1979; Burney and Lang, 1971; Гогадзе, 1972; Хачатрян, 1975; Джапаридзе, 1989):

Կուր-Արաքսյան մշակույթի կենտրոնները հիմնականում գտնվում էին հարթավայրերում եւ ավելի բարձր տեղադրված հարթ տեղանքներում՝ Արարատյան դաշտում, Շիրակի դաշտում, գետահովիտներում՝ Կուր գետի ափերին եւ այլն: Բնակավայրերը տարածքով փոքր էին (միջին հաշվով՝ 1-2 հեկտար), սակայն հանդիպում էին բավական խոշորները: Օրինակ, Շենգավիթը (այսօրվա Երեւանի տարածքում) զբաղեցնում էր մոտ 10 հեկտար տարածք: Բնակավայրերի մի մասը պաշտպանված էր քարե պարիսպներով (օր., Շենգավիթ, Էլար եւ այլն): Սովորաբար տները բաղկացած էին 1-2 սենյակից, իսկ հատակագիծը երկու տիպի էր՝ կլոր եւ ուղղանկյուն: Սովորաբար, տները բնակավայրի ներսում շարված էին շրջանաձեւ՝ «հրապարակի» երկայնքով:

Կուր-Արաքսի հասարակությունը դեռեւս ապրում էր սոցիալական շերտավորման վաղ փուլում: Այդ մասին կարելի է եզրակացնել հասարակական կառույցների սակավությամբ, նաեւ բազմամարդ թաղումների բացակայությամբ պայմանավորված: Թաղումները հիմնականում անհատական էին եւ աչքի չէին ընկնում հարստությամբ (փոքրաթիվ կավանոթներ եւ այլ իրեր):

Կուր-Արաքսի բնակիչների գործունեության ամենակարեւոր բնագավառներից էր մետաղագործությունը: Պեղումների ընթացքում հայտնաբերվել են զգալի քանակությամբ պղնձե եւ արսենիկ պղնձե գործիքներ, զենքեր ու զարդեր: Կան այլ մետաղներից պատրաստված իրեր եւս: Հատկապես մեծ զարգացում էր ապրում խեցեգործությունը: Անդրկովկասից ծագող Կուր-Արաքսյան կավանոթները լայն տարածում ունեին ինչպես հյուսիս-արեւմտյան Իրանում, արեւմտյան Հայաստանում, այնպես էլ Սիրիայում ու Պաղեստինում: Խոսքը Անդրկովկասյան տիպի սեւ ու կարմիր թրծված խեցեղենի, նաեւ ճարտարապետության մասին է, որը մ.թ.ա. III հազ. սկզբներից սկսում է լայնորեն տարածվել դեպի արեւմուտք, հարավ-արեւմուտք ու հարավ-արեւելք (Kelly-Buccellati, 1973: 51ff.):

Կուր-Արաքսի ավարտի նոր թվագրությունը (մ.թ.ա. 2700-2600թթ.) թույլ է տալիս զգալիորեն հետ տանելու այդ մշակույթի «էքսպանսիան» տարբեր ուղղություններով: Այս անցումային ժամանակաշրջանում Անդրկովկասում ու որոշ հարեւան շրջաններում տեղի ունեցան խոշոր փոփոխություններ, որոնք մասնագետները սովորաբար բացատրում են արտաքին աշխարհից հնդեվրոպական ցեղերի ներթափանցմամբ (այս մասին տես ստորեւ): Փոփոխությունները իրենց զգացնել տվեցին կյանքի բոլոր բնագավառներում: Այդ պահից սկսվում է միջին բրոնզեդարը, որը շարունակվում է մինչեւ մ.թ.ա. II հազ. առաջին քառորդի վերջերը: Որո՞նք էին այդ փոփոխությունները:

Առաջին եւ ամենակարեւոր տեղաշարժը բնակչության կենցաղավարման եղանակն էր: Նախկին բնակավայրերի մեծ մասը լքվեց: Հնագետներին հայտնի են միայն առանձին բնակավայրեր, որտեղ կյանքը շարունակվել է: Նյութական մշակույթի հուշարձանների ճնշող մեծամասնությունը գալիս է դամբարաններից. հայտնի են մեծաքանակ դամբարանադաշտեր: Ամեն ինչ վկայում է այն մասին, որ Կուր-Արաքսի բնակիչները ստիպված էին թողնել նստակյաց կյանքը եւ անցնել քոչվոր կամ կիսաքոչվոր կենցաղավարման (Kelly-Buccellati, 1979: 424): Անհրաժեշտ է նշել, որ այս երեւույթն անմիջականորեն առնչվում է Առաջավոր Ասիայում մ.թ.ա.III հազ. երկրորդ կեսից ընթացած ժողովուրդների մեծ տեղաշարժերին (խուրրիներ ու արիացիներ, հնարավոր է, նաեւ խեթեր, ինչի մասին տե՛ս Գլուխ Երկրորդ):

Հաջորդ փոփոխությունը նոր տիպի թաղումների՝ կուրգանների հայտնվելն է: Հնագետները պեղել են բազմաթիվ կուրգաններ Վրաստանում՝ Թրիալեթիում (Куфтин, 1941; Джапаридзе, Жоржикашвили, Гогадзе, 1974), Թազաքենդում, Առիճում, Լճաշենում, Էլարում, Վանաձորում, Էջմիածնում (Пиотровский, 1949; Кушнарева, 1960; Խաչատրյան, 1975; Խանզադյան, 1979): Վրաստանի տարածքում գտնվող Մարտկոպիի կուրգանի մակերեսը 1 հա է, իսկ բարձրությունը՝ 12մ: Այս վերին աննախադեպ խոշոր ու հարուստ դամբարաններում հաճախ թաղված էին տասնյակ մարդիկ ու անասուններ (գլխավորապես ձիեր) ու մեծ քանակությամբ զենք, գործիքներ ու զարդեղեն, ընդ որում հաճախ ոսկուց ու արծաթից պատրաստված:

Այդպիսի դամբարանների առկայությունը վկայում է հասարակության կյանքում սոցիալական հիմնավոր տեղաշարժերի մասին: Որոշակիորեն կարելի է ասել, որ Անդրկովկասում ու հարակից շրջաններում ստեղծվում են քաղաքական միավորներ, ընդ որում դրանց թիվը զգալի է՝ հաշվի առնելով հետեւյալ պարագան: Անդրկովկասի միջին բրոնզեդարյան մշակույթը միատարր չէ, ինչպես նախորդ փուլը՝ վաղ բրոնզե դարը: Այստեղ հստակ առանձնանում են տարբեր խեցեղենի տիպեր՝ յուրաքանչյուր շրջանի համար: Ասվածը կարող է նշանակել, որ Անդրկովկասում մ.թ.ա. III հազ. երկրորդ կեսին արդեն հիմնականում ավարտվել էր դեռեւս վաղ բրոնզեդարում սկսված հասարակության սոցիալական շերտավորման գործընթացն ու դրա արդյունքում առաջ եկան մի շարք պետություններ կամ իշխանություններ: Ինչպես նկատվել է, հսկայական չափերի հասնող կուրգաններում թաղվածները պետք է լինեին խոշոր իշխաններ կամ նույնիսկ արքաներ (ճպՐվօ, 1988: 45):

Տնտեսության բնագավառում գլխավոր առանձնահատկությունը մետաղագործության աննախընթաց վերելքն էր: Կուրգաններից հայտնաբերված մեծաքանակ զենքերը, գործիքները, զարդերը պատրաստված են ամենատարբեր մետաղներից: Հաշվարկված է, որ միջին բրոնզեդարյան Անդրկովկասում մետաղյա իրերը շուրջ երեք անգամ գերազանցում են վաղ բրոնզեդարյան մետաղյա իրերին (Chernykh, 1992: 160):

Մ.թ.ա. III հազ. կեսերին Կուր-Արաքսյան մշակութային արեալի արեւելքում՝ Անդրկովկասում կուրգանային մշակույթի կրողների հայտնվելու վերաբերյալ մասնագետների մեծ մասը այսօր հակված է հետեւյալ բացատրությանը: Նրանց կարծիքով, թռեղքյան մշակույթի կերտողները չէին կարող ծագել «խաղաղ կենցաղով» բնորոշվող Կուր-արաքսցիներից. դրանք ռազմատենչ հնդեվրոպացիներ էին: Հայտնի հնագետ Մ.Գիմբուտասը կարծում էր (Gimbutas, 1970: 181f.; Mallory, 1989: 231ff.), որ հնդեվրոպական ցեղերը (այսպես կոչված «կուրգանային ժողովուրդներ»), որոնք նախապես բնակվում էին Վոլգա գետի ստորին հոսանքներից մինչեւ Ուզբեկստան ընկած տափաստաններում, մ.թ.ա. XXIVդ. մտան Անդրկովկաս ու Արեւելյան Անատոլիա: Այստեղ նրանք ավելի քաղաքակիրթ տեղացիներից սովորեցին մետաղագործություն, սայլերի պատրաստման եղանակը եւ այնուհետեւ

սկսեցին իրենց հետագա ծավալումը, որն ուղեկցվում էր նվաճումներով: Ընդ որում, սա «կուրգանյան ժողովուրդների»՝ դեպի հարավ ընթացած առաջին շարժումը չէր: Մ. Գիմբուտասը ենթադրում էր այդպիսի մի տեղաշարժ շուրջ 1000 տարի ավելի վաղ՝ մ.թ.ա.3500թ. մոտերքում (Gimbutas, 1973: 175ff.; նաեւ Mallory, 1977: 362):

Ի. Մելլաարտի կարծիքով (Mellaart, 1958: 2ff.), Կովկասյան լեռներից Անդրկովկաս մուտք գործած հնդեվրոպացիները հետագայում Փոքր Ասիայում հզոր տերություն ստեղծած խեթերն էին, որոնք որոշ ժամանակ անց շարունակեցին շարժումը դեպի արեւմուտք: Նա, ինչպես նաեւ վաղ շրջանի որոշ այլ մասնագետներ (օրինակ, Crossland, 1971: 841), Փոքր Ասիայում հայտնված «կապադովկիական» գունազարդ խեցեղենը, արեւմտյան Հայաստանում (ժաման. Բայբուրթի շրջան) հնագիտորեն վկայված ավերածությունները վերագրում էին հարավ-արեւելյան Եվրոպայից ներգաղթած հնդեվրոպացիներին: Չնայած անհրաժեշտ է նշել, որ դեռ այդ տարիներին որոշակի կասկածներ կային մ.թ.ա. III հազ. երկրորդ կեսին Փոքր Ասիայում տեղի ունեցած խոշոր ավերածությունների հեղինակների նախնական բնակության վայրի հարցում: Այսպես, եթե նման խոշոր ավերիչ տեղաշարժ էր եղել հարավ-արեւելյան Եվրոպայից, ապա վերջինում պետք է նույնպիսի երեւույթներ նկատվեին, որոնք սակայն բացակայում են (Crossland, 1971: 843):

Այսպիսով, ամփոփելով Կուր-Արաքսյան եւ դրան անմիջականորեն հաջորդող Թռեղքյան մշակութային տարածաշրջանին նվիրված բաժինը, կարելի է արձանագրել հետեւյալը: Մ.թ.ա. IV հազ. երկրորդ կեսին ձեւավորված Կուր-Արաքսյան մշակութային արեալի կենտրոնական՝ առաջատար շրջանը Անդրկովկասն էր, որտեղ շուրջ հազարամյա բնականոն զարգացման ընթացքում ստեղծվեցին վաղ պետականության հիմքերը: Կուր-Արաքսի փոքր բնակավայրերի շարքում կային այնպիսիք, որտեղ պարզ երեւում էին սոցիալական շերտավորման նշաններ (օր., Շենգավիթը): Կուր-Արաքսյան մշակույթը արդեն մ.թ.ա. III հազ. սկզբներին սկսում է ընդարձակվել տարբեր ուղղություններով՝ արեւմտյան Հայաստան (ընդհուպ մինչեւ արեւելյան Փոքր Ասիա), հյուսիս-արեւմտյան Իրան: Անդրկովկասից բնակչության խոշոր խմբեր աստիճանաբար ներթափանցում են վերոհիշյալ տարածքներ՝ տանելով իրենց մշակույթին բնորոշ երեւույթներ:

Կուր-արաքսցիների առաջին խոշոր տեղաշարժը դեպի արեւմտյան Հայաստան տեղի ունեցավ մ.թ.ա. 3000թ. սահմաններում: Ժամանակակից Մալաթիա քաղաքից 7 կմ հեռու գտնվող Արսլանթեփե հնավայրը (= ժաման. Էսքի Մալաթիա), որը մինչ այդ գտնվում էր Միջագետքի շումերական քաղաքակրթության մշակութային ուժեղ ազդեցության տակ (այդ տարածաշրջանի հետ սերտ կապերի մասին տես Burney, 1980: 160f.; 1993: 313), հանկարծակի վերացավ Անդրկովկասից եկած բնակչության հարվածների տակ: Դրա վկայությունը Արսլանթեփեում ավերված շերտից հետո սեւ ու կարմիր թրծված խեցեղենի հայտնվելն է (Burney, 1980: 162; 1997: 178; Palmieri, 1986: 29ff.):

Նույնն է իրավիճակը նաեւ Եփրատից արեւելք՝ Ծոփքի հնավայրերում (Նորշունթեփե, Կորուջութեփե եւ այլն): Հատկանշական է, որ Կորուջութեփե խոշոր հնավայրից 1970-ականների սկզբներին հայտնաբերված շուրջ 18000 խեցեբեկորների գերակշիռ մասը պատկանում էր Անդկրկովկասյան ծագման սեւ ու կարմիր թրծված տիպին (Kelly-Buccellati, 1973: 47): Հաջորդող երկու-երեք դարերի ընթացքում առկա են այս տարածաշրջանի եւ հյուսիսային Սիրիայի ու հյուսիսային Միջագետքի միջեւ սերտ հարաբերություններն արտացոլող բազմաթիվ հնագիտական նյութեր: Այդ փաստը կարելի է մեկնաբանել որպես եկվորների հետագա շարժում ավելի հարավ՝ դեպի «բերրի կիսալուսին»:

Անդրկովկասյան վաղ բրոնզեդարյան մշակույթի կրողների հաջորդ շարժումը վաղ բրոնզեդարի վերջին շրջանն է ընկնում, երբ Արսլանթեփեում եւ Ծոփքի մյուս շրջաններում վկայված են բնակավայրերի լքման բազմաթիվ դեպքեր (Palmieri, 1978: 313; Frangipane, 1993: 47): Արդեն հաջորդ՝ միջին բրոնզեդարյան I փուլում Արսլանթեփեում հայտնվում է Վանա եւ Ուրմիա լճերի հարակից շրջաններին բնորոշ խեցեղեն: Ջ. Յաքարի հետազոտություններից պարզվում է, որ մ.թ.ա. 3000թ. սահմաններում տեղի ունեցած միգրացիայի կրողները մետաղամշակության մեծ փորձ ունեին: Նրանք հաստատվեցին Ծոփքում եւ Արսլանթեփեում՝ իրենց հետ բերելով զարգացած մշակույթ. ընդ որում, որոշ դեպքերում նրանց գալուստը չէր ուղեկցվում ավերածություններով (Yakar, 1990: 98):

Մ.թ.ա. III հազ. ընթացքում Կուր-արաքսցիների երկու խոշոր տեղաշարժերի, հատկապես երկրորդի

պատճառները այնքան էլ պարզ չեն: Հնարավոր է, դրանք կապված էին կլիմայական պայմանների վատթարացման հետ կամ թերեւս այստեղ կարեւոր դեր էր խաղում գերբնակեցվածության խնդիրը: Այդ տեղաշարժերը ժամանակագրորեն համընկան Առաջավոր Ասիայում վկայված այլ տեղաշարժերի հետ: Սրանցից երկրորդը այն ժամանակաշրջանն էր, երբ հյուսիսային Միջագետքում հայտնվեցին խուրրիները, իսկ Սիրիայում եւ Քանաանում, քիչ ավելի վաղ՝ Քիրբեթ-Կերակ պայմանական անվանումը կրող մշակույթը, որի Անդրկովկասյան ակնառու առնչությունները վաղուց արդեն արձանագրել են մասնագետները:

Վերը ներկայացված բաժիններում խոսվեց մ.թ.ա. IV հազ. կեսերից Անդրկովկասում, արեւմտյան Հայաստանում եւ հարակից շրջաններում ձեւավորված եւ մ.թ.ա.III հազ. կեսերից դեպի Սիրիա ու Պաղեստին ծավալված Կուր-Արաքսյան մշակույթի ու դրա Քիրբեթ-Կերակյան դրսեւորման մասին: Այս բաժնում ներկայացնենք Կուր-Արաքսյան ու նրա անմիջական շարունակությունը կազմող թռեղքյան մշակույթների կերտողների էթնիկական կազմի վերաբերյալ մասնագիտական գրականությունում առկա կարծիքները: Դրանց վերլուծությունը թույլ կտա գնահատել սիրիա-պաղեստինյան տարածաշրջանի էթնիկական զարգացման վրա Հայկական լեռնաշխարհի բնակչության խաղացած դերը:

Սկսած 1970-ականներից, Կուր-Արաքսյան մշակույթի ստեղծողներ են համարվում խուրրիները (Speiser, 1941; Burney and Lang, 1971: 48ff.; Mallory, 1989: 29f.,231ff.; Burney, 1997: 177; Greppin, 1991: 720 n.3; Kelly-Buccellati, 2004: 77 [վերջինը՝ որոշ վերապահումներով] եւ այլն): Այդ տեսակետը հենվում է այն փաստին, որ դեռեւս մ.թ.ա. III հազ. երկրորդ կեսին (մ.թ.ա. XXIIIդ.) արդեն հիշատակվում են միջագետքյան սեպագիր աղբյուրներում՝ Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններում (տե՛ս Գլուխ 2): Բացի այդ, որոշ լեզվաբանների ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են խուրրիերենի եւ արեւելակովկասյան լեզուների (այսպես կոչված «նախյան-դաղստանյան») միջեւ ազգակցական կապերի օգտին վկայող ընդհանրություններ (տես Գլուխ 2): Հաշվի առնելով այդ հանգամանքները, մի շարք մասնագետներ կարծում են, որ խուրրիները հենց այն էթնիկական խումբն էին, որը կերտել էր Կուր-Արաքսյան մշակույթը:

Բացի վերոհիշյալից, անհրաժեշտ է նշել եւս մեկ հանգամանք: Կուր-Արաքսյան մշակույթի բնակչության էթնոլեզվական պատկանելության խնդիրը ներկայումս շատ բարդ է ու առկա հնագիտական նյութերով հնարավոր չէ կառուցել համոզիչ եզրակացություններ: Այս մշակույթի կենտրոնը Անդրկովկասն էր (Հայաստանը, Վրաստանի հարավը եւ հարակից շրջանները), որտեղից պարբերաբար տեղի էր ունենում բնակչության որոշ արտահոսք՝ տարբեր ուղղություններով: Այդ արտագաղթերը լայն ծավալ ընդունեցին մոտավորապես մ.թ.ա. 3000թ. եւ XXIVդ.: Ամենուրեք անդրկովկասցիները համագործակցում էին եւ համատեղ բնակվում տեղացիների հետ: Ինչպես նկատել են հնագետները (Todd, 1975: 187ff.; Kelly-Buccellati, 1979: 429f.; Sagona, 1994: 15; Rothman and KΦzbe, 1997: 112ff.), բոլոր այն վայրերում, որտեղ առկա է Կուր-Արաքսի մշակույթը, պարզորոշ երեւում է եկվոր ու տեղական բնակչության խաղաղ համագոյակցություն: Այսինքն, միգրացիայից որոշ ժամանակ անց կարելի է վստահորեն ենթադրել տարբեր էթնիկ խմբերի միախառնում: Սա՝ Անդրկովկասից դուրս ընկած տարածքների մասին: Ինչ վերաբերում է բուն Անդրկովկասին, ապա դրա բնակչության բացարձակապես խուրրիական ծագման մասին ենթադրությունը չի հենվում որեւէ փաստարկի վրա: Եթե հաշվի առնենք խուրրիների ու հնդիրանական ժողովուրդների միջեւ առկա տեւական փոխշփումները (տե՛ս Գլուխ 2), ապա մեծ հավանականություն կա Անդրկովկասի վաղ բրոնզեդարյան փուլում տեսնելու խուրրի-հնդեվրոպական համագոյակցություն: Այս խնդիրը հետագա ավելի խոր ուսումնասիրության կարիք ունի:

Քանաանի նյութական մշակույթի օտարամուտ դրսեւորումները

Դեռեւս 1920-ական թվականներին Պաղեստինի մի շարք հընավայրերում հնագետները հայտնաբերեցին այս տարածաշրջանի վաղ բրոնզեդարյան մշակույթի համար օտար խեցեղեն (Albright, 1926: 28; Fitzgerald, 1935: 5ff.), որը հետագայում պայմանականորեն ստացավ «Քիրբեթ-Կերակյան» անվանումը:

Քիրբեթ-Կերակ հնավայրը (նախկին անվանումը՝ Բեթ-Յերախ) գտնվում է Պաղեստինում, այնտեղ,

որտեղ Հորդանան գետը հոսում է Գալիլեայի ծովից: 1945-46թթ. կատարված պեղումները հայտնաբերեցին մի փոքր պարսպապատ քաղաք, որը գոյություն է ունեցել վաղ բրոնզեդարում (մ.թ.ա. III հազ.): Այստեղից հայտնաբերված սեւ ու կարմիր թրծված խեցեղենը հետագայում գտնվեց նաեւ Պաղեստինի ու Սիրիայի այլ վայրերում՝ Թել Ջուդեյդայից (Ամուքի հարթավայր) մինչեւ Պաղեստինի հարավում ընկած Լախիշ հնավայրը: Այդ խեցեղենը որոշ հնավայրերում կազմում էր խեցեղենի ընդհանուր քանակի շուրջ կեսը. օրինակ, Ամուքում՝ 52-55 տոկոս (Todd, 1973: 189): 1950-ական թվականների տվյալներով (Amiran, 1952: 94 map), հայտնի էին նորահայտ խեցեղեն պարունակող 12 հնավայրեր՝ Թել Բաբայիք, Հազոր, Թել Կունեիտիրա, Բեթ Յերահ, Մեգիդդո, Աֆֆուլեհ, Քայսուն, Բեթ-Շան, Ռաս էլ-Այն, Յերիխոն, Թել Հեսի: Ի սկզբանե օտարածին այս մշակույթի հայտնվելու պատճառ հայտարարվեց արտաքին աշխարհից ժողովուրդների տեղաշարժը: Սկզբնական շրջանում, արտաքին աշխարհում այս խեցեղենի զուգահեռների մասին տեղեկություն չունենալու պատճառով, հնագետները հակված էին ենթադրելու դրա փոքրասիական արմատները՝ արեւմտյան Փոքր Ասիայում գտնվող Սանգարիոս գետից (ժաման. Սակարյա) մինչեւ Արեւմտյան Հայաստանի Էրզրումի շրջանը (Amiran, 1952: 96ff.):

Հետագայում, Քիրբեթ-Կերակյան խեցեղենի համեմատությունը այլ տարածաշրջանների հետ, թույլ տվեց հնագետներին հանգել այն եզրակացության, որ դրա ստեղծողները եկել էին Արեւելյան Անատոլիայից (= Արեւմտյան Հայաստան - Ա.Հ.) եւ Անդրկովկասից (Amiran, 1952: 89ff.; 1965; 1968: 317f.; Braidwood and Braidwood, 1960: 358; Todd, 1973: 181ff.; Yakar, 1990: 99):

Մ. Գիմբուտասի կարծիքով (Gimbutas, 1970: 187), Քիրբեթ-Կերակյան մշակույթի ստեղծողները Հարավային Ռուսաստանից եկած «կուրգանային մշակույթի» կրողները չէին, այլ բուն անդրկովկասցիները, որոնք առաջինների ճնշման տակ ստիպված էին հեռանալ այլ վայրեր: Քիրբեթ-Կերակյան մշակույթի կրողների մուտքը Սիրիա եւ Պաղեստին հնագետները թվագրում են մ.թ.ա. III հազ. կեսերով (Kelly-Buccellati, 1979: 425): Առաջարկվել են ավելի որոշակի թվագրություններ: Այսպես, Վ. Օլբրայթը հակված էր Քիրբեթ-Կերակը տեղադրելու մ.թ.ա. 2550-2350թթ. միջեւ (Albright, 1965: 52ff.), իսկ Մ.վան Լունը՝ 2600-2400թթ. (ՉՈՎ խցվ, 1985: 52բս.): Ըստ Քոլավեյի (Callaway, 1978: 53), այն պետք է թվագրել մ.թ.ա. 2700-2550թթ.:

Չնայած որոշ հեղինակներ հակված էին կասկածելու խոշոր միգրացիայի մասին վարկածը, Պաղեստինում եւ Սիրիայում հայտնվող օտարածին մշակութային իրողությունները վերագրելով առեւտրական փոխհարաբերություններին կամ դրսից եկած փոքր քանակությամբ արհեստավորների առկայությանը (Todd, 1973: 187ff.), սակայն այնուամենայնիվ, պարզ էր, որ նոր խեցեղենը տեղականի բնականոն զարգացման արդյունք չէր կարող լինել: Անհրաժեշտ է նշել, որ քննարկվող ժամանակաշրջանում իրոք Առաջավոր Ասիայի հիմնական տարածքներն ընդգրկված էին միջտարածաշրջանային լայն առեւտրական փոխհարաբերությունների մեջ (այդ մասին տե՛ս, մասնավորապես, Klengel, 1984: 7ff.; Փիլիպոսյան, 2004: 331-332 եւ այլն): Ըստ Ա. Փիլիպոսյանի, Հայկական լեռնաշխարհի եւ սիրիա-պաղեստինյան աշխարհի միջեւ փոխհարաբերությունները մ.թ.ա. IV-I հազ. բավական ինտենսիվ էին: Դրանք ներառնում էին ինչպես կանոնավոր առեւտրական կապեր հումքի արտահանման (ոսկի, անագ, վանակատ), այնպես էլ պատրաստի արհեստագործական արտադրանքի (սպառազինություն, խեցեղեն եւ այլ իրեր) արտահանում: Սակայն այդ փոխհարաբերությունների խորությունը առաջին հերթին պայմանավորված էր Առաջավոր Ասիայի հասարակությունների պատմության ընթացքում ժամանակ առ ժամանակ տեղի ունեցող ճգնաժամային փուլերում վկայված էթնիկական տեղաշարժերով:

Մասնագետների մեջ որոշ տարաձայնություններ կան նրանց երթուղուն վերաբերող հարցում: Հաշվի առնելով Անդրկովկասից դեպի Արեւմտյան Հայաստան ընթացած տեղաշարժի փաստը, Վերին Եփրատի ավազանում (Ծոփք) հիմնավորվելը եւ հետագա սերտ կապերը Հյուսիսային Սիրիայի ու Հյուսիսային Միջագետքի հետ (տես վերը), կարելի է, թերեւս, ենթադրել, որ այս տեղաշարժը կարող էր ընթանալ Եփրատի հոսանքով դեպի հարավ, այնուհետեւ «բերրի կիսալուսնով»՝ Պաղեստին: Իհարկե, հնարավոր է մեկ այլ տարբերակ: Եթե այսպես կոչված «կապադովկիական» գունազարդ խեցեղենը (վաղ բրոնզեդարի վերջ - մ.թ.ա. III հազ. վերջին քառորդ) այս նույն ժամանակաշրջանում Ծոփքում ու Մալաթիայում հաստատված անդրկովկասցի եկվորների տեղաշարժի շարունակությունն է, ապա կարելի է ենթադրել հետեւյալ երթուղին: Նրանք կարող էին Մալաթիայից շարժվել արեւմուտք՝

Էլբիստանի հարթավայրով, այնուհետեւ Կիլիկյան Տավրոսի լեռնանցքով (Կիլիկյան դարպասներ) իջնել Դաշտային Կիլիկիա, որից հետո Ամուքի հարթավայր: Ի դեպ, Քիրբեթ-Կերակյան մշակույթի կրողների՝ Պաղեստին հասնելու համար առաջարկվել է անհամեմատ ավելի երկար երթուղի (Վրաստանից Սեւ ծովի արեւելյան, հարավային ծովափ, այնուհետեւ՝ կենտրոնական Փոքր Ասիայով Սիրիա եւ Պաղեստին) (Kelly-Buccellati, 1979: 426), որը դժվար է տեղավորվում առկա հնագիտական նյութերի հետ:

Մեր կարծիքով, թերեւս, հենց այս երթուղու անորոշության հետ կապված, մասնագետներից ոմանք առաջարկում են Քիրբեթ-կերակյան մշակույթը համարել խառնածին, այսինքն Քանաանում ուսումնասիրվող ժամանակահատվածում տեսնում են ոչ միայն անդրկովկասյան, այլեւ փոքրասիական արմատներ: Այսպես, Հ.Կապլանի կարծիքով (Kaplan, 1981: 18ff.), Պաղեստինում եւ Սիրիայի արեւմուտքում (մասնավորապես Արադում) վաղ բրոնզեդարի III փուլում, բուն Կիրբեթ-կերակյան խեցեղենի եւ այլ իրերի հետ միաժամանակ, հանդիպում են կենտրոնական Փոքր Ասիայի տարբեր հնավայրերի (օրինակ, Ալաջահյոյուք, Ալիշարհյոյուք եւ այլն) վաղ բրոնզեդարի II փուլին բնորոշ նյութեր՝ խեցեղեն, «վարպետի նշան», երկսենյականի բնակարան: Եթե ճիշտ է այս դիտարկումը, ապա կարելի է ենթադրել, որ՝ 1. անդրկովկասցիները Քանաան գալու ճանապարհին ինչ-որ ժամանակ ապրել են կենտրոնական Փոքր Ասիայում կամ 2. Քանաանում պետք է առկա լիներ նաեւ այլ վայրերից եկած բնակչություն:

Կուր-արաքսցիների մուտքը Սիրիա եւ Պաղեստին, անկասկած, պետք է հանգեցներ ժողովրդագրական լուրջ փոփոխությունների, որի համար կան բավարար քանակությամբ հնագիտական տվյալներ: Մի շարք հնավայրերում առկա են ավերածությունների հետքեր (Amiran, 1965: 318), որը չի հաստատում խաղաղ ներթափանցման մասին ենթադրությունը: Իսկ Մ. Քելլի-Բուչելատիի կարծիքով (Kelly-Buccellati, 1979: 426), Պաղեստինում եւ Սիրիայում բոլոր օտար երեւույթները ոչ թե Կուր-արաքսցիների գալստյան հետեւանք էին, այլ երկու տարածաշրջանների միջեւ սերտ առեւտրական փոխհարաբերությունների արդյունք: Կուր-արաքսցիների համար, որոնց մոտ գոյություն ունեին մետաղագործական վաղ ավանդույթներ եւ որոնց զբաղեցրած տարածքը հարուստ էր հումքի աղբյուրներով, Սիրիայի եւ Պաղեստինի նստակյաց բնակչությունը արհեստագործական արտադրանքի եւ հումքի արտահանման հարմար շուկա էր: Հեղինակի այս մոտեցումը, սակայն, պետք է համարել որոշակիորեն կողմնակալ: Ամենուրեք, որտեղ վկայված են Կուր-Արաքսցիների գալստյան հետքերը, այնտեղ ենթադրելի է նրանց ֆիզիկական ներկայությունը՝ հնագիտական նյութերի բնույթից ելնելով:

Քանաանում եւ Սիրիայում Կուր-արաքսցիների ներկայության իրեղեն ապացույցները շատ են եւ հավաստի: Դրանց շարքում առավել հատկանշական է խեցեղենը: Դա առանց բրուտի անիվի, ձեռքով պատրաստված թրծված խեցեղենն է, որը պատված էր սեւ կամ կարմիր գույնով: Այս գույները, ինչպես նկատվել է (Kelly-Buccellati, 1979: 415), այս կավանոթների մետաղյա նախատիպերի կրկնակումն է: Քիրբեթ-Կերակյան խեցեղենի մեծ քանակը թույլ է տալիս ենթադրելու, որ դրանք պատրաստվել են տեղում, այլ ոչ թե բերվել դրսից՝ առեւտրի միջոցով: Հատկանշական է, որ Սիրիայում եւ Պաղեստինում պատրաստված խեցեղենի ձեւերը եւ դեկորացիան գրեթե կրկնում են իրենց նախնական՝ անդրկովկասյան նախատիպերը: Դա կարող է վկայել ավանդույթների շարունակականության օգտին: Հաջորդ ապացույցը բնակավայրերի եւ տների հատակագծերն են: Մ.թ.ա. III հազ. կեսերից Սիրիայում (Թել Ջուդեյդա, Դահաբ, Համա) եւ Պաղեստինում (օրինակ, Բեթ Յերախ) տները հիմականում կլոր են, ավելի սակավ՝ ուղղանկյուն, այնպես ինչպես Անդրկովկասում (Kelly-Buccellati, 1979: 420):
Եվ, վերջապես, տների ներքին հարդարանքի մասին: Այս շրջանում Սիրիայում եւ Պաղեստինում հայտնվում են կլոր օջախը եւ պայտաձեւ շարժական օջախը, որոնք ավելի վաղ հայտնի էին Անդրկովկասում: Հատկանշական է նաեւ օջախի վրա դրվող մարդակերպ եռոտանին՝ նույնպես անդրկովկասյան վաղ զուգահեռներով (Braidwood and Braidwood, 1960: 346ff.; Hennessy, 1967: Pl.LXXI; Kelly-Buccellati, 1979: 420ff.; 2004: 67ff.):

Կուր-արաքսցիների՝ Քանաան գաղթելու եղանակի եւ այստեղ նրանց ներկայության բնույթի մասին բավական կարեւոր դիտարկումներ է կատարել Ջ. Քոլավեյը (Callaway, 1978: 53ff.): Հետազոտելով Քանաանի պեղված ամենահարավային հնավայր Ային, որը սահմանակից էր Եգիպտոսին, նա հանգում է հետեւյալ եզրակացության:

Վաղ բրոնզեդարի III փուլի վերջին շրջանում (մ.թ.ա. XXVIդ.) քաղաքի պարիսպներն ավերվել են, սակայն բուն քաղաքում ավերածություններ չկան: Սա կարող է նշանակել, որ քաղաքը, որ նախքան նվաճվելը գտնվում էր Եգիպտոսի տիրապետության ներքո, պետք է անցներ Քիրբեթ-կերակցիների ձեռքը: Գրավումից հետո քաղաքը կրկին ամրացվել է նոր պարիսպներով, լքվել է եգիպտական տիրապետության ժամանակ գործող տաճարը, եւ սրբավայրը կառուցվել է նոր վայրում: Փոխվել է պաշտամունքի բնույթը. նոր տաճարի տեսանելի վայրերում դրված են տարբեր իրեր՝ կավանոթներ, դրանց պատվանդաններ, պատկերազարդ քարեր՝ դասավորված զոհասեղանի շուրջը: Այսպիսի սրբավայրեր հանդիպում են Բեթ-Շանում, Բեթ-Յերախում, ինչպեսեւ Թաինաթում (Հյուսիսային Սիրիա) եւ Անատոլիայում (Հայկական լեռնաշխարհ-Հ.Ա.): Հեղինակը համարում է, որ Այիի պարագայում կարելի է վստահորեն եզրակացնել այստեղ Եգիպտոսի տիրապետության անկման եւ Քիրբեթ-Կերակի կրողների առաջխաղացման մասին:

Վերոհիշյալ դիտարկումները չափազանց կարեւոր են այն առումով, որ լուրջ հիմք են տալիս արժեքավորելու Կուր-Արաքսյան մշակույթի բնակչության կենսագործունեության մակարդակը: Փաստորեն, հայտնվելով Քանաանում մ.թ.ա. 2700թ. մոտերքում, նրանք ավելի քան մեկ դար պահպանել էին իրենց էթնոմշակութային նկարագիրը եւ այստեղ ստեղծած քաղաքական կառույցը: Ավելին, նրանք նույնիսկ ի վիճակի էին առաջխաղացում կազմակերպելու Եգիպտոսի Հին թագավորության ասիական տիրույթների վրա եւ եգիպտացիներին վտարել այստեղից՝ դրանք պահելով իրենց ձեռքը եւս մոտ երկու դար՝ մինչեւ մ.թ.ա. XXIVդ. կեսերը:

Քիրբեթ-կերակյան մշակույթի, Քանաանում Կուր-Արաքսյան բնակչության ստեղծած վաղ պետական կազմավորման ավարտը թվագրվում է մ.թ.ա. XXIVդ. կեսերով: Առայժմ դրա պատճառը պարզ չէ: Առաջարկվել է որպես այդպիսին դիտել Եգիպտոսի բռնազավթումը (Callaway, 1978: 55), կամ Հորդանան գետից արեւելք ընկած շրջաններից քոչվոր ամորեական ցեղերի հարձակումները (Kenyon, 1960: 135ff.):

Անդրկովկասից դեպի Սիրիա եւ Քանաան էթնիկական տեղաշարժ(եր)ը քննարկելիս անհրաժեշտ է նշել ամերիկյան հայտնի հնագետ Մ. Գիմբուտասի առաջարկած տեղաշարժային մոդելը, որը ձեւակերպված է նրա մի շարք ուսումնասիրություններում (Gimbutas, 1970; 1974):

Մ. Գիմբուտասը ենթադրում էր ոչ թե մեկ, այլ երկու տարբեր տեղաշարժեր, ինչպես նաեւ դրանց մասնակիցների ելակետի ու էթնիկական պատկանելության այլ մեկնաբանություն:

Ըստ նրա (Gimbutas, 1974: 131ff.), առաջին միգրացիան դեպի Պաղեստին տեղի է ունեցել մ.թ.ա. IV հազ. վերջերին՝ Սեւ ծովի հյուսիս-արեւմտյան ու արեւմտյան մերձափնյա գոտուց (ժաման. Ռումինիա, Մոլդավիա, Բուլղարիա): Դրանք հնդեվրոպացիներ էին, որոնք հասել են Լեւանտ ծովով ու կործանել են Գասուլ-Բեերշեվայի մշակույթը: Չնայած նրանց գործունեությունը այստեղ կարճատեւ էր, սակայն արդյունքում արմատապես փոխվեց բնակչության էթնիկական-մարդաբանական կազմը: Եթե Գասուլ-Բեերշեւայի բնակիչները ներկայացնում էին կլորագլուխ տիպը, եկվորները բարձրահասակ ու երկարագլուխ էին:

Հնդեվրոպացիների հաջորդ էքսպանսիան տեղի ունեցավ մ.թ.ա. III հազ. կեսերին (Gimbutas, 1970: 187ff.): Կուրգաններ հիշեցնող դամբարանները (Kenyon, 1960: 52f.,182ff.), թաղման եղանակը, պղնձե դաշույնները, քարե կացինները որեւէ կերպ չեն կարող առնչվել սեմական ամորեական ցեղերի հետ, այլ զուգահեռներ ունեն Հյուսիսային Կովկասում, Կուբանում, Մայկոպում, Ղրիմում: Այս եկվորների հետքերը առկա են Կարքեմիշում, Թիլ-Բարսիպում, Համայում (Սիրիա) ու ողջ Պաղեստինում (հարավում ընդհուպ մինչեւ Նեգեվի անապատ): Սրանցից բացի, նա համարում է, որ եղել է եկվորների եւս մեկ խումբ, որոնք բնակություն են հաստատել Յերիխոնում, Թել Աջջուլում, Դուվեյրում, Մեգիդդոյում: Սրանք անասնապահներ էին, որոնք չնայած ապրում էին գոյություն ունեցող քաղաքներում, սակայն չէին զբաղվում երկրագործությամբ: Այս եկվորները նույնպես ծագում էին Սեւ ծովից հյուսիս ընկած շրջաններից: Վերջիններս նույնպես երկարագլուխ էին, միջին հասակը՝ 170սմ: Մ. Գիմբուտասը ենթադրում էր, որ սրանք հենց այն ասիացիներն էին, որոնց արշավանքը Եգիպտոսի Հին թագավորության անկման հիմնական պատճառն էր: Մ. Գիմբուտասի սխեմայում, բացի վերոհիշյալ

երկու խմբերից, ներկա էին նաեւ անդրկովկասցիները, որոնք հիմնեցին Քիրբեթ-Կերակյան մշակույթը: Առաջինների խուրրիական ծագման մասին վարկածի հետեւորդները Քիրբեթ-Կերակյան մշակույթի ստեղծողներ են համարում խուրրիներին (օրինակ, Burney, 1980: 51): Ինչպիսին էլ որ լինեին Քիրբեթ-Կերակյան մշակույթի անկման պատճառները, դրանց հետեւանքները այս տարածաշրջանի համար աղետալի էին: Սիրիայում ու Պաղեստինում վաղ բրոնզեդարի վերջին՝ IV փուլից դեպի «միջին բրոնզեդարի I փուլ» անցումը, համաձայն վերջին տարիների ուսումնասիրությունների (Broshi and Gophna, 1986: 73ff.; Dever, 1997: 287), բնորոշվում է բնակչության կենցաղավարման եղանակում տեղ գտած արմատական փոփոխություններով: Այդ փոփոխությունները կարելի է ներկայացնել հետեւյալ ձեւով:

Մ.թ.ա. 2300-2000թթ. Պաղեստինում, ըստ էության, քաղաքային մշակույթի լիակատար անկման փուլ էր: Քաղաքային կյանքը վերացել էր, խոշոր բնակավայրերը՝ լքվել, իսկ դրանց բնակչությունը հեռացել էր հեռավոր գյուղական վայրեր ու տափաստաններ: Ընդ որում, կարեւոր է արձանագրել, որ վաղ բրոնզեդարի վերջերին գոյություն ունեցած շուրջ 260 բնակավայրերից միջին բրոնզեդարում շարունակել են գոյատեւել ընդամենը 79-ը: Միջին բրոնզեդարյան բնակավայրերի մոտավորապես 80 տոկոսը ստեղծվել են հենց այդ նույն փուլում: Հնագիտական ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված շուրջ 1000 բնակավայրերը փոքր, չամրացված ժամանակավոր գյուղակներ էին, որոնց բնակչության կենցաղում գերիշխում էր ապակենտրոնացված քոչվոր անասնապահությունը: Պեղված բնակավայրերը գերազանցապես զբաղեցնում էին մոտ կես հեկտար տարածք: Վկայված են ընդամենը մի քանի խոշոր բնակավայր, որոնցից ամենամեծը Հազորն էր՝ շուրջ 80 հեկտար մակերեսով: Դրանցում ապրում էր, մեկ հա մոտավորապես 250 մարդու հաշվարկով, շուրջ 140,000 մարդ: Գրեթե վերացել էր նախկինում գոյություն ունեցող առեւտուրն ու տնտեսական ինտեգրացիան: Ընդհանուր առմամբ, այս փուլը կարելի է անվանել «խավար դարաշրջան»:

Չի կարելի չնկատել, որ վերոհիշյալ իրավիճակը անպայման պետք է կապված լիներ միգրացիայի հետ՝ չբացառելով, իհարկե, այլ գործոնների ազդեցության հնարավորությունը: (օրինակ, կլիմայական փոփոխություններ):

Այսպիսով, սույն բաժնում ներկայացված նյութերը, եթե նույնիսկ որոշակի ձեռնպահությամբ մոտենանք որոշ մասնագետների վերականգնումներին (մասնավորապես Մ. Գիմբուտասի), այնուամենայնիվ պետք է եզրակացնել, որ մոտավորապես մ.թ.ա. III հազ. Քանաանը եղել է մի վայր, դեպի ուր ընթացել են հզոր էթնիկական տեղաշարժեր, որոնք ի վիճակի էին զգալիորեն փոփոխել այստեղ առկա ժողովրդագրական եւ մշակութային իրավիճակը: Հատկապես կարեւոր են Մ. Գիմբուտասի դիտարկումները նախքան այդ տեղաշարժերը Քանաանում կլորագլուխ մարդաբանական տիպի ներկայության մասին: Դժվար չէ ենթադրել, թե ինչպիսի հետեւանքների կարող էր հասցնել հնդեվրոպացիների երկու (հնարավոր է, ավելի) ալիքների մուտքը եւ հաստատումը Քանաանում: Ըստ էության, արդեն միջին բրոնզեդարում՝ խուրրիների եւ արիացիների տեղաշարժերի պահին (տես Գլուխ 2) Քանաանի բնակչության մի զգալի մասը կարող էր լինել հնդեվրոպալեզու կամ առնվազն սեմականացած հնդեվրոպացիներ, որոնք հաստատապես պետք է պահպանեին իրենց մշակութային բնութագիրը:

Արմենոիդ մարդաբանական տիպը Քանաանում

Իսրայելի տարածքում կատարված հնագիտական ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված մարդաբանական նյութերը, նաեւ աշխարհագրական, բնակլիմայական ու էթնոմշակութային բնույթի նկատառումները թույլ են տալիս ստեղծելու ամուր հիմք հրեաների եւ հայ ժողովրդի էթնոմշակութային ու մարդաբանական նախնիների միջեւ հնագույն ժամանակներում տեղի ունեցած շփումների եւ մասնակի ծագումնաբանական ընդհանրությունների առկայության մասին ենթադրության օգտին: Այն հնարավոր է ամրապնդել այլ բնույթի փաստերով, ասենք հնագիտական: Ինչպես ստորեւ ցույց կտրվի, Իսրայելի վաղ հնագիտական մշակույթների (մասնավորապես, «Գասուլ-Բեերշեվա») հետազոտությունը վեր է հանում համոզիչ նյութեր, որոնք թույլ են տալիս հստակ զուգահեռներ տեսնել ի դեմս Հայկական լեռնաշխարհի համաժամանակյա մշակութային համալիրների:

«Հրեական հանրագիտարանում» զետեղված հոդվածներում Ջ. Ջեյքոբսը (Jew.Enc. X, 1905: 6,283), անդրադառնալով հրեաների ու հայերի միջեւ առկա ընդհանրությունների խնդրին, կատարել է կարեւոր հետեւություններ: Ըստ նրա, հրեաների «գանգերը գերազանցապես կլորագլուխ են, այն դեպքում, երբ արաբական ծագման սեմիտները բացարձակապես երկարագլուխ են»: Այնուհետեւ, «Որոշ մարդաբաններ հակված են հրեաների ռասայական ծագումը կապելու ոչ թե սեմիտների, որոնց լեզուն նրանք վերցրել են, այլ հայերի ու խեթերի հետ, ում լայն գանգերը եւ կեռ քթերը նրանք վերցրել են»: Նա նշում էր, որ մինչեւ այսօր էլ հրեաների միայն 58 տոկոսն է երկարագլուխ:

Մեկ այլ մարդաբան՝ Ֆիշբերգը գրում էր. «Հրեական քիթը չունի արաբական քթի բնութագրիչները, որը կարճ է, ուղիղ եւ հաճախ կեռ: Հրեական քիթը պետք է կապել հայկական եւ խեթական կեռ քթին (Jew.Enc. IX, 1905: 619): Նրա կարծիքին համամիտ էր ամերիկյան հայ մարդաբան Մ. Մինասյանը (Մինասյան, 1922), որը կատարել էր խեթական բարձրաքանդակների վրա պատկերված գլուխների, ժամանակակից հայերի եւ հրեաների գանգերի համեմատական հետազոտություն:

Իսրայելցի մարդաբան Հ. Նաթանը, ուսումնասիրելով հռոմեական տիրապետության ժամանակաշրջանի Իսրայելի հնավայրերից մեկի ոսկրային նյութերը («Սարսափի քարանձավը»), եկավ այն եզրակացության, որ հայտնաբերված կմախքների մեջ զգալի թիվ են կազմում արմենոիդները (Nathan, 1961: 65f.):

Մեկ այլ մարդաբանի՝ Բ. Արենսբուրգի կարծիքով (Arensburg, 1973: 80ff.), հռոմեական եւ բյուզանդական տիրապետության շրջանում հրեաների գանգերի չափագրումները տարբերվում էին հռոմեացիների եւ բյուզանդացիների գանգերից:

Հրեաների ու հայերի միջեւ նմանությունները ներառում են նաեւ հետեւյալ առանձնահատկությունները՝ մուգ մաշկ, սեւ աչքեր, մազոտ ու ուժեղ մարմին:
Մինչեւ XIX դարի վերջերը Առաջավոր Ասիայի մի որոշակի մարդաբանական տիպի համար կիրառվող «ասսիրոիդ» տերմինը փոխարինվեց «արմենոիդ» տերմինով: Սակայն հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ «արմենոիդը» ավելի լավ է արտացոլում առաջավորասիական տարածաշրջանի մարդաբանական իրավիճակը, որի լավագույն վկայությունները կարելի էր գտնել հենց Հայկական լեռնաշխարհում:

Առաջիններից մեկը գերմանացի հնագետ Ֆ. ֆոն Լուշանն էր, որը որպես «արմենոիդ» որակեց Հյուսիսային Սիրիայի խոշոր մշակութային համալիր Զինջիրլիից հայտնաբերված բարձրաքանդակներում պատկերված անձանց (von Luschan, 1911; 1943): Իր ավելի վաղ շրջանի ուսումնասիրություններից մեկում նա գրում էր. «Ժամանակակից հրեաները ներկայացնում են երեք տարբեր ռասաներ՝ արիական-ամորեական, իսկական սեմական եւ հին խեթերի հետնորդներին. վերջինները ամենամեծ ազդեցությունն ունեն» (von Luschan, 1892):

Ֆ. ֆոն Լուշանի ազդեցությամբ մյուս հնագետներն ու մարդաբանները նման եզրակացության հանգեցին այլ հնավայրերի գտածոների հիման վրա: Ս. Ֆայեստի կարծիքով (Feiest, 1925: 179ff.), հրեաների մի մասը սեմիտներ են, իսկ մյուս մասը խեթական տիպն է ներկայացնում: Մ. ֆոն Օպպենհայմը է՛լ ավելի տպավորիչ «արմենոիդներ» հայտնաբերեց հայտնի Թել Խալաֆ հնավայրում: Նա եզրակացրեց, որ «այսպես կոչված խեթական, ավելի ճշգրիտ՝ սուբարյան քաղաքակրթության կրողները ունեն արմենոիդ դաջվածք» (von Oppenheim, 1933):

Հարկ է նշել, որ առ այսօր քիչ են համապատասխան մարդաբանական հետազոտությունները Առաջավոր Ասիայի այն տարածաշրջաններում, որտեղ հնագույն ժամանակներից վկայված է արմենոիդ տիպը: Այս բացթողման հիմնական պատճառը սկզբնաղբյուրների խիստ սակավությունն է, պեղված դամբարաններում եւ այլ տիպի թաղումներում գանգերի համապատասխան առկայությունը, ինչպեսեւ սույն պեղավայրերի ոչ համատարած տեղաբաշխումը: Շատ դեպքերում մասնագետները ստիպված են հենվելու մ.թ.ա. III-I հազ. թվագրվող բարձրաքանդակների, արձանների ու արձանիկների, խեցեղենի վրա առկա պատկերների վրա: Վերջիններս, հարկ է նշել, ի վիճակի չեն լիարժեք ներկայացնելու տվյալ տարածաշրջանի մարդաբանական կազմի իրական պատկերը, քանի որ դրանք, սովորաբար, աստվածների, արքաների եւ այլ բարձրաստիճան անձանց պատկերներ են,

այսինքն, պետք է ներկայացնեին բնակչության բացարձակ փոքրամասնությունը: Շատ ավելի արժանահավատ տեղեկատվություն կարող են պարունակել թաղումները, որոնք, ինչպես նշվեց վերը, այնքան էլ մեծաքանակ չեն: Այնուամենայնիվ, նույնիսկ այս փոքրածավալ տվյալները հնարավորություն են ընձեռում հանգելու համապատասխան եզրակացությունների, վերականգնելու քննարկվող մեծ ժամանակահատվածի տարբեր փուլերում տիրող մարդաբանական իրավիճակը: Առաջավոր Ասիայում արմենոիդ մարդաբանական տիպի ներկայության եւ տարածվածության խնդիրը քննարկվել է անցյալի եւ ներկայի մի շարք մասնագետների կողմից (Coon, 1939; Herrlich, 1937; Angel, 1953; Field, 1961; Phillips, 1965; Ferembach, 1966; Mellaart, 1966; 1975; Arensburg, 1973; Childe, 1973; եւ այլն): Ուսումնասիրություններն ընդգրկում են շատ լայն աշխարհագրական արեալ՝ արեւմտյան Եվրոպայից մինչեւ Հնդկաստան եւ Կենտրոնական Ասիա, հարավային Ռուսաստանից՝ Եգիպտոս եւ Պարսից ծոց: Առայժմ վերոհիշյալ տարածքում արմենոիդ մարդաբանական տիպի տեղայնացման եւ տեղաշարժերի խնդիրները ինչպես հարկն է չեն ամփոփվել: Այս ուղղությամբ կարեւոր ներդրում ունի Բ. Մոյշեսոնը, որի աշխատությունը առաջին փորձն է խնդրի հետազոտության հիմնասյուները նախանշելու ուղղությամբ (Moisheson, 2001):

Արմենոիդ տիպը ներկայացնող վաղագույն վկայությունները հայտնաբերվել են հարավային եւ կենտրոնական Միջագետքում: Արդեն մոտավորապես մ.թ.ա. 6000թ, սահմաններում արմենոիդները առկա են կենտրոնական Միջագետքի Սամարրա հնավայրում: Ավելի ուշ, մ.թ.ա. IV հազ. վերջերին - III հազ. սկզբներին հայտնվում են շումերական բարձրաքանդակները եւ արձանիկները, որոնք, որպես կանոն, պատկերում են արմենոիդների: Կարեւոր է նշել, որ այս տիպը Շումերի շատ քաղաքներում, մասնավորապես, Ուրուկում, միակն է՝ նախքան Աքքադի պետության կազմավորումը (մ.թ.ա. 2350 թ.): Իսկ շումերական Քիշ քաղաքի դամբարաններում արմենոիդները կազմում են գանգերի ընդհանուր քանակի 10-20 տոկոսը (Ferembach, 1966: 160ff.). նյութերի անբավարար պահպանվածության պատճառով շատ դեպքերում դրանք դժվար են վերականգնվում: Հարեւան Էլամում արմենոիդների հետքերը շարունակվեցին բավական երկար:

Արմենոիդները լավ վկայված են Փոքր Ասիայում եւ Հյուսիսային Սիրիայում: Հարավ-արեւմտյան Փոքր Ասիայի Հաջիլար կոչվող մշակույթին պատկանող նյութերում՝ մ.թ.ա. 6000թ. սահմաններում: Անգլիացի հայտնի հնագետ Ջ. Մելլաարտը նշում է, որ այստեղից հայտնաբերված դեմքերը բնորոշվում են խոշոր, տպավորիչ քթով եւ ունքերով (Mellaart, 1975: 118f.,149ff.): Կենտրոնական Փոքր Ասիայի՝ մ.թ.ա. III հազ. վերջերով - II հազ. սկզբներով թվագրվող Ալաջահյոյուք խոշոր հնավայրի նյութերը նույնպես պարունակում են բացառապես արմենոիդներ (Mellaart, 1966):

Հյուսիսային Սիրիայի առնվազն երկու խոշոր հնավայրերը նույնպես արձանագրել են արմենոիդների լուրջ ներկայություն՝ Ամուքը եւ Թել Բրաքը (Moisheson, 2001: 9):

Քանաանում արմենոիդները շատ լավ վկայված են Գասուլ-Բեերշեվայի մշակույթին պատկանող հուշարձաններում՝ մ.թ.ա. 5000-4000թթ. (տես վերը):

Առաջավոր Ասիայից դուրս արմենոիդների աշխարհագրական ընդգրկումը չափազանց լայն է: Մ.թ.ա. III հազ. կեսերին Իսպանիայում, Ֆրանսիայում, Հյուսիսային Իտալիայում, Գերմանիայում եւ Անգլիայում հայտնված այսպես կոչված “Beakers” մշակույթի կրողները նույնպես արմենոիդ էին (Coon, 1939; Childe, 1973): Սրանց հետ ուղղակիորեն կապված է, այսպես կոչված, «կատակոմբային մշակույթը», որը տարածվում էր Սեւ ծովից եւ Կովկասյան լեռներից հյուսիս (Moisheson, 2001: 11): «Կատակոմբային» մշակույթի կրողների գլխավոր առանձնահատկություններից մեկը գանգի արհեստական ձեւափոխման պրակտիկան էր, որի մասին առաջին անգամ հիշատակել է մ.թ.ա. Vդ. հույն բժիշկ Հիպոկրատը (Hippocrates, 1939): Նրա կարծիքով, դա արվում էր, որպեսզի գլխին ազնվական ձեւ տրվի: Բ. Մոյշեսոնի ենթադրությամբ (Moisheson, 2001: 12), գանգը ձեւափոխվում էր էլ ավելի ընդգծելու համար դրա արմենոիդ տիպը, այսինքն՝ խիստ թեք ճակատ եւ ուղղահայաց ծոծրակ: Գանգի ձեւափոխման պրակտիկան արձանագրված է նույնիսկ Կենտրոնական Ասիայում՝ հնդեվրոպական ծագում ունեցող սարմատների, թոխարների, սկյութների եւ քուշանների եւ հոների մոտ (Phillips, 1965: 126):

Անհրաժեշտ է նշել, որ գանգի ձեւափոխման ամենավաղ պրրակտիկան վկայված է Քանաանում

(Յերիխոն - մոտ. մ. թ. ա. 9000թ.) եւ Կիպրոսում (Կիրոկիտիա - մոտ. մ.թ.ա. 7000թ. - պեղումների նյութերը տես Dikaios, 1953) (Angel, 1953): Եվ որ ամենակարեւորն է, Պաղեստինի վաղ նատուֆյան մշակույթից հայտնի թաղումներում պարունակվող գանգերի շուրջ 16 տոկոսը արմենոիդ-կլորագլուխ է: Այս շրջանից ավելի հյուսիս եւ հարավ գրեթե համատարած ոչ արմենոիդներ-երկարագլուխներ են (Arensburg, 1973; Arensburg, Hershkowitz, 1988 [հղվում է ըստ Moisheson, 2001: 13f.]):, իսկ Հյուսիսային Աֆրիկայում՝ միայն երկարագլուխներ (Ferembach, 1978: 26):

Հայաստանի Հանրապետությունում կատարված մարդաբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բրոնզեդարում այս տարածքը մարդաբանական առումով իրենից ներկայացնում էր առնվազն երկու տիպերի հանդիպավայր: Այստեղ ներկայացված էին ինչպես կլորագլուխ (արմենոիդ), այնպես էլ երկարագլուխ տիպերը (այդ ուսումնասիրությունների հանրագումարը տես Мкртчян, 2001: 22рсս.): Այսպես, Շենգավիթում, Ցամաքաբերդում, Լճաշենում, Վերին եւ Ներքին Գետաշեններում, Արթիկում եւ այլուր ներկայացված է արմենոիդ տիպը: Իսկ Հոռոմում, նաեւ՝ Վրաստանի մի շարք հնավայրերում (Սամտավրո, Մցխեթի եւ այլն) գերիշխում է երկարագլուխ տիպը:

Վերը հղված ուսումնասիրությունների հիման վրա կարելի է կատարել հետեւյալ եզրակացությունները: Արդեն սկսած մոտավորապես մ.թ.ա. VII հազ., Առաջավոր Ասիայի տարբեր շրջաններում սկսում են տարածվել արմենոիդ մարդաբանական տիպը ներկայացնող ցեղեր: Իսկ մ.թ.ա.III հազ. ընթացքում նրանք ծավալվում են դեպի Հարավային Ռուսաստան, Կենտրոնական եւ Արեւմտյան Եվրոպա ու Կենտրոնական Ասիա: Այն կարծիքը, թե արմենոիդների տարածման ելակետը Պաղեստինն էր (Moisheson, 2001: 8ff.), կարծում ենք, բավարար հիմնավորում չունի, քանի որ դրանում ընդգրկված չեն Հայկական լեռնաշխարհի մեծագույն մասի համապատասխան նյութերը: Այնուամենայնիվ, արմենոիդների տարածման մեծ արեալը ինքնին արդեն կարեւոր ներդրում է սույն խնդրի ուսումնասիրության ասպարեզում:

Գլուխ Երկրորդ
Մ. Թ. Ա. Ii Հազարամյակի Էթնիկական Տեղաշարժերը Դեպի Սիրիա Եվ Քանաան

Քաղաքական իրավիճակը Հյուսիսային Միջագետքում, Սիրիայում եւ Քանաանում
Մ.թ.ա. III հազ. վերջին քառորդում Միջագետքում կազմավորված Աքքադի թագավորությունը ավելի քան մեկ դար «համաշխարհային պետություն» էր, որը տարածվում էր Զագրոսի լեռներից մինչեւ Միջերկրական ծովափ, Հայկական Տավրոսից մինչեւ Պարսից ծոց: Սակայն մ. թ. ա. XXIդ. այս լայնածավալ տերությունը ընկավ հյուսիսից արշավող լեռնաբնակ կուտիական ցեղերի հարվածների տակ: Վերջիններս նվաճեցին Միջագետքն ու տիրեցին այն մոտավորապես մեկ դար: Աքքադի անկումը Առաջավոր Ասիայում սկսված համատարած ճգնաժամի դրսեւորումներից մեկն էր: Այս նույն շրջանում տրոհվեց Եգիպտոսի Հին թագավորությունը: Ամենուրեք Առաջավոր Ասիայում նկատվում էին վայրընթաց զարգացման միտումներ, որոնց հիմնական առանձնահատկություններից մեկը ժողովուրդների շարժունակության աճն էր: Աղբյուրները վկայում են ժողովուրդների խոշոր եւ մանր տեղաշարժերի օգտին:

Կուտիները ի վիճակի չեղան ստեղծելու հզոր կենտրոնացված պետականություն: Միջագետքի տարբեր շրջաններում շարունակում էին գոյատեւել մի շարք տեղական իշխանություններ, որոնք ինքնուրույն էին իրենց ներքին գործերում ու սահմանափակվում էին կուտիներին հարկ առաքելով: Դրանց շարքում առանձնանում էր Հարավային Միջագետքի Ուրը, որտեղ մ.թ.ա. XXIդ. վերջերին ձեւավորված III դինաստիայի պետությունը շուտով կարողացավ վտարել կուտիներին եւ միավորել Միջագետքը: Միջագետքի հյուսիսում գտնվող խուրրիական իշխանությունները միայն մասամբ ընկան Ուրի տիրապետության տակ՝ Կարախարը, Սիմուրրումը եւ Ուրբիլումը (ժաման. Ըրբիլ՝ Քրդստանում): Միայն Ուրկեշը դուրս մնաց Ուրի ազդեցության ոլորտից (Wilhelm, 1989: 10):

Մ.թ.ա. XXդ. կեսերին Ուրի պետությունը անկում ապրեց՝ գլխավորապես Սիրիայի տափաստաններից դեպի Միջագետք տեղաշարժվող սեմական ծագման ամորեական ցեղերի հարվածների հետեւանքով: Ամորեացիները հաստատվեցին Միջագետքում՝ այստեղ ստեղծելով մեծաքանակ մանր իշխանություններ՝ Աշշուրը, Առապխան, Մարին, Կարանան, Նինվեն, Արբաիլուն (= Ուրբիլում) եւ այլն: Մ.թ.ա. XIXդ. երկրորդ կեսին սկսվեց Աշշուրի, միաժամանակ նաեւ՝ Մարիի ռազմաքաղաքական

վերելքը:

Աշշուրի արքա Շամշիադադ I-ին հաջողվեց նվաճել Հյուսիսային Միջագետքը եւ ստեղծել խոշոր պետություն, որը տարածվում էր Եփրատից մինչեւ Զագրոսի լեռները (Wilhelm, 1989: 14f.): Սակայն նրա որդի Իշմեդագանի օրոք տերությունը փլուզվեց եւ կախման մեջ ընկավ հարավային հարեւան Բաբելոնից: Աշշուրի տարածքը տրոհվեց մեծ քանակությամբ մանր իշխանությունների, որոնք գերազանցապես խուրրիական էին՝ Բուրունդումը, Խաբուրատումը, Ազուխինումը, Մարդամանը եւ այլն:

Մոտավորապես նույնն էր իրավիճակը Հյուսիսային Սիրիայում: Այստեղ առավել հզորը Յամխադի թագավորությունն էր (= Հալեպ), որը կարողացավ ետ մղել Շամշիադադ I-ի փորձերը նվաճելու այն եւ պահպանեց իր տարածքը: Յամխադից բացի, այստեղ կարեւոր դեր ունեին Կարքեմիշը, Ուրշումը, ասսումը եւ Ալալախը (Wilhelm, 1989: 15): Դատելով այս եւ քիչ ավելի ուշ շրջանի աղբյուրներից (տես հաջորդ բաժինը)՝ Հյուսիսային Սիրիայի իշխանությունները համեմատաբար փոքր էին, սակայն միաժամանակ ինքնուրույն, որի պատճառը պետք է տեսնել առաջին հերթին հզոր հարեւանների բացակայության մեջ: Բնակչությունը այստեղ հիմնականում ամորեական էր, սակայն խուրրիների տեսակարար կշիռը բարձր էր, որոնք, որպես կանոն, կազմում էին իշխող վերնախավը: Այստեղ միասնական պետականության ձեւավորման գործընթացը զգալիորեն խթանվեց մ.թ.ա.XVIդ. կեսերին, կապված Փոքր Ասիայում ստեղծված խեթական թագավորության արքաներ Խաթթուսիլի I-ի եւ Մուրսիլի I-ի հաջորդական հարձակումների հետ (Otten, 1958; Imparati - Saporetti, 1965; Kempinski and Košak, 1982): Այս շրջանում էլ աստիճանաբար հայտնվեց խուրրիական Միտաննի հզոր պետությունը (ԸՉպՅՌրÿվ, 1984: 34բսս.; Wilhelm, 1989: 22ff.; KՖhne, 1999):

Քաղաքական իրավիճակը Քանաանում մ.թ.ա. III հազ. վերջերին - II հազ. սկզբներին բնորոշվում էր նախորդ փուլում սկսված տեւական «խավար դարաշրջանի» ավարտով: Նկատվում էր վերադարձ դեպի քաղաքային կյանք, աճեց քաղաքների թիվը, որոնց մի մասը բավական խոշոր էր: Հնագիտական տվյալները թույլ են տալիս բացահայտելու շուրջ 130 խոշոր բնակավայրեր, որտեղ ապրում էր առնվազն 106,000 մարդ (մեկ հա-ում՝ 250 մարդու հաշվարկով) (Dever, 1997: 287): Այս տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ Քանաանում, ինչպեսեւ Սիրիայում, բուռն ծաղկում էր քաղաք-պետությունների ցանցը: Նշված ժամանակաշրջանի քաղաքական միավորների անվանումները չեն պահպանվել գրավոր աղբյուրներում, սակայն ընդհանուր պատկերը ինքնին պարզ է հնագիտական նյութերի ուսումնասիրության լույսի ներքո:

Քանաանի քաղաքական եւ տնտեսական վերելքը զգալիորեն կարելի է պայմանավորել Եգիպտոսի Միջին քագավորության հետ ունեցած աշխույժ տնտեսական հարաբերություններով: Ամփոփելով քննարկվող տարածաշրջանի քաղաքական իրավիճակը եւ զարգացումները՝ անհրաժեշտ է արձանագրել հետեւյալը:

Միջին բրոնզեդարում (XVIII-XVIIդդ.) Հյուսիսային Միջագետքում, Սիրիայում եւ Քանաանում գրավոր աղբյուրներն ու հնագիտական նյութերը թույլ են տալիս բացահայտելու լուրջ քաղաքական տեղաշարժեր, որոնց հիմքում առաջին հերթին ընկած էին այստեղ համեմատաբար նոր հայտնված էթնիկական խմբերի շարժումները: Վերջիններիս աշխարհագրական ընդգրկման ծավալներն այսօր դժվար են բացահայտվում (բացառությամբ Բաբելոնում հաստատված կասսիտական ցեղերի), սակայն նույնիսկ աղբյուրների սակավությունը չի կարող ստվերել այս տեղաշարժերի քաղաքական հետեւանքների եւ հոգեւոր-մշակութային ազդեցության գնահատման հնարավորությունները: Այս երեւույթը, անհրաժեշտ է նշել, հատկանշական էր նաեւ այլ տարածաշրջաններին: Ընդհանրապես միջին բրոնզեդարը ինչպես Հայկական Տավրոսից հարավ, այնպես էլ հյուսիս ու Արեւելյան Միջերկրականում բնորոշվում էր բնակչության շարժունակությամբ եւ քաղաքական անկայունությամբ: Այս ժամանակաշրջանի պետությունները հիմնականում տարածքով փոքր էին եւ նրանց կազմավորման ու անկման գործընթացը կարճատեւ էր:

Խուրրիները Միջագետքում, Սիրիայում եւ հարակից շրջաններում մ.թ.ա. III հազ. վերջերին - II հազ. Սկզբներին

Խուրրիները պատկանում էին հին Առաջավոր Ասիայի այն ժողովուրդների թվին, որոնք կարեւորագույն դեր խաղացին այս տարածաշրջանի քաղաքական, տնտեսական եւ մշակութային կյանքում: Խուրրիների առանձնահատկությունը առաջին հերթին պայմանավորված էր նաեւ այն հանգամանքով, որ նրանք, բացի իրենց նախնական բնակության վայրից (այդ մասին տես ստորեւ), մ. թ.ա. III-II հազ. լայնորեն տարածված էին Առաջավոր Ասիայի տարբեր շրջաններում՝ Սիրիայում, Պաղեստինում, Փոքր Ասիայում: Խուրրիները սերտ շփումների մեջ էին նշված երկրների ժողովուրդների հետ եւ յուրատեսակ կապող օղակ էին տարբեր քաղաքակրթությունների միջեւ: Խուրրիական էթնոսի առաջին հետազոտողներից մեկը՝ Հ. Վինկլերը համարում էր, որ սրանք նույնն են, ինչ Աստվածաշնչում հիշատակվող hor կոչվող ժողովուրդը, եգիպտական աղբյուրների H3-rw-ը եւ հնդիրանական arya-ն (այսինքն արիացիները) (Winckler, 1907 apud O'Callaghan, 1948: 38): Հետագայում պարզվեց, որ խուրրիները հնդեվրոպական ժողովուրդ չէին (Speiser, 1941; Laroche, 1980; Wilhelm, 1989), այսինքն արիացիների հետ ազգակցական կապը հիմնազուրկ էր:

Միջագետքում եւ Սիրիայի հյուսիսում խուրրիների հայտնվելու ճշգրիտ ժամանակը առայժմ հնարավոր չէ որոշել: Հնագույն ժամանակներում, սովորաբար, որեւէ էթնիկական խմբի աստիճանական ներթափանցումը այլ տարածքներ գրավոր աղբյուրներում կարող է արտացոլվել դարեր անց, այն պահից միայն, երբ այդ նոր էթնոսը սկսում է որոշակի դեր խաղալ քաղաքական ասպարեզում: Նույնը պետք է ասել նաեւ խուրրիների ելակետի մասին: Մասնագիտական գրականությունում տարբեր կարծիքներ են հայտնվել խուրրիների նախնական ելակետի վերաբերյալ՝ մինչեւ Հյուսիսային Միջագետքում հաստատվելն ընկած ժամանակաշրջանը:

Է. Սփայզերը ենթադրում էր, որ խուրրիները Հյուսիսային Միջագետքի հնագույն բնակիչներն էին՝ կուտիների եւ լուլուբեյների հետ միասին (Speiser, 1930a): Հետագայում նա փոխեց իր կարծիքը, համարելով, որ խուրրիները Հյուսիսային Միջագետքում հայտնվել էին ինչ-որ այլ վայրից մ.թ.ա. II հազ. սկզբին կամ քիչ ավելի վաղ (Speiser, 1933: 25): Այնուամենայնիվ, հեղինակը ենթադրում էր, որ խուրրիները, էլամցիները եւ որոշ այլ առաջավորասիական ժողովուրդներ պատկանում էին «արմենոիդ» մարդաբանական տիպին, որի ժամանակակից դրսեւորումը պահպանվել է միայն Կովկասում (Speiser, 1930a: 174):

Խուրրիների տեղայնացման խնդրի յուրահատուկ լուծում առաջարկեց Ա. Ունգնադը (Ungnad, 1936: 134ff.): Նրա կարծիքով, խուրրիները նույնն էին, ինչ Միջագետքի մ.թ.ա. III-I հազ. սեպագիր տեքստերում կանոնավոր հիշատակվող Սուբարտուի (Հայկական լեռնաշխարհի հարավ-արեւմուտք) բնակիչները, երկիր, որի կենտրոնական մասը գտնվում էր Խաբուրի վերին հոսանքների շրջանում՝ հայտնի Թել Խալաֆ անվանումը կրող հնավայրի մոտ: Այս էթնոմշակութային համալիրը տարածվում էր արեւմուտքում Կապադովկիա եւ Միջերկրական ծով, արեւելքում՝ իրանական սահման, հյուսիսում՝ Հայաստանի խորքերը: Նա նշում էր, որ այս տարածքի բնակչությունը մարդաբանական առումով նույնն էր, ինչ նկատելի էր նույնիսկ XXդ.: «Խուրրի» տերմինը հեղինակը բացատրում էր որպես «միություն, խումբ, դաշնակից», այսինքն, սրա տակ չէր տեսնում էթնիկական դրսեւորում: Խուրրի-սուբարիները, այսպիսով, տեղի հնագույն բնակչությունն էին առնվազն Թել Խալաֆի ժամանակներից (մ.թ.ա. V հազ.): Ա. Ունգնադի այս տեսակետը ըստ էության համահունչ էր Է. Սփայզերի կարծիքին (տես վերը):

Հարկ է նշել, որ չնայած հետագայում Ա. Ունգնադի տեսությունը մերժվեց, սակայն այն պարունակում է գիտական տարրեր եւ արժանի է էլ ավելի խոր քննարկման արդի մասնագետներին հասու սկզբնաղբյուրների լույսի ներքո: Միաժամանակ անհրաժեշտ է արձանագրել, որ խուրրիագետները գրեթե միահամուռ կարծում են, որ խուրրիները կազմել են բրոնզեդարյան Հայկական լեռնաշխարհի կամ գոնե դրա մի մասի բնակչությունը, այսինքն ինչ-որ չափով համակարծիք են վերոհիշյալ հեղինակի հետ (տես վերը՝ Գլուխ Առաջին. «Կուր-Արաքսյան մշակույթը» ենթագլուխը):

Ա. Ունգնադի կարծիքը խուրրիների եւ սուբարցիների նույնության մասին մերժվեց Ի. Գելբի կողմից (Gelb, 1944: 12ff.): Վերջինս համարում էր, որ սրանք տարբեր ժողովուրդներ էին եւ խուրրիները եկվորներ էին: Մ.թ.ա. 1700թ. մոտերքում խուրրիները ծավալուն տեղաշարժ կատարեցին Վանա լճի եւ Զագրոսի լեռների միջեւ ընկած շրջանից եւ մուտք գործեցին Ասորեստան ու Բաբելոն, իսկ նրանց որոշ մասը նույնիսկ հասավ Եգիպտոս (Gelb, 1944: 70):

Ըստ էության, Ի. Գելբը խուրրիներին համարում էր Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանների բնակիչներ, որոնց տեղաշարժերը հասնում էին ընդհուպ մինչեւ Եգիպտոս:

Գերմանացի հայտնի սեպագրագետ Ա. Կամմենհուբերի կարծիքով (Kammenhuber, 1977: 214), խուրրիները նախապես բնակվել են Կասպից ծովի արեւելքում, հարավ-արեւելքում, այնուհետեւ, արդեն մ.թ.ա. III հազ. կեսերից սկսել են ներթափանցել դեպի Հյուսիսային Միջագետք:

Օ. Գըրնիի կարծիքով (Gurney, 1990: 106), խուրրիների նախնական բնակության վայրը Կասպից ծովին հարավից հարող շրջաններն էին, որտեղից նրանք սկսեցին իրենց տեղաշարժերը դեպի Միջագետք մ.թ.ա. 2300թ. մոտերքում: Նույնպիսի՝ արեւելքից արեւմուտք տեղաշարժի ուղղություն էր ենթադրում Բ.Հրոուդան (Hrouda, 1971: 21):

Վերոհիշյալ կարծիքները, անկախ առանձին տարբերություններից, մոտավորապես նշում են միեւնույն տարածաշրջանը: Նկատի ունենալով մ.թ.ա. XXIV-XXIդդ. խուրրիների առաջին հիշատակությունները Հյուսիսային Միջագետքում եւ դրան հարող շրջաններում (այս մասին տես ստորեւ), ինչպես նաեւ խուրրիերենի ու արեւելակովկասյան՝ դաղստանյան լեզուների միջեւ առկա ազգացական կապի հանգամանքը (Diakonoff, 1971; ԺՖÿUՏվՏՉ, 1978: 25բսս.), կարելի է համաձայնվել այն մասնագետների հետ, ովքեր այս էթնիկական խումբը առնչում են Հայկական լեռնաշխարհի հետ: Մի շարք մասնագետներ խուրրիների նախնական բնակության վայր են դիտում այսօրվա Հայաստանի տարածքը, իսկ շարժումների ուղղությունը՝ հյուսիսից հարավ (Friedrich, 1969: 1; Diakonoff, 1982: 95բս., 104 տՐՌՎ.60; 1984: 7; Steiner, 1992: 33; Steinkeller, 1998: 96): Պ. Շտայնկելլերի կարծիքով (idem), Աքքադի արքա Նարամսինի (մ.թ.ա. XXIIIդ.) մի տեքստում հիշատակվող «Վերին երկրները» պետք է լինեին խուրրիական իշխանություններ եւ տեղադրվեին հարավային Հայաստանում՝ Սուբարտուից անմիջապես հյուսիս:

Հարկ է նշել, որ այսօր էլ արեւմտյան հնագետների աշխատություններում գերիշխում է այն տեսակետը, որ Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան Կուր-Արաքսյան մշակույթի կրողները խուրրիներն են եղել (Burney and Lang, 1971: 44ff.; Burney, 1978: 132; Diakonoff, 1984: 9f.; ղՈփՌÿվ, 1985: 6; Greppin, 1991: 720; այս մասին ավելի ընդարձակ տե՛ս Գլուխ Առաջին): Վերջին երկու տասնամյակներում այդ տեսակետը հանդիպեց լուրջ առարկությունների եւ զգալի թվով մասնագետներ հակվեցին Կուր-Արաքսում տեսնելու նաեւ հնդեվրոպացիների (Winn, 1981; Yakar, 1981; Gamkrelidze and Ivanov, 1985; ԸՐպՔÿվ, 1988; Burney, 1993):

Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան բնակչության էթնիկական պատկանելության առնչությամբ անհրաժեշտ է արձանագրել հետեւյալը: Մեր կարծիքով, մեթոդաբանորեն սխալ է Հայկական լեռնաշխարհի նման ընդարձակ, ընդ որում աշխարհագրական-ռելիեֆային պայմանների մեծ հակապատկերներ դրսեւորող տարածքի համար ենթադրել միաէթնիկ կազմ միայն հնագիտական մշակույթի նույնության հիմքի վրա: Հնդեվրոպացիների եւ խուրրիների համակեցության օրինակները շատ են հենց թեկուզ Միջագետքում (խուրրիներ եւ արիացիներ, տես ստորեւ), Փոքր Ասիայում (խուրրիներ եւ խեթեր), Կիցցուվատնա-Կիլիկիայում (խուրրիներ եւ լուվիացիներ): Հայկական լեռնաշխարհի հարավում եւ արեւմուտքում մ.թ.ա. XV-XIIIդդ. բազմաթիվ են խուրրիական անձնանունները եւ դիցանունները: Կարելի է հիշատակել մ.թ.ա. XIIIդ. Իսուվայի թագավորության (= հայկ. Ծոփք) խուրրիական արքայատոհմը (Klengel, 1968; Քոսյան, 1997: 178-179), մ.թ. ա. XIVդ. Իսուվայի հարեւան Ալզիի (= հայկ. Աղձնիք) արքայի խուրրիական Antaratal անունը (Laroche, 1966: 33 N.83), Իսուվայի տարածքում գտնվող Նիխ(ի)րիյա քաղաքում երկրպագվող խուրրիական Շավուշկա աստվածուհու անունը (Քոսյան, 2004: 74) եւ այլն (այդ իրավիճակն արտացոլող փաստական տվյալները տե՛ս Գլուխ 3. «Խուրրիները եւ հայերը»): Դրանք վկայում են այստեղ, հնդեվրոպացիների եւ խուրրիական էթնիկական տարրերի առկայության օգտին: Եվ, որպես կանոն, առայժմ հնագետներին չի հաջողվել հստակ տարբերակում մտցնել նշված շրջաններում խուրրիական եւ այլ մշակույթների միջեւ:

Խուրրիների առաջին հիշատակությունները միջագետքյան սեպագիր տեքստերում գալիս են Աքքադի պետության շրջանից (մ.թ.ա. XXIV-XXIIIդդ.): Դա Հյուսիսային Միջագետքի Ուրկեշ (ժամանակ. Թել

Մոզան՝ թուրք-սիրիական սահմանի վրա) եւ Նավար քաղաքների կառավարիչ Ատալշենի (Atal-šen)՝ աքքադերեն լեզվով գրված տեքստն է (ղՈփՌՍÿվ, 1985: 6; Salvini, 1998: 105f.): Մեկ այլ տեքստում, որ պատկանում է Աքքադի արքա Նարամսինին, հիշատակվում է Ազուխիննում քաղաքի (Ստորին Զաբ գետի շրջանում) կառավարիչ Տախիշատիլիին (Tahišatili) (Lambert, 1982; Salvini, 1998: 7ff.), իսկ մյուսում, որը կազմված է շատ ավելի ուշ շրջանում, սակայն վերաբերում է այս նույն ժամանակաշրջանի իրադարձություններին եւ միեւնույն տարածքին, հանդես է գալիս Սիմուրրում քաղաքի կառավարիչ Պուտտիմատալը (Puttim-atal)(Grayson/Sollberger, 1976; Salvini, 1998: 102f.): Նիպպուրից հայտնաբերված մի աքքադերեն տեքստ հիշատակում է Շեխրինէվրիին (Šehrin-ewri): Այս բոլոր անունները հստակ խուրրիական են:

Խուրրիական կառավարիչների անունները բավական հաճախ հանդիպում են նաեւ կուտիական տիրապետության եւ Ուրի III դինաստիայի ժամանակաշրջանի տեքստերում (մ.թ.ա. XXII-XXդդ.): Հայտնի է Ուրկեշի կառավարիչ Տիշատալը (Tiš-atal)(Parrot, Nougayrol, 1948: 1ff.; Salvini, 1998: 106ff.), որը հիշատակվում է իր իսկ կազմած խուրրիերեն տեքստում: Նա հստակ թվագրվում է Ուրի III դինաստիայի նախավերջին արքա Շու-Սուենի դարաշրջանով, այն է մ.թ.ա. 1970-ական թվականներ: Մեկ այլը՝ Տիշատալը հայտնի է իր կնիքից. նա Կարախար (Karahar) քաղաքի (Դիյալա գետի ակունքների մոտ) կառավարիչն էր:

Հյուսիսային Միջագետքի հայտնի Նուզի քաղաք-պետության արխիվի ընդարձակ անվանաբանական նյութերը՝ ըստ լեզվական պատկանելության (O'Callaghan, 1948: 53), տալիս են հետեւյալ պատկերը՝ խուրրիական -1500, աքքադական - 631, շումերական - 23, կասսիտական (հնդարիական) - 53, ընդհանուր հնդեվրոպական - 27, անհայտ ստուգաբանություն ունեցող - 754:

Այս թվերից պարզ երեւում է, որ Նուզիի բնակչության գերակշիռ մասը խուրրիներ էին: Եվ եթե հաշվի առնենք նաեւ կասսիտական եւ հնդեվրոպական ծագման անունների (չհաշված դեռեւս չստուգաբանված անունների մեծ քանակությունը) առկայությունը, ապա կարելի է միանշանակ եզրակացնել, որ խուրրիները եւ հնդեվրոպացիները Հյուսիսային Միջագետքի առնվազն մեկ շրջանում վճռորոշ նշանակություն ունեցող էթնիկական խմբերն էին:

Մ.թ.ա. XIXդ. կապադովկիական սեպագիր տեքստերից հայտնի է Մա'ամա իշխանության խուրրի կառավարիչ Անումխիրբին (Anum-hirbi): Այս քաղաքը գտնվում էր ժաման. Մարաշի շրջանում՝ թուրք-սիրիական սահմանից ոչ հեռու:

Խուրրիական անձնանունների հիշատակությունները կարելի է շարունակել, եւ այս հանգամանքը թույլ է տալիս վստահորեն ենթադրելու խուրրիական էթնոսի լուրջ ներկայություն Հյուսիսային Միջագետքում մ.թ.ա. XXIV-XXդդ. ընթացքում: Ընդ որում խուրրիների զբաղեցրած տարածքը հստակորեն ընդգրկում է Սիրիայի հյուսիսից Հյուսիսային Միջագետքով ընդհուպ մինչեւ Զագրոսի լեռներն ընկած ընդարձակ լեռնային եւ նախալեռնային շրջանները: Խուրրիների ներկայությունը ծայր արեւմուտքում հասնում էր մինչեւ Ալալախ՝ Օրոնտես գետի հոսանքների շրջանը: Կարեւոր է նշել, որ Ալալախի VII շերտից (մ.թ.ա.XVIIդ. - մոտ. 1560թ.) հայտնաբերված տեքստերում վկայված անձնանունների շուրջ կեսը խուրրիական են (Wilhelm, 1989: 13): Այսպիսով, պարզ է դառնում, որ խուրրիները բնակվում էին Հայկական Տավրոսի ողջ երկայնքով՝ Հայկական լեռնաշխարհի եւ սիրիա-միջագետքյան տարածաշրջանի սահմանային գոտում:

Մ.թ.ա. XXդ. երկրորդ կեսից, երբ Ուրի III դինաստիայի անկման շրջանում Սիրիայից Միջագետք մուտք գործեցին ամորեական կիսաքոչվոր ցեղերը, խուրրիական իշխանությունները շարունակեցին գոյատեւել: Հյուսիսային Միջագետքում հիմնադրված Աշշուրի պետությունը միայն մի կարճ ժամանակահատվածում կարողացավ որոշ ազդեցություն հաստատել այս իշխանությունների նկատմամբ: Աշշուրի հզորության հիմնադիր Շամշիադադ I-ի որդու՝ Իշմեդագանի օրոք հիշատակվում են մեծաքանակ խուրրիական իշխանություններ՝ Բուրունդումը (կառավարիչ Ատալշեննի [Atal-šenni]), Էլախուտը (կառավարիչ Շուքրում-թեշուպ [Šukrum-Teššup]) եւ այլք (Kupper, 1978): Այս նույն ժամանակաշրջանում Սիրիայում՝ Եփրատից արեւմուտք խուրրիական իշխանությունները զգալի դեր ունեին: Դրանցից էին Ուրսումը եւ Խասսումը, որոնց կառավարիչների անունները հստակ խուրրիական են՝ Շեննամ (Šennam) եւ Անիշխուրբի (Anišhurbi) (Kammenhuber, 1977; Wilhelm, 1989: 15):

Խուրրիների զանգվածային տարածումը Միջագետքից արեւմուտք, ընդհուպ մինչեւ Միջերկրական ծով եւ հարավ՝ դեպի Քանաան, անվիճելիորեն պետք է տեղ գտներ Աշշուրի թագավորության անկման ժամանակներում (մ.թ.ա. XVIIIդ. վերջ - XVIIդ. սկիզբ): Սակայն կան որոշ հավաստի տվյալներ, որոնք թույլ են տալիս ենթադրելու Հյուսիսային Սիրիայում դրանից շատ ավելի վաղ խուրրիների նկատելի գոյության մասին: Մասնավորապես, վերին աստիճանի հատկանշական է Էբլայի (ժաման. Հալեպի շրջանում) դիցարանում խուրրիական կարեւոր աստվածություններից մեկի՝ Աշտաբիի (Aštabi) (ռազմի աստված) հիշատակությունը (Pettinato, 1981: 251): Հետագայում իտալացի սեպագրագետ Ա. Արկին Էբլայի դիցարանում հայտնաբերեց մի ամբողջ խումբ խուրրիական աստվածներ՝ Կուրա (Kura)(քաղաքի հովանավոր, գլխավոր աստվածը), Ադամմա (Adamma), Ամմարիգու (Ammarigu), Իշխարա (Išhara), Իդակուլ (Idakul) (Archi, 1992: 7): Օտար, այն էլ ոչ սեմական աստվածների պաշտամունքը ինքնին արդեն ենթադրում էր այդ էթնոսի առկայությունը: Թերեւս, կարելի է պնդել, որ Էբլա քաղաքը կառավարվում էր խուրրիական ծագում ունեցող դինաստիայի կողմից, քանի որ քաղաքի հովանավոր աստվածը խուրրիական էր:

Մ.թ.ա. II հազ. առաջին կեսին Հյուսիսային Միջագետքից խուրրիների զգալի զանգվածի՝ Քանաան գաղթելու նյութական ապացույց պետք է դիտել այսպես կոչված «խաբուրյան խեցեղենի» լայն տարածվածությունը Քանաանի շատ հնավայրերում (Zertal, 1996: 74f.):

Մասնագետների շրջանում կան որոշ թերահավատ կարծիքներ վերոհիշյալ ուղղություններով խուրրիների տեղաշարժերի առնչությամբ (Kammenhuber, 1977: 129ff.), սակայն առկա աղբյուրները բավական խոսուն նյութեր են պարունակում այս հարցում: Որպես ասվածի վառ օրինակ կարելի է վկայակոչել հյուսիսարեւմտյան Սիրիայում գտնվող Ուգարիտ պետության արխիվից պահպանված հատուկ անունները (Noth, 1942: 47ff.; O'Callaghan, 1948: 54): Ընդհանուր առմամբ շուրջ 600 անձնանունների 1/8 մասը կազմում են խուրրիական անունները: Ուգարիտից հարավ՝ Ամուրրուի (հետագայի Փյունիկիա) արքայատոհմի անդամների անունները հստակ խուրրիական են՝ Aziru, IR-Tešub, Umbi-Tešub, Bentešina, Šaušgamuwa:

Որպես կանոն, ցանկացած խոշոր քաղաքական միավորի անկում ուղեկցվում է գոյություն ունեցող տարածաշրջանային ռազմաքաղաքական, վարչական, տնտեսական եւ այլ կառույցների քայքայումով: Առաջացած տնտեսական խնդիրները խթանում են բնակչության շարժունակության աճը, որը եւ արտագաղթի աղբյուր է դառնում: Հաջորդ բաժնում բերվելիք նյութերը թույլ են տալիս ամրապնդելու խուրրիական ծավալման մասին մասնագետների առաջ քաշած ենթադրությունը (Wilhelm, 1989: 16; Bright, 1972: 62):

Քննարկվող ժամանակաշրջանից շուրջ երկու դար անց Սիրիայում եւ Քանաանում գրավոր աղբյուրները ամենուրեք հիշատակում են խուրրիական էթնոսի զգալի ներկայություն, որը կարող էր տեղ գտնել միայն նախորդող փուլում ընթացած տեղաշարժերի արդյունքում: Բանն այն է, որ մ.թ.ա. XIV-XIIIդդ. նման տեղաշարժ դեպի կենտրոնական Սիրիա եւ Քանաան որեւէ կերպ հնարավոր չէ պատկերացնել Եգիպտոսի XVIII դինաստիայի փարավոնների ակտիվ նվաճողական քաղաքականության պայմաններում:

Խուրրիների եւ արիացիների եւս մեկ խոշոր տեղաշարժ է վկայված Հյուսիսային Միջագետքից եւ Հյուսիսային Սիրիայից դեպի հյուսիս-արեւմուտք: Մոտավորապես մ.թ.ա. XVIդ., Միտաննի պետության կազմավորման նախօրեին, սկսվեց նրանց տարածումը դեպի Արեւելյան Փոքր Ասիա եւ Կիլիկիա-Կիլիկիա: Այն հստակ թվագրվում է խեթական արքա Մուրսիլի I-ից հետո ընկած ժամանակաշրջանով (Խանտիլիս I-ի կառավարման օրոք): Հարձակումը այնքան հզոր էր, որ նրանց հաջողվեց նվաճել Խեթական պետության տարածքի մեծ մասը, բացի մայրաքաղաք Խաթթուսասից (Gurney, 1966: 3f.): Խուրրիները գերեցին նույնիսկ խեթական թագուհի Խարապսիլիսին եւ նրա որդիներին:

Փոքր Ասիայի տարբեր շրջաններում խուրրիները ստեղծեցին իշխանություններ, նրանց ազնվականներից շատերը հետագայում ռազմաքաղաքական բարձր դիրքեր զբաղեցրին Խեթական պետությունում: Իսկ մ.թ.ա. XVդ. խուրրիական ծագում ունեցող մի տոհմ կարողացավ հասնել արքայական իշխանության եւ հիմնադրեց նոր արքայատոհմ Խեթական պետությունում. մ.թ.ա. XV-

XIIIդդ. խեթական արքայատոհմը խուրրիական էր: Արքայատոհմի անդամները կրում էին խուրրիական անուններ, այդ թվում՝ թագաժառանգը՝ նախքան արքա հռչակվելը: Այս շրջանում խեթական Փոքր Ասիայում քաղաքական, մշակութային եւ կրոնա-պաշտամունքային կյանքում մեծ էր խուրրիների ազդեցությունը (Gurney, 1966: 18f.; Wilhelm, 1989: 51):

Կիցցուվատնա-Կիլիկիայում, դատելով աղբյուրներից, խուրրիները էլ ավելի ամուր հաստատվեցին: Այստեղ խուրրիական (հնարավոր է, նաեւ՝ արիական) արքայատոհմը հիմնադրեց պետություն, որը սերտ դաշնակցային կապերի մեջ էր Միտաննիի հետ (Goetze, 1940: 75):

Խուրրիների միգրացիաների խնդիրը սերտորեն առնչվում է մեկ այլ էթնոսի նման շարժումներին (տե՛ս ստորեւ):

Արիացիները Առաջավոր Ասիայում

Առաջավոր Ասիայում հնդիրանական ժողովուրդների հայտնվելու ժամանակի եւ աշխարհագրական տարածման խնդիրները հնդեվրոպաբանների աշխատություններում կարեւոր տեղ են զբաղեցնում: Այս հարցին նվիրված մեծաքանակ ուսումնասիրություններում (Renfrew, 1988; Mallory, 1989 [համապատասխան հղումներով]) քիչ թե շատ հստակ է հիմնականում այս լեզվախմբի կրողների այն հատվածի մեկնաբանությունը, որը վերաբերում է հնդիրանցիների՝ Հյուսիսային Հնդկաստանում հայտնվելուն, չնայած այստեղ էլ կան տարաձայնություններ այդ իրադարձության ճշգրիտ թվագրման հարցում (մ.թ.ա. XVIդ. կամ XIII-XIIդդ.): Սակայն Հնդկաստանի եւ ժամանակակից Իրանի տարածքում հաստատված հնդիրանցիները այս լեզվախմբի միակ ներկայացուցիչները չէին, ովքեր բնակվել էին Առաջավոր Ասիայում կամ անցել էին այստեղով: Հնդիրանցիների մեկ այլ հատված վկայված է մ.թ.ա. II հազ. Առաջավոր Ասիայի մյուս տարածաշրջաններում՝ Միջագետքում, Սիրիայում, Փոքր Ասիայում, Քանաանում եւ Հայկական լեռնաշխարհում:

Վերջիններիս մասնագիտական գրականությունում տրվում են տարբեր անվանումներ՝ արիացիներ, հնդիրանցիներ, հնդարիացիներ: Այս տերմինը պայմանական է, քանի որ սրանց լեզվի վերաբերյալ առ այսօր հայտնի՝ հիմնականում անվանաբանական նյութերը թույլ չեն տալիս ճշգրտելու դրա տեղը հնդեվրոպական լեզվաընտանիքի հնդիրանական լեզվախմբում: Մենք գերադասում ենք կիրառել «արիացիներ» տերմինը:

Այսպես, սեպագրական աղբյուրները (միջագետքյան, խեթական, Էլ Ամարնայի եգիպտական արխիվի, Ալալախի եւ այլ) պահպանել են մեծաքանակ հատուկ անուններ՝ անձնանուններ, դիցանուններ, ինչպես նաեւ հասարակ բառեր: Անձնանունների կրողները գերազանցապես տարբեր պետությունների արքաներ եւ ավելի մանր պետական կազմավորումների կառավարիչներ են եղել վերոհիշյալ տարածաշրջաններում (դրանց համահավաքը եւ հետազոտությունը տես Mironov, 1933; O'Callaghan, 1948: 56ff.; Kronasser, 1963: 141ff.; Mayrhofer, 1966; 1974): Արիացիների ներկայության խնդիրը Առաջավոր Ասիայում մ.թ.ա. II հազ. մասնագետների շրջանում տասնամյակներ շարունակ մեծ տարաձայնությունների առարկա է:

Դեռ Հ. Վինկլերը՝ խեթական մայրաքաղաքը պեղող առաջին հնագիտական արշավախմբի ղեկավարը, հակված էր ենթադրելու, որ Միտաննին առաջին արիական պետությունն է եղել (Winckler, 1910: 298ff.): Այս տեսակետը, քիչ ավելի չափավոր եւ անհամեմատ ավելի ընդարձակ լեզվական հիմնավորմամբ առկա է Մ. Մայրհոֆերի աշխատություններում (Mayrhofer, 1966; 1974): Վաղ շրջանի մասնագետների կարծիքով (Friedrich, 1928: 148; O'Callaghan, 1948: 68ff.) արիացիների զանգվածային տեղաշարժը սկզբում դեպի Հյուսիսային Միջագետք, այնուհետեւ՝ Սիրիա եւ Պաղեստին չէր կարող տեղի ունենալ մինչեւ մ.թ.ա. XVIդ.:

Սակայն 1960-ական թվականներից սկսած Միտաննիում արիացիների դերի եւ ընդհանրապես նրանց ֆիզիկական ներկայության խնդիրները լուրջ քննադատության արժանացան մի շարք ուսումնասիրողների կողմից:

Ա. Կամմենհուբերի կարծիքով (Kammenhuber, 1961: 17f.), արիացիների եւ միտաննական խուրրիների

լեզվամշակութային շփումները պետք է ընթանային ոչ թե Միտաննիում, այլ այդ պետության կազմավորումից (մ.թ.ա. XVIIIդ.) առաջ՝ Միջագետքին հարող լեռնային շրջաններում: Հետագայում նա որպես այդ արիական-խուրրիական սիմբիոզի գոյացման տարածք էր դիտում մ.թ.ա. III հազ. Անդրկովկասը (Kammenhuber, 1977: 220f.): Նա համարում էր, որ արիացի արքաները չեն կառավարել Միտաննիում: Արիական հատուկ անունների եւ հասարակ բառերի առկայությունը Միտաննիում եւ այլուր հետեւանք էր Հնդկաստանի ճանապարհին արիացիների եւ խուրրիների ունեցած շփումների. հենց այստեղ էլ խուրրիները արիացիներից սովորել էին մարտակառքի արվեստը: Սիրիայում եւ Քանաանում արիական անուններ կրող արքայիկները եւ այլ անձինք իրականում խուրրիներ էին, որոնց վրա դեռեւս զգացվում էր նախկինում արիացիների թողած ազդեցությունը:

Ըստ Ի. Դյակոնովի, 1) Միտաննիի արիացիներին վերագրվող անձնանունների, դիցանունների եւ հասարակ բառերի մի զգալի մասի արիական ստուգաբանությունները, ինչպես հարկն է, հիմնավորված չեն, 2) այդ հատուկ անունները եւ մյուս բառերը սեպագիր տեքստերում պահպանվել են որպես քարացած բառաձեւեր, որ վկայում է տվյալ պահին «արիերեն» լեզվի՝ խոսակցական չլինելու օգտին (ԺՖÿՍՏվՏՉ, 1970: 41բսս.): Միտաննիի արիացիներին նա համարում էր ընդհանուր հնդարիական զանգվածից անջատված մի ճյուղ, որը կարող էր խուրրիների հետ փոխշփումներ ունենալ Ուրմիա լճի մերձակայքում՝ մ.թ.ա.II հազ. առաջին կեսին (նաեւ ԸՉպՑՌրÿվ, 1984: 34բսս.; 2002: 19-22; ղՈփՌՍÿվ, 1985: 8): Հնագիտական նյութերի հիման վրա որպես արիացիների ելակետ մի կողմից դեպի Հնդկաստան, մյուս կողմից՝ Հյուսիսային Միջագետք, Սիրիա եւ Քանաան Բ.Մոյշեսոնը նույնպես նշում է Ուրմիա լճի շրջանը (Moisheson, 2001: 133):

Հյուսիսային Միջագետքում արիացիների հայտնվելու ժամանակը մասնագետները հակված էին տեսնելու Միտաննիի կազմավորումից շատ ավելի վաղ (O'Callaghan, 1948: 69):

Արիացիների տեղաշարժերի ուղղություններն ունեն նաեւ բավական լավ հնագիտական հիմնավորում: Դեռ ժամանակին նկատվել էր Հնդկաստանում մ.թ.ա. II հազ. տարածված, այսպես կոչված, «վեդայական գունազարդ խեցեղենի» եւ «Ուրմիայի խեցեղենի» (մ.թ.ա. III հազ. վերջ - II հազ. սկիզբ) միջեւ եղած ակնառու կապը (հղվում է ըստ Moisheson, 2001: 132f.): Նույնատիպ խեցեղեն է հայտնաբերվել նաեւ ուշ բրոնզեդարյան Հյուսիսային Միջագետքում եւ Լեւանտում, այսինքն՝ այն ժամանակաշրջանում, երբ այստեղ հիշատակվում են մեծաքանակ արիական անուններ: Մ.թ.ա. II հազ. վերջերին այս խեցեղենը առկա է Իսրայելի հարավում (Aharoni, 1982):

Վերոհիշյալ հետազոտություններից հետո անցած ժամանակաշրջանում տարբեր մասնագետներ կրկին անդրադարձան արիական խնդրին: Նախ՝ Մ. Մայրհոֆերը հանդես եկավ Ի.Դյակոնովի ժխտողական հոդվածի դեմ (տե՛ս վերը): Նրա տեսակետը աջակցություն ստացավ ի դեմս Թ. Գամկրելիձեի եւ Վ. Իվանովի հիմնարար աշխատության: Վերջիններիս կարծիքով, Միտաննիում արիական բարբառը ոչ թե մահացած լեզու է եղել, այլ օգտագործվել է սոցիալական մի որոշակի խմբի կողմից (Gamkrelidze and Ivanov, 1985):

Վերջապես հարկ է նշել առաջատար խուրրիագետ-խեթագետ Գ. Վիլհելմի տեսակետը Միտաննիի արիացիների խնդրի մասին, որին համաձայն են Օ. Գըրնին, Կ. Կյունեն եւ մյուսները (Wilhelm, 1989: 17; 1995: 1246f.; Gurney, 1990: 106; KÞhne, 1999: 209f.): Նրա կարծիքով, դժվար է Միտաննիում, Խեթական տերությունում եւ այլուր հայտնվող արիական լեզվական ազդեցության հետքերը վերագրել միայն դարեր առաջ հեռավոր Անդրկովկասում կամ մի այլ վայրում խուրրիների եւ արիացիների միջեւ ընթացած շփումներին: Մանավանդ, որ արիական լեզվական նյութերը Միտաննիում հայտնվում են այստեղ խուրրիների վկայվելուց առնվազն 700 տարի հետո միայն, այն է՝ մ.թ.ա. 1500 թ. մոտերքում: Եթե խուրրիներն ու արիացիները բավական երկար են շփվել Անդրկովկասում եւ հետո՝ դարեր անց Միտաննիում առկա են արիական ազդեցության հետքեր, ապա հակառակը՝ խուրրիերենի հետքերը բացակայում են Հնդկաստանում: Այսինքն, կարելի է վստահորեն խոսել միակողմանի ազդեցության եւ Միտաննիում արիացիների ուշ հայտնվելու մասին: Ըստ հեղինակի, արիացիները պետք է Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններից՝ խուրրիական նոր խմբերի հետ միասին մ.թ.ա. XVII-XVIդդ. ներթափանցեին հետագայի Միտաննիի տարածք եւ կարեւոր դեր խաղային այդ պետության ձեւավորման գործում: Միտաննիում եւ այլուր բնակվող արիացիների խմբերը ավելի ուշ շրջանում ձուլվել են խուրրիների մեջ:

Ինչպես տեսնում ենք վերը հղված կարծիքներից, այսօր մասնագետները իրավացիորեն հակված են Առաջավոր Ասիայում «արիական» էթնիկական խմբի լեզվական հետքերը համարելու դրա կրողների ակտիվ ներկայության արդյունք, այլ ոչ ինչ-որ մի ժամանակ Անդրկովկասում կամ հյուսիս-արեւմտյան Իրանում խուրրիների եւ «արիացիների» միջեւ ընթացած շփումների հետեւանք: Որեւէ հիմք չկա ենթադրելու, որ դարեր առաջ Միջագետքից այդքան հեռու ընկած շրջաններում ընթացած շփումները կարող էին խուրրիների միջնորդավորմամբ գոյատեւել հատուկ անունների եւ այլ բառաձեւերի տեսքով Միջագետքում ու մյուս տարածքներում: Այսինքն, անհրաժեշտ է վստահորեն արձանագրել, որ «արիական» անուններ կրողները իրականում հենց արիացիներ էին, այլ ոչ խուրրիների մոտ ինչ-ինչ հեղինակություն վայելած արիացիների հիշատակը հարգելու միտումի արդյունք:

Հաջորդ հետեւությունը, որը խիստ կարեւոր է աշխատության առջեւ դրված խնդրի հետազոտության տեսանկյունից, խուրրիների եւ արիացիների սերտ կապն է: Առաջավոր Ասիայի բոլոր երկրներում, որքան որ թույլ են տալիս գրավոր աղբյուրները, այս երկու ժողովուրդները հիշատակվում են կողք կողքի: Կարելի է որոշակիորեն խոսել խուրրի-արիական համագործակցության մասին, մի բան, որ ենթադրում է նրանց միջեւ դարերի ընթացքում ձեւավորված լեզվա-մշակութային ու այլ ընդհանրությունների առկայության օգտին:

Դատելով տարբեր բնույթի գրավոր աղբյուրներից՝ խուրրիները քանակապես գերազանցում էին արիացիներին, սակայն վերջիններս, շնորհիվ ռազմաքաղաքական ավելի բարձր կազմակերպման մակարդակի, կազմում էին բնակչության վերնախավը ինչպես Միտաննիում, այնպես էլ սիրիական, պաղեստինյան եւ այլ մանր իշխանություններում (O'Callaghan, 1948: 64ff.; Kassis, 1965: 267):

Արիացիների ակտիվ դերը Միտաննիում, Սիրիայում եւ այլուր, բացի հատուկ անուններից, հառնում է նաեւ մասնագետների կողմից ընդունվող հետեւյալ իրողությունից: Խեթական մայրաքաղաք Խաթթուսասի պեղումների ընթացքում հայտնաբերված մի տեքստ («Կիկկուլիի տրակտատը» - Kammenhuber, 1961; Starke, 1995) իրենից ներկայացնում է ձիավարժության ձեռնարկ, որտեղ բոլոր մասնագիտական տերմինները բացատրվում են միայն հնդիրանական լեզուների հիման վրա: Հատկանշական է, որ նույն ժամանակներում (մ.թ.ա. XIVդ.) Հյուսիսային Միջագետքի խուրրիաբնակ Նուզի քաղաքից հայտնաբերված տեքստերում շատ են ձիերին վերաբերող արիական տերմինները (Mayrhofer, 1966: 17ff.; 1974: 29f.; Kammenhuber, 1968: 211f.): Խուրրիների կողմից կիրառվող ձիաբուծական տերմինների առկայությունը կարող է վկայել այս ասպարեզում արիացիների ունեցած հեղինակության օգտին: Արիացիները պետք է ձիաբուծության եւ դրա հետ անմիջականորեն առնչվող մարտակառքերի խոշոր մասնագետներ լինեին:

Վաղուց ի վեր Առաջավոր Ասիայում երկանիվ թեթեւ մարտակառքերի մուտքը ավանդաբար կապվում էր հնդեվրոպացիների, մասնավորապես արիացիների հետ: Առաջիններից մեկը գերմանացի հնագետ Գ.Հերմեսն էր, որի կարծիքով վերոհիշյալ տիպի մարտակառքը ստեղծվել էր Կովկասյան լեռներից հարավ՝ Արեւելյան Անատոլիայում (= Հայկական լեռնաշխարհ) (Hermes, 1935: 803ff.; 1936: 364ff.): Այս տեսակետը, աննշան վերապահումներով, ընդունում էր Ֆ.Հանչարը (Hancar, 1956: 472ff.): Հաշվի առնելով մարտակառքի եւ ձիաբուծության հետ կապված տերմինների արիական ծագումը՝ իրավացիորեն հենց արիացիներն էին համարվում մարտակառքի ստեղծողները (Potratz, 1939; O'Callaghan, 1948: 69):

Հետագայում ամերիկյան արեւելագետ Ռ.Դրյուսը, հենվելով նախորդ ուսումնասիրությունների, ինչպեսեւ հնդեվրոպացիների տեղաշարժերի եւ տարբեր տարածաշրջաններում (Միջագետք, Հունաստան, Փոքր Ասիա) երկանիվ մարտակառքի հայտնվելու ժամանակագրությանը, հանգեց այն եզրակացության, որ այդ տիպի մարտակառքի հայրենիքը Հայկական լեռնաշխարհն էր (Drews, 1988: 119ff.). որպես դրա վառ օրինակ, նա բերում է Լճաշենից հայտնաբերված հայտնի մարտակառքի օրինակը:

Առաջավոր Ասիայում երկանիվ մարտակառքի հայտնվելու առնչությամբ անհրաժեշտ է նշել անցյալի ուսումնասիրողների որոշ տեսակետներ: Այսպես, դեռ 1940-ական թվականներին նկատվել էր (O'Callaghan, 1948: 134), որ հին Եգիպտոսի XVIII դինաստիայի փարավոնների օրոք մարտակառքերը

կամ կանոնավոր կերպով ներմուծվում էին դրսից (փարավոն Ամենհոտեպ II-ը հիշատակում էր Նախարինան = Միտաննի), կամ դրա պատրաստման համար անհրաժեշտ փայտանյութը բերվում էր Միտաննիից հյուսիս ընկած լեռներից: Ավելորդ է նշել, որ «Միտաննիից հյուսիս գտնվող լեռները» Հայկական լեռնաշխարհն է: Իտալիայի Ֆլորենցիա քաղաքի թանգարանում պահվող Եգիպտոսից բերված մ.թ.ա.XVդ. մարտակառքի փայտի քիմիական վերլուծության արդյունքում պարզվել է, որ այն ծագում էր Կասպից եւ Սեւ ծովերի միջեւ ընկած տարածքներից (Schaefer, 1931: 730ff.; Dittmann, 1934: 249ff.):

Չնայած մասնագետների շրջանում քիչ չեն այնպիսիք, ովքեր համարում են, որ երկանիվ թեթեւ մարտակառքերը ստեղծվել են Միջագետքում դեռեւս մ.թ.ա.III հազ. վերջերին – II հազ. սկզբներին ու դրանց հեղինակները արիացիները չեն (Nagel, 1966; Diakonoff, 1971: 91f.; Littauer and Crouwel, 1979: 51,61), սակայն, ի հավելումն վերը բերված փաստարկների, անհրաժեշտ է նշել մի անժխտելի փաստ, որը վկայում է այդ ենթադրության դեմ:

Միտաննիում, Սիրիայում եւ Պաղեստինում երկանիվ թեթեւ մարտակառքի կառավարները, որոնք իրենցից ներկայացնում էին ժառանգական իշխանությամբ օժտված ռազմական վերնախավը, կոչվում էին maryannu: Այս բառի հիմքում ընկած է, մասնագետների մեծ մասի կարծիքով (Winckler, 1910: 291ff.; Mayrhofer, 1966: 19; 1974: 16; Kammenhuber, 1968: 222f.; Diakonoff, 1971: 76; Laroche, 1980: 168), հին հնդկ. mnrya- «երիտասարդ մարդ, պատանի» բառը (Ավեստայում՝ «տղամարդկանց խմբի անդամ»): Կարեւոր է Վ. Օլբրայթի այն դիտարկումը, ըստ որի հիքսոսյան արքա Խիանի «պատանիների արքա/իշխան» տիտղոսը համահունչ է հնդիրանական mnrya «պատանի» բառին. հին հնդկական Ինդրա աստծո ուղեկիցները՝ marut-ները, որոնք արշավում էին մարտակառքերով, կոչվում էին mnryas (Albright, 1930-31: 217ff.): Ավելին, նա մարտակառքին լծված ձիու՝ սեմական բառը (քանաանյան sos, արամեական sosya, աքքադերեն sisu) բխեցնում էր սանսկրիտի aswas «ձի» բառից:

Եթե մ.թ.ա. XVI-XIIIդդ. Միջագետքի, Սիրիայի եւ Քանաանի բանակների գլխավոր հարվածային ուժը կազմող մարտակառքերի կառավարները նշվում էին հնդիրանական բառով, ապա առնվազն տարօրինակ կլիներ այդ զինատեսակի ստեղծողը համարել ուրիշներին:

Չի կարելի անտեսել նաեւ այն փաստը, որ Հայկական լեռնաշխարհում հնագիտական ուսումնասիրությունները վկայում են ձիեր լծած սայլերի առկայության օգտին դեռեւս մ.թ.ա. IV հազ. (Gamkrelidze and Ivanov, 1985: 12f.): Դժվար չէ նկատել, որ ձիասայլի հետագա էվոլյուցիան իրոք կարող էր հանգեցնել դրա կատարելագործմանը եւ հարմարեցմանը ռազմական գործողություններին: Հայկական լեռնաշխարհը պատմական բոլոր ժամանակներում հայտնի էր որպես ձիաբուծության կարեւորագույն կենտրոն, որտեղից, մասնավորապես, հինարեւելյան դարաշրջանում, հարեւանները մշտապես մեծ քանակությամբ ձիեր էին ներմուծում հարկի կամ ռազմավարի միջոցով (ԸՐցՑիվÿվ, 1964: 139-204; Fales and Postgate, 1995: N.112):

Հիքսոսյան խնդիրը

Խուրրի-արիական միգրացիաների աշխարհագրական տարածման եւ ազդեցության աստիճանի գնահատման համար կարեւոր նշանակություն ունի հիքսոսյան խնդիրը:

Համաձայն հին եգիպտացի պատմիչ Մանեթոնի, որի աշխատությունից առանձին հատվածներ պահպանվել են հրեա պատմիչ Հովսեփոս Ֆլավիոսի մոտ (Jos.Flav., Contra Apionem.I.14.75-79), հիշատակվում է Եգիպոսի թագավորության պատմության մի իրադարձություն: «…եւ անսպասելի, Արեւելքի շրջաններից, անհայտ ծագման նվաճողները արշավեցին՝ վստահ մեր երկրի նկատմամբ հաղթանակում: Իրենց հիմնական ուժով նրանք հեշտությամբ հաղթեցին երկրի կառավարիչներին, հետո անողոքաբար հրդեհեցին մեր քաղաքները, հողին հավասարեցրին աստվածների տաճարները եւ տեղաբնիկներին վերաբերվում էին դաժան թշնամությամբ, կոտորելով ոմանց, իսկ մյուսների կանանց եւ երեխաներին ստրկության քշելով: Ի վերջո նրանք իրենցից մեկին, որի անունն էր Սալիտիս, արքա նշանակեցին …»:

Հիքսոսների դեմ Վերին Եգիպտոսի (Թեբե մայրաքաղաքով) փարավոնների տեւական պայքարն

արտացոլող մեծաքանակ տեքստերը (Redford, 1997: 1ff.) վկայում են այն մասին, որ պատերազմները սկզբում ընթանում էին հիքսոսների օգտին ու միայն Կամոսի եւ Յախմոս I-ի շարունակական ջանքերի շնորհիվ հիքսոսները ստիպված էին հեռանալ Եգիպտոսից:

Մանեթոնի մոտ Եգիպտոսը նվաճած ժողովուրդը կոչվում է հունականացված hyksos անվանումով, որը եգիպտերեն Heqau-Khasut-ի համարժեքն է: Վերջինս դեռեւս Միջին թագավորության տեքստերում նշանակում էր Քանաանի եւ Ամուրրուի (Փյունիկիա) իշխաններին: Կարեւոր է նշել, որ վերոհիշյալ երկրների բնակիչներին եգիպտացիք սովորաբար անվանում էին՝ Amu եւ Retenu (վերջինս = Պաղեստին), այլ ոչ հիքսոս (Oren, 1997: XXI): Բնականաբար, հիքսոս բառը էթնիկական խմբի անվանում չէ, այլ մի հավաքական տերմին, որը նշում էր որոշակի տարածքի կառավարիչներին («օտար երկրների կառավարիչներ»): Առաջարկվել է Եգիպտոսի հիքսոսներին տրվող այս տերմինը համարել ոչ թե ողջ բնակչության, այլ միայն արքաների հավաքական անվանում:

Հիքսոսների կողմից Եգիպտոսի նվաճումը, համաձայն «ստորին ժամանակագրության» (Krauss, 1985), թվագրվում է մ.թ.ա.1650-ական թվականներով: Ըստ Մանեթոնի, հիքսոսների տիրապետությունը Եգիպտոսում տեւել էր 108 տարի, որից հետո նրանք վտարվել էին երկրից XVIII դինաստիայի հիմնադիր փարավոն Յախմոսի կողմից: Հիքսոսների տիրապետության ժամանակագրության վերաբերյալ կան այլ տեսակետներ եւս: Այսպես, Ք. Քիթչնը (Kitchen, 1987: 44f.) առաջարկում է մ.թ.ա. 1648-1637թթ. կամ 1637-1629թթ., Վ.Հելքը (Helck, 1987: 25)՝ մ.թ.ա. 1623-1515թթ.: Սակայն այս տարբերությունները զգալի չեն ու չեն կարող փոխել ընդհանուր պատկերը:

Խուրրի-արիացիների եւ հիքսոսների միջեւ տարբեր մասնագետների կողմից ենթադրվող առնչակցությունը առաջին հերթին հենվում է ժամանակագրական համապատասխանության վրա: Հայտնի է, որ խուրրի-արիական տեղաշարժերը դեպի Սիրիա տեղ են գտել մ.թ.ա.XVIII-XVIIդդ.: Աշշուրի արքա Շամշիադադ I-ի կառավարման վերջերին (մ.թ.ա.XVIIIդ. կեսեր) ժաման. Տուր Աբդին լեռների շրջանը եւ Ջազիրան արդեն խուրրիների ձեռքին էին, որի հիման վրա կարելի է ենթադրել, որ նրանք արագորեն տարածվում էին Բալիխի, միջին Եփրատի ու Օրոնտեսի հովիտներում (Wilhelm, 1989: 19f.): Մ.թ.ա.XVIIդ. այդ ժողովուրդներն արդեն տիրում էին Սիրիայի մեծ մասին, որտեղ քիչ ավելի ուշ գրավոր աղբյուրները հիշատակում են մեծաքանակ խուրրիական իշխանություններ՝ գերազանցապես արիացի կառավարիչների գլխավորությամբ (տես ստորեւ՝ «Սիրիայի եւ Քանաանի ժողովրդագրությունը եւ քաղաքական իրավիճակը մ.թ.ա.XV-XIIIդդ.» ենթագլուխը):

Հիքսոսների եւ խուրրի-արիացիների առնչակցության խնդրում կարեւոր է նշել հետեւյալ հանգամանքները:

Հայտնի է, որ հիքսոսների գլխավոր հենակետը, նախքան Եգիպտոս արշավելը, գտնվել է Պաղեստինում: Եգիպտական աղբյուրները որպես այդպիսին դիտում էին Պաղեստինում գտնվող Շարուխեն քաղաքը (= ժաման. Թել էլ-Աջուլ հնավայրը)՝ (Kempinski, 1974: 145ff.): Ա.Կեմպինսկին եւ Մ. Բիտակը առաջարկում են Շարուխենը համարել Եգիպտոսում հաստատված հիքսոսյան պետության (Ավարիս մայրաքաղաքով) իշխող դինաստիայի ենթադինաստիա (XVI դինաստիա) (Kempinski, 1974: 145ff.; Bietak, 1997: 113): Պաղեստինում հիքսոսյան տիրապետության շրջանում հնագիտական ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել նախորդ փուլի համեմատ բնակչության մեծ աճի մասին: Ըստ ամենայնի, այս շրջանի Պաղեստինում ստեղծվել էր բավական հզոր պետականություն, որն աչքի էր ընկնում ռազմականացման բարձր մակարդակով:

Միջին բրոնզեդարի վերջին՝ III փուլում (մ.թ.ա.1650-1550 թթ.), ըստ 1990-ական թվականների հնագիտական ուսումնասիրությունների տվյալների, հայտնի էր 337 բնակավայր, որոնցից 16-ը խոշոր քաղաքներ էին՝ շուրջ 73,000 բնակչությամբ: Այդ 16 քաղաքներում ապրում էր բնակչության շուրջ 52 տոկոսը. ընդհանուր բնակչությունը կազմում էր մոտավորապես 140,000 մարդ (Dever, 1997: 290): Վերը բերված տվյալներից երեւում է, որ այստեղ ուսումնասիրվող ժամանակաշրջանում գոյություն ուներ կազմակերպված լուրջ պետականություն կամ առնվազն միմյանց հետ դաշնակցային հարաբերությունների մեջ գտնվող մանր պետությունների մի շղթա: Ենթադրվում է, որ դրանց թիվը կարող էր բավական մեծ լինել (Bietak, 1997: 115): Այնինչ դրանից առաջ ռազմաքաղաքական եւ տնտեսական առումով Պաղեստինը իրենից ներկայացնում էր երկրորդական նշանակություն ունեցող

տարածաշրջան: Բնական է ենթադրել, որ Պաղեստինում վերը նշված փոփոխությունները պետք է որոշակիորեն պայմանավորված լինեին զգալի քանակությամբ եկած բնակչության առկայությամբ: Հիքսոսյան արքաների եւ այլ անձանց անունների ստուգաբանությունը նույնպես որոշակի դեր ունի հիքսոսների էթնիկական պատկանելության հարցի պարզաբանման գործում: Այս հարցում մասնագետների շրջանում մեծ տարակարծություններ կան: Հայտնի սեպագրագետ Ա. Գյոթցեն համոզված էր, որ հիքսոսները խուրրիներ էին, որոնք տեղաշարժվելով, հասել-նվաճել էին Եգիպտոսը (GΦtze, 1928: 21): Վ.Օլբրայթը հիքսոսներին համարում էր հնդիրանցիներ, նշելով, որ, անկախ սեմական տարրի ներկայությունից, չի կարելի արհեստականորեն մեծացնել վերջիններիս դերը հիքսոսյան արշավանքում: Նա միաժամանակ, որպես հիքսոսների՝ հնդիրանական ծագումը բացահայտող փաստարկներ, նշում էր մարտակառքերի եւ ուղղանկյունաձեւ ամրացված ռազմական ճամբարների ներմուծումը Եգիպտոս (Albright, 1930-31: 218f.): Գերմանացի եգիպտագետ Հ. Շտոկի (Stock, 1942: 70ff.) տեսակետով, հիքսոսյան արքաները ծագումով հիմնականում արիացիներ էին, բայց կային նաեւ խուրրիներ ու սեմիտներ: Ավելի վաղ այդ կարծիքը զգուշավորությամբ արտահայտել էր Ռ. Էնգբերգը (Engberg, 1939: 40ff.):

Վ.Հելքի կարծիքով (Helck, 1971: 101ff.), հիքսոսյան փարավոնների մեծ մասի անունները չեն կարող բացատրվել սեմական լեզուների ու եգիպտերենի հիման վրա: Կ. Ռեդֆորդը, որն այնքան էլ հակված չէր հիքսոսյան անվանաբանության մեջ տեսնելու սեմականից բացի այլ ծագման անուններ, այնուամենայնիվ ենթադրում էր խուրրիական եւ արիական անունների որոշ հետքեր (Redford, 1970: 21): Այսպես, հետեւելով Վ. Ուորդին (Ward, 1975: 362f.), նա K3ndy անվան մեջ տեսնում էր խուրրիական Կունտայա (Kuntaya) անունը: Նույն կերպ Snsk անունը նա համադրում էր արիական Սունասսուրայի (Šunaššura) հետ (այս համադրությունը առաջարկել էր Մ.Մայրհոֆերը՝ Mayrhofer, 1966: 29; Redford, 1970: 21): Նա, հիքսոսյան անունների հիմքում տեսնելով Լեւանտյան ծովափի սեմական ինչ-որ ժողովրդի լեզու, այնուամենայնիվ ենթադրում էր, որ որոշ անուններ ունեն հստակ ոչ-սեմական ծագում (այն է՝ խուրրիական): Կարեւոր է նշել հեղինակի այն մոտեցումը, ըստ որի հիքսոսյան մի շարք անուններ ըստ էության ոչ թե անձնանուններ են, այլ եգիպտացի գրիչների կողմից հիքսոսներին տրված եգիպտերեն մակդիրներ: Այսինքն, դրանք պետք է իրականում այլ կերպ հնչեին: Հիքսոսների զանգվածում խուրրիական տարրի առկայության մասին նշում է նաեւ Մ. Բիտակը (Bietak, 1997: 113): Հիքսոսների զանգվածում խուրրիների եւ հնդարիացիների զեկավար դերի մասին ենթադրությունը առկա է նաեւ հայ սեպագրագետ Հ. Ավետիսյանի հետազոտությունում (Ավետիսյան, 2002: 22-23): Հիքսոսների սեմական, ավելի ճշգրիտ՝ ամորեական ծագումը ենթադրում է նաեւ Է. Օրենը (Oren, 1997: p.XVI):

Անհրաժեշտ է նշել հիքսոսների եւ հրեաների առնչակցության օգտին առկա այն տեսակետը, որ առաջ էր քաշել դեռ մ.թ.ա. Ի դ. հրեա պատմիչ Հովսեփոս Ֆլավիոսը: Նա կարծում էր, որ հիքսոսյան արշավանքը եղել է հրեաների՝ Եգիպտոս մտնելու եւ հետո վերադարձի (Exodus) մասին Աստվածաշնչի տեղեկության հիմքը: Մեծ թվով մասնագետներ համաձայն են Ֆլավիոսի վարկածի հետ (Gardiner, 1961: 156; Breasted, 1964: 184; Helck, 1962: 92ff.; Astour, 1967: 98f.; Biemson, 1978): Մի շարք մասնագետներ համաձայն չեն դրա հետ (Engberg, 1939; von Beckerath, 1964: 117; Van Seters, 1966: 192; Sauer, 1986):

Հիքսոսյան անունների հարցում մասնագետների առաջարկած իրարամերժ կարծիքների համադրումը առայժմ հայտնի անվանաբանական նյութերի հետ թույլ է տալիս հանգել հետեւյալ եզրակացության: Իրոք այդ անունների շարքում գերիշխողը սեմականն է: Դա միաժամանակ կարող է վկայել հիքսոսների զանգվածում սեմական տարրի մեծ տոկոսի օգտին: Սակայն խուրրիական (հնարավոր է՝ նաեւ արիական) անունների թեկուզ փոքր քանակը այնուամենայնիվ կարող է նշել վերջիններիս մասնակցությունը մ.թ.ա. XVIIդ. Եգիպտոսի նվաճմանը, ընդ որում որպես գերիշխող էթնիկական տարրի: Անհրաժեշտ է հիշատակել նաեւ կարեւոր մի հանգամանք: Դա եգիպտական հիերոգլիֆային գրի առանձնահատկությունն է, որը, ի տարբերություն սեպագրի, թույլ չի տալիս ներկայացնելու ձայնավորները: Բացառված չէ, որ եգիպտական գրիչները կարող էին իրենց համար օտար եւ դժվարըմբռնելի անունները հարմարեցնել սեփական գրչական ավանդույթին եւ արդյունքում ոչ-սեմական ու քամական անունները աղավաղվեին այնքան, որ մերօրյա մասնագետները դրանք ընկալեին որպես սեմական:

Մեր կարծիքով, հիքսոսների կապը խուրրիների եւ արիացիների հետ ժխտող մասնագետները,

նախապատվությունը տալով հիքսոսյան անձնանունների կասկածելի ստուգաբանությանը, անտեսում են Մանեթոնի վերոբերյալ հաղորդումը այն մասին, որ հիքսոսները «անհայտ ծագում» ունեին: Հարկ է նշել, որ եգիպտացիք Պաղեստինի եւ Հարավային Սիրիայի ժողովուրդների հետ լավ ծանոթ էին դեռեւս Հին թագավորության շրջանից (մ.թ.ա. XXVIII-XXIIդդ.): Ինչ վերաբերում է հիքսոսյան արշավանքին անմիջականորեն նախորդող ժամանակներին, ապա հայտնի են Միջին թագավորության արքա Սեզոստրիս III-ի արշավանքները այս ուղղությամբ, մասնավորապես Պաղեստինում (Գեզեր) եգիպտական փարավոնի փոխարքայի առկայությունը (Breasted, 1964: 136ff.,156ff.): Եգիպտացիք այս շրջանների բնակչության հետ սերտ փոխհարաբերություններ ունեին: Իսկ դա նշանակում է, որ Քանաանի բնակիչները եգիպտացիների համար «անհայտ» չէին կարող լինել: Այդպես կարող էին հորջորջվել միայն նրանք, ում հետ եգիպտացիները նախկինում չէին շփվել: Բացի այդ, ինչպես նշվել է, «հիքսոս» տերմինով բնորոշվում էին ոչ թե հիքսոսյան արշավանքի բոլոր մասնակիցները, այլ միայն նրանց առաջնորդները (տես վերը):

Հիքսոսների էթնիկական պատկանելության կամ ուղղակի դրանց կազմում ոչ սեմական տարրի մասին որոշակի տեղեկություն են պահպանել հիքսոսյան դարաշրջանի հնագիտական նյութերը: Դրանք հիմնականում ի հայտ են եկել Նեղոսի Դելտայի արեւելքում գտնվող հիքսոսյան մայրաքաղաք Ավարիսի (= ժաման. Թել էլ Դաբա'ա հնավայրը) եւ հարակից հնավայրերի (Ինշաս, Թել էլ Ֆարաշա, Թել էլ Մասքութա եւ այլն) պեղումներից (Bietak M., 1975; 1984; 1997):

Հնագիտական նյութերից հատկանշական են հատկապես ձիազգիների ծիսական թաղումները: Հիքսոսյան փուլի դամբարաններում, ի տարբերություն նախորդ շրջանի, հաճախակի հանդիպում են ձիերի եւ էշերի թաղումները: Ընդ որում, դրանք դրված են կողք կողքի, իսկ դամբարանի հատակագիծը շատ նման է մարտակառքի: Մի շարք դեպքերում մարդիկ ու ձիերը թաղված են միասին, որ վկայում է հօգուտ այն ենթադրության, որ տվյալ պարագայում գործ ունենք ձիերի զոհաբերության հետ (Bietak, 1968: 91,98), մի բան, որ հատուկ չէր ոչ հին եգիպտական, ոչ էլ սիրիա-պաղեստինյան տարածաշրջանի սեմական բնակչությանը:

Հիքսոսյան դարաշրջանի դամբարանների (Եգիպտոսում, Պաղեստինում եւ Սիրիայում) նյութերի կարեւոր առանձնահատկությունը տարբեր զինատեսակների առկայությունն է՝ ձիեր, մարտակառքեր, շքեղ դաշույններ եւ սրեր, որոնք արդեն ուշ բրոնզեդարում սկսում են գերիշխել նշված տարածաշրջանում (Van Seters, 1966: 56f.; Bietak, 1968: 106ff.): Անհնար է այս առնչությամբ շրջանցել վերը նշված մշակութային երեւույթների ակնհայտ առնչակցությունը Հայկական լեռնաշխարհի նմանօրինակ իրերին (տե'ս Գլուխ Առաջին), նաեւ հատկապես մարտակառքերի եւ ձիերի հարցում, որոնք մասնագետների մեծ մասի կողմից իրավացիորեն դիտվում են որպես խուրրի-արիական գերակայություն (տե'ս վերը՝ «Արիացիները Առաջավոր Ասիայում» ենթագլուխը): Չափազանց դժվար է այս երեւույթները համարել Լեւանտի (Սիրիա, Պաղեստին) ժողովուրդների նյութական մշակույթի ինքնուրույն զարգացման արդյունք, մանավանդ որ այս տարածքի հյուսիսային մասը արդեն իսկ մ.թ.ա. XVIII-XVIIդդ. հիմնավորապես խուրրիականացել էր (նաեւ՝ արիականացել) (տես վերը՝ «Խուրրիները Միջագետքում, Սիրիայում եւ հարակից շրջաններում մ.թ.ա. III հազ. վերջերին - II հազ. սկզբներին» ենթագլուխը):

Հիքսոսների մշակույթում Հայկական լեռնաշխարհի հասարակությունների մասնակցության լավագույն դրսեւորումներից մեկը պետք է համարել Ավարիսից շուրջ 10կմ հեռու գտնվող Սալխիյա հնավայրում պեղված արքայական դամբարանի կարեւորագույն գտածոն: Դա էլեկտրումից (ոսկու եւ արծաթի համաձուլվածք) պատրաստված թագն է (ավելի ճիշտ՝ գլխանոց), որի շուրջբոլորը պատկերված են եղնիկներ ու եղջերու: Մ. Բիտակը այս իրի ավելի վաղ համարժեքն է համարում կենտրոնական Փոքր Ասիայի Ալաջահյոյուք հնավայրից հայտնի իրը, նաեւ Յերիխոնից հայտնաբերված կավանոթի վրա պատկերված տղամարդու գլխանոցը (Bietak, 1979: 242f.): Սակայն հարկ է նշել այն, որ նման մի իր է հայտնաբերվել ՀՀ-ում՝ Լոռիբերդի դամբարաններից մեկում (Դեւեջյան, 1982): Նշված իրերի նմանությունը յուրահատկության տեսանկյունից ակնհայտ է եւ այստեղ միանշանակ կարելի է խոսել դրանց ստեղծողների միջեւ էթնիկական առնչակցության մասին: Չափազանց կարեւոր են Քանաանի տարբեր հնավայրերից այս ժամանակաշրջանին վերաբերող նյութերը, հատկապես մետաղյա գտածոները, որոնք խիստ բնութագրական են Անդրկովկասի գրեթե բոլոր հնավայրերի համար: Անդրկովկասի հնավայրերում դրանց մեծ տեսականու մի շարք

ներկայացուցիչներ (միաձույլ, շուրջ կես մետր երկարությամբ սրեր, մարտակառքերի եւ սայլերի վրա դրվող եղջերվակերպ ու ցլակերպ արձանիկներ եւ այլն) առկա են, օրինակ, Գազայում եւ Եգիպտոսում (Мартиросян, 1964: 108слл.):

Հիքսոսյան մշակույթի հետագա ուսումնասիրությունները կարող են վեր հանել է՛լ ավելի ընդարձակ առնչություններ, սակայն եղածն էլ թերեւս բավական է ենթադրելու խուրրիների, արիացիների եւ նրանց միջեւ առկա կապերի մասին:

Սիրիայի եւ Քանաանի ժողովրդագրությունը եւ քաղաքական իրավիճակը մ.թ.ա. XV-XIIIդդ.

Սիրիայում եւ Քանաանում խուրրի-արիական ու դրա հետ անմիջականորեն առնչվող հիքսոսյան տեղաշարժերի գնահատման տեսանկյունից չափազանց կարեւոր են այս տարածաշրջանի ժողովրդագրական իրավիճակն արտացոլող գրավոր աղբյուրների տեղեկությունները: Դրանք պահպանվել են գերազանցապես 1887թ. հայտնաբերված եգիպտական Էլ-Ամարնայի սեպագրական արխիվի նամակներում (Knudtzon, 1915): Այս նյութերի հետազոտությունը (Mironov, 1933: 140ff.; Dumont, 1947; Gordon, 1947: 1ff.; O'Callaghan, 1948: 59ff.; Campbell, 1960: 2ff.; Albright, 1966: 8ff.; Laroche, 1966 passim;) թույլ է տվել առանձնացնելու մեծաքանակ արիական (որոշ դեպքերում նաեւ խուրրիական) անձնանուններ, որոնց կրողները, դատելով ուղղակի վկայություններից, կազմում էին մ.թ.ա. XIV-XIIIդդ. Պաղեստինի եւ Սիրիայի բնակչության իշխող վերնախավը: Անձնանուններից բացի կան նաեւ մի շարք հնդիրանական տեղանուններ: Ստորեւ ներկայացնենք Սիրիայի ու Քանաանի տարբեր քաղաքական միավորների այն կառավարիչների անունների եւ տեղանունների ցուցակը, որոնք հաստատապես արիական են՝

1. Սիրիա եւ Ամուրրու (Փյունիկիա)

Aitaggama - Քադեշի իշխան (Mironov, 1933: 187; O'Callaghan, 1948: 59, N.41). = հնդկ. eta-gama «արագ քայլող».
Abiradda - Բարգայի իշխան (Dumont apud O'Callaghan 1948: 59, N.40). = հնդկ. abhi-rata «զոհ(ացած)»:
Ariwana - Արինայի իշխան (Dumont apud O'Callaghan 1948: 60, N.43) (խուրրիական կամ արիական – Laroche, 1966: 39 N.129). = հնդկ. ari-vana «թշնամիներ որոնող».
Artaya - Արինայի իշխան (Dumont apud O'Callaghan 1948: 60, N.45; Laroche, 1966: 42 N.151). = հնդկ. rtayant «սրբազան օրենքին հետեւող».
Artamanya - Զիրիբազանիի կառավարիչ (Mironov, 1933: 171; Dumont apud O'Callaghan, 1948: 60 N.44) = իրան. artamanya, հնդկ. rta-manya «ճշմարտությունը հիշող» կամ «աստվածային օրենքին ձգտող».
Arzawiya - Ռուխիցցիի կառավարիչ (Mironov, 1933: 171f.; O'Callaghan, 1948: 60 N.46) = հնդկ. arjavya «ազնվություն, ուղղամտություն».
Bayawa – Իշխան Սիրիայում (Dumont apud O'Callaghan, 1948: 60 N.48) = հնդկ. vayava «Վայուից (քամու աստված) տրված» կամ «Վայուի որդի».
Piriyašauma – Կանիտխիի իշխան (Dumont apud O'Callaghan 1948: 60, N.50; Laroche, 1966: 145 N.1013). = հնդկ. virya-sauma «խիզախության (լուսնի) աստվածը».
Piriyaššura – Ուզարիտի՞ արքայազն (Dumont apud O'Callaghan 1948: 58, N.24; Laroche, 1966: 145 N.1014). այս անունը առկա է նաեւ Նուզիում (Gelb, Purves, MacRee, 1943: 245,260) = հնդկ. viryasura «խիզախության աստվածային ոգին».
Biriyawaza – Ուպեի իշխան (Mironov, 1933: 172; Dumont apud O'Callaghan, 1948: 60 N.51) = հնդկ. virya-vaja «նա ով տիրում է խիզախության պարգեւին»; Միրոնովի մոտ՝ Namyawaza (p.176f.).
Patuzana – Իշխան Սիրիայում (Dumont apud O'Callaghan, 1948: 61 N.61) = հնդկ. Patu-jana «խելոք, խորամանկ մարդ».
Šumittara – Կարքեմիշի իշխան (Mironov, 1933: 178; Dumont apud O'Callaghan 1948: 61, N.65; Laroche, 1966: 165 N.1174). = հնդկ. sumitra «լավ ընկերներ ունեցող» կամ sumidha «առատաձեռն».
Šutatarra – Քադեշի կառավարիչ Այտագամայի հայրը (Dumont apud O'Callaghan 1948: 62, N.68; Laroche, 1966: 168 N.1198). = հնդկ. suta-tara «կառավարների հովանավոր».
Šuwatiti - Ալալախցի մարդ (Dumont apud O'Callaghan, 1948: 62 N.71) = svathiti «լավ ընկերներ ունեցող».
Dašarti - Ամուրրուի բնակիչ (Mironov, 1933: 187 [կոչվում է «միտաննեցի»]; Dumont apud O'Callaghan, 1948: 60f. N.54) = վեդ. dasa-artv «բարբարոսների ցավ/թշնամի».
Dewatti – Լաբանայի իշխան (Mironov, 1933: 180f.; Dumont apud O'Callaghan, 1948: 61 N.55) = հնդկ. devatta «աստվածատուր».

Wambadura - Արինայի իշխանը (Dumont apud O;Callaghan, 1948: 62, N.77; Laroche, 1966: 204 N.1487). = հնդկ. vama-pandura «գեղեցիկ եւ դալուկ».
Zirdamyašta – Ուպեի իշխանին ենթակա անձ (Mironov, 1933: 183; Dumont apud O'Callaghan, 1948: 62 N.72) = հնդկ. zrda-myazda «նա ով սրտի երկրպագություն է կատարում».
Zitriyara – Իշխան Սիրիայում (Mironov, 1933: 183f.; Dumont apud O'Callaghan, 1948: 62 N.73) = հնդկ. citrya-rai «փայլուն ունեցվածքի տեր»:

2. Պաղեստին
Purdaya – Տաանախի կառավարիչ (Dumont apud O'Callaghan, 1948: 61 N.62) = հնդկ. Puramdara «ամրոցներ փշրող» կամ puram-jaya «ամրոցներ նվաճող».
Rušmanya – Շարունայի կառավարիչ (Mironov, 1933: 177; Dumont apud O'Callaghan, 1948: 61 N.63) = հնդկ. rucimanya «լույսը պատվող/հիշող».
Šubanda – Իշխան Պաղեստինում (Mironov, 1933: 177f.; Dumont apud O'Callaghan, 1948: 61 N.64) = հնդկ. su-bandhu «լավ ազգականներ ունեցող».
Šutatna - Ակկոյի կառավարիչ (Mironov, 1933: 179; Dumont apud O'Callaghan 1948: 62, N.69). = հնդկ. suta-tana «ում համար ժառանգ է ծնվել».
Šuwardata – Շեխեմի կառավարիչ, նաեւ Հեբրոնի իշխան (Mironov, 1933: 179f.; Dumont apud O'Callaghan 1948: 62, N.70). = հնդկ. suvardata «արեւից տրված».
Widya - Աշկելոնի կառավարիչ (Mironov, 1933: 182; Dumont apud O'Callaghan, 1948: 62 N.78) = հնդկ. vidya «ուժեղ».
Zurašar – Կառավարիչ Պաղեստինում (Mironov, 1933: 184; Dumont apud O'Callaghan, 1948: 63 N.79) = հնդկ. su-rastra «լավ կալվածք ունեցող».
Zurata - Ակկոյի կառավարիչ (Mironov, 1933: 184; Dumont apud O'Callaghan, 1948: 62 N.80) = հնդկ. su-ratha «լավ մարտակառք ունեցող».
Պաղեստինի տեղանուններ
Akšapa – Indaruta-յի քաղաքը; հմմտ. հնդկ. akšapa «աննվաճ, չավերվող»(Mironov, 1933: 185).
Šunama – ժաման. Sulam՝ Մեգիդդոյից արեւելք = հնդկ. sunama «լավ անուն կրող, փառահեղ» (Mironov, 1933: 185).

Արիական (նաեւ խուրրիական) անունների ցանկը կարելի է մեծացնել ի հաշիվ մի շարք անունների, որոնց ստուգաբանությունը դեռեւս վիճելի է:

Վ. Օլբրայթի հաշվարկներով, Էլ-Ամարնայից եւ Պաղեստինի Տաանախ բնակավայրից հայտնաբերված նամակները վկայում են Պաղեստինի բնակչության իշխող վերնախավի բազմաէթնիկ կազմի օգտին: Հատկանշական է, որ արիական եւ խուրրիական անուններն իրենց քանակով քիչ են զիջում այս տարածաշրջանի բնիկ քանաանյան (արեւմտասեմական) անուններին: Այսպես՝
Էլ-Ամարնա - 20 արիական (որոշ մասը՝ կասկածելի), 3 խուրրիական, 32 սեմական:

Տաանախ – 5 արիական (որոշ մասը՝ կասկածելի), 4 խուրրիական, 14 սեմական:

Նույն հեղինակը նշում է, եւ դա շատ կարեւոր է ներկա ուսումնասիրության տեսանկյունից, որ արիական անուններ կրողները, գրեթե առանց բացառության, տարբեր կարգավիճակ ունեցող տեղական ազնվականության ներկայացուցիչներ են, իսկ խուրրիական անուններ կրողները, սովորաբար, ավելի ցածր կարգավիճակ ունեն:

Այսպես, որպես Դամասկոսի իշխան հիշատակվում է Biriyawaza-ն (Knudtzon, 1915: N.197) (այս անվան երկրորդ բաղադրիչը՝ -waza-ն հմմտ. Միտաննիի արքա Šattiwaza-յի՝ խեթական արքա Սուպպիլուլիումաս I-ի ժամանակակցի անվան երկրորդ բաղադրիչի հետ), մեկ այլ տեքստում առկա է Դամասկոսի իշխան Ariwana-ն: Հեբրոնի իշխանը՝ Šuwardata (Knudtzon, 1915: NN. 280,287,289,290) եւ այլն: Վերոհիշյալ տեքստերում հիշատակվում են մեծաքանակ արիացիներ՝ ազնվականության այլ ներկայացուցիչներ, որոնց կարգավիճակը բնորոշվում է որպես mariyannu, մի տերմին, որը լավ վկայված է Միտաննիում (տե՛ս վերը՝ «Արիացիները Առաջավոր Ասիայում» ենթագլուխը): Սրանք մարտակառք վարող պրոֆեսիոնալ զինվորներ էին: Արիական են նաեւ Տաանախի եւ Մեգիդդոյի կառավարիչների անունները:

Արիացիները անհամեմատ ավելի մեծաքանակ էին Սիրիայի հյուսիսում, կենտրոնում եւ արեւելքում: Ինչ վերաբերում է արիացիների ու խուրրիների ակտիվ ներկայությանը Պաղեստինում, ապա դրա պատճառները միանշանակ չեն: Նրանք կարող էին ներթափանցել այսքան հարավ Միտաննիի կազմավորման շրջանում (մ.թ.ա.XVII-XVI դդ.), երբ նկատվում էր խուրրիների ու նրանց հետ հիշատակվող հնդիրանցիների տարածումը դեպի Առաջավոր Ասիայի շատ տարածաշրջաններ (տե՛ս վերը՝ «Խուրրիները Միջագետքում, Սիրիայում ու հարակից շրջաններում մ.թ.ա. III հազ. վերջերին – II հազ. սկզբներին» ենթագլուխը):

Խուրրիների ու արիացիների՝ Քանաանում հաստատվելու մասին տեղեկությունները այսքանով չեն սահմանափակվում: Այսպես, Եգիպտոսի Նոր թագավորության XVIII դինաստիայի նվաճող փարավոնների տեքստերը կարեւոր հիշատակություն են պահպանել խուրրիների եւ արիացիների բռնի վերաբնակեցման մասին մ.թ.ա. XIVդ. սկզբներին: Այսպես, XVIII դինաստիայի փարավոն Ամենհոտեպ II-ի տեքստում հիշատակվում են 36,300 խուրրիներ եւ 550 mariyannu-ներ՝ որպես նրա միտաննական արշավանքի ընթացքում ձեռքբերված ռազմագերիներ (Mazar, 1946: 9):

Ինչպես ճիշտ նկատել է Վ. Օլբրայթը, Պաղեստինում պարզ երեւում է արիական-խուրրիական սիմբիոզը, որը լավ վկայված է նույն ժամանակների Նուզիում, Միտաննիում եւ Հյուսիսային Սիրիայում: Ավելին, նրա կարծիքով, շատ դեպքերում խուրրիների անվան տակ աղբյուրները կարող էին հասկանալ նաեւ արիացիներին, քանի որ վերջիններս մշտապես ապրում էին խուրրիների հետ միասին (Albright, 1966: 14): Օրինակ, «Յոթնամատյանում» Շեխեմի եւ Ջիբեոնի հնդիրանցի իշխանները կոչվում են hor, այսինքն՝ «խուրրի»: Հնդիրանական անունների կողքին, անհամեմատ ավելի քիչ, հիշատակվում են նաեւ խուրրիական անուններ. օրինակ՝ ʻAbdi-Hapa (Երուսաղեմի կառավարիչ), որի երկրորդ բաղադրիչը համեմատելի է խուրրիական Hebat աստվածուհու անվան հետ:

Եզրակացություններ

Ատենախոսության երկրորդ գլխում քննարկված խնդիրների հետազոտությունը թույլ է տալիս կատարելու հետեւյալ եզրակացությունները:

1) Մ.թ.ա. III հազ. երկրորդ կեսին Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանների (հիմնականում Հայկական Տավրոսի ողջ երկայնքով) բնակչության շրջանում կարեւոր դեր ունեին խուրրիները, որոնք այստեղ ստեղծել էին մի շարք անկախ եւ կիսանկախ իշխանություններ: Մ.թ.ա. II հազ. սկզբներին, Ուրի III դինաստիայի անկման շրջանում եւ դրանից հետո խուրրիները սկսում են աստիճանաբար ծավալվել դեպի արեւմուտք եւ այնուհետեւ՝ հարավ: Արդեն մ.թ.ա. XVIII-XVII դդ. խուրրիների տեղաշարժային ալիքը ընդգրկում է Սիրիան եւ Քանաանը:
2) Սիրիայում եւ Քանաանում խուրրիների հետ միասին հաստատվում են հնդեվրոպացի արիացիները, որոնք դրանից որոշ ժամանակ ավելի վաղ շարժվել էին դեպի Հյուսիսային Միջագետք, ենթադրաբար, Ուրմիա լճի շրջանից:
3) Խուրրի-արիական տեղաշարժերի հետեւանք կարելի է դիտել մ.թ.ա. XVIIդ. կեսերին Եգիպտոսի նվաճումը հիքսոսների կողմից: Հիքսոսյան զանգվածը հիմնականում կարող էր բաղկացած լինել սիրիա-պաղեստինյան տարածաշրջանի սեմական բնակչությունից, որոնց, հավանաբար, առաջնորդում էին խուրրիները եւ արիացիները:
4) Սիրիայում, Քանաանում եւ Փոքր Ասիայում խուրրիները եւ արիացիները ստեղծեցին մեծաքանակ իշխանություններ, որոնցում գերիշխող դերը պատկանում էր արիացիներին: Եգիպտական, խեթական եւ այլ գրավոր աղբյուրները այստեղ հիշատակում են մի քանի տասնյակ արիացի կառավարիչների:

Գլուխ Երրորդ
Հյուսիսային Միջագետքը Եվ Աբրահամ Նահապետը

Հյուսիսային Միջագետքի տեղը Առաջավոր Ասիայի պատմության մեջ

Հյուսիսային Միջագետքը, ներառյալ ժամանակակից Սիրիայի հյուսիսը, կարեւորագույն դեր ուներ հին Առաջավոր Ասիայի քաղաքակրթությունների համակարգում: Սա այն տարածքն էր, որ միմյանցից

տարանջատում էր Փոքր Ասիան եւ Հայկական լեռնաշխարհը Միջագետքից ու Սիրիայից, միաժամանակ այս երկու խոշոր տարածաշրջանների կապող օղակ էր: Հայկական Տավրոսից հյուսիս ընկած բարձրադիր լեռնային եւ նախալեռնային աշխարհագրական ու բնակլիմայական գոտիները Հյուսիսային Միջագետքի միջոցով էին շփվում հարավի հարթ տափաստանային-անապատային շրջանների միջեւ: Այստեղով էին հոսում Առաջավոր Ասիայի երկու խոշորագույն գետերը՝ Եփրատը եւ Տիգրիսը, որոնք Հայկական Տավրոսի շրջանում եւ ավելի հարավ ներառնում էին մի շարք խոշոր վտակներ. Դիյալան, Մեծ եւ Փոքր Զաբերը՝ Տիգրիսի եւ Բալիխն ու Խաբուրը՝ Եփրատի: Ջրային պաշարների այս մեծ առատությունը, բարեխառն կլիման ու օգտակար հանածոների հանքավայրերը այս տարածքը դարձնում էին ցանկալի ինչպես տեղացիների, այնպես էլ հարեւանների համար: Իրավամբ Հյուսիսային Միջագետքը վերոհիշյալ երկու տարածաշրջանների միջեւ գոտի էր, որն ամփոփում էր երկուսի քաղաքակրթական-մշակութային արժեքները՝ կատարելով դրանց փոխանցողի դերը:

Հյուսիսային Միջագետքով էին անցնում ժամանակի բոլոր կարեւոր առեւտրական ուղիները, որի շնորհիվ այստեղի հասարակությունները շատ վաղ ժամանակներում զարգացման մակարդակով զգալիորեն առաջ էին անցել բոլոր հարեւաններից: Միաժամանակ Հյուսիսային Միջագետքը այն տարածքն էր, որտեղով անցնում էին ժողովուրդների տեղաշարժային ալիքները: Հնագույն ժամանակներում եւ միջնադարում սա այն շրջանն էր, որը ենթարկվում էր մերձավոր եւ հեռավոր հարեւանների հարձակումներին: Եկվորները ամբողջությամբ կամ մասնակիորեն հաստատվում էին այստեղ՝ ստեղծելով իրենց իշխանությունները, որոնք սովորաբար երկար չէին գոյատեւում: Գտնվելով հարավի կենտրոնացված խոշոր պետությունների եւ հյուսիսի, արեւմուտքի ու արեւելքի լեռնաբնակ ու տափաստանաբնակ ցեղերի ու ծողովուրդների միջեւ, ենթարկվելով նորանոր ներխուժումների ու ներգաղթերի ու չտիրապետելով բնական ամրությունների՝ իրենց տեղը զիջում էին նոր քաղաքական կազմավորումներին:

Վերոհիշյալ հանգամանքներն իրենց խոր հետքն են թողել Հյուսիսային Միջագետքի հասարակությունների էթնիկական նկարագրի վրա: Սկսած մ.թ.ա.III հազ., երբ հայտնվում են Միջագետքի սեպագրական աղբյուրները, որոնք հնարավորություն են ընձեռում ուսումնասիրելու Հյուսիսային Միջագետքի բնակչության լեզվական պատկանելությունը, այստեղ տեսնում ենք ամենատարբեր լեզուների կրողների: Սկզբում դրանք սուբարցիներն էին (տե՛ս ստորեւ), այնուհետեւ արդեն խուրրիները ու սեմիտները: Չնայած գրավոր աղբյուրների սակավությանը, նույն III հազ. այստեղ ենթադրելի է հնդեվրոպացի կուտիների ու լուլուբեյների ներկայությունը: Քիչ անց Հյուսիսային Միջագետքում հայտնվում են սեմական ժողովուրդները՝ աքքադցիները եւ ամորեյները: Մ.թ.ա. II հազ. սկզբներին հանդես են գալիս հնդեվրոպացի արիացիները եւ կասսիտները, նաեւ խուրրիների նոր ալիքը, որի արդյունքում կազմավորվում է Միտաննի պետությունը: Իսկ մ.թ.ա.II հազ. երկրորդ կեսին այստեղ մուտք են գործում սեմական-արամեական բազմաթիվ ցեղեր՝ ախլամու, տեմաննի, յաուրի եւ այլն, ինչպես նաեւ հյուսիսից՝ հնդեվրոպացի մուշկերը:

Վերը նշված ժողովուրդներն ու ցեղերն ընդամենը նրանք էին, որոնք հիշատակվում են գրավոր աղբյուրներում: Ակնհայտորեն, Հյուսիսային Միջագետքում տարբեր ժամանակներում բնակվել են նաեւ էթնիկական այլ խմբեր, որոնց գալստյան ժամանակը եւ անվանումը առայժմ հայտնի չէ: Այսպիսով, ակնհայտ է, որ Հյուսիսային Միջագետքը բազմազգ, բազմալեզու եւ բազմամշակույթ մի տարածք էր, որտեղ միմյանց հանդիպում էին ամենատարբեր ժողովուրդներ եւ մշակույթներ, ու որոնց փոխշփումները պետք է հանգեցնեին յուրատեսակ էթնիկական-մշակութային հանրության ձեւավորման: Ահա այս միջավայրն էր, որի հետ առնչվում էր ինչպես աստվածաշնչային նահապետների բնօրրանը, այնպես էլ հայոց ազգածագման խորենացիական առասպելի նախնական աշխարհագրական տարածքը (Հայկ նահապետը եւ նրա թոռ Կադմոսը):

Ստորեւ կներկայացնենք Հյուսիսային Միջագետքի՝ մ.թ.ա.III-II հազ. քաղաքական պատմության հիմնական փուլերը, որոնց հետ առնչվում են Հայկական լեռնաշխարհի ու Քանաանի միջեւ ընթացած տարբեր բնույթի փոխհարաբերությունները՝ միգրացիաներ, առեւտուր եւ այլն:

Սուբարտու եւ Արմանում

Սուբարտու տերմինը (գրվում է նաեւ Šubur, Subir) սկսում է հանդես գալ դեռեւս վաղ շումերական տարածաշրջանից: Շումերական առաջին քաղաք-պետություններից մեկի՝ Էրեդուի կառավարիչները ծագում էին Šubur երկրից, որը Սուբարտու-Սուբարուի գրության ձեւերից է (Gelb, 1944: 31,94ff.): Այդ ժամանակներից ի վեր Սուբարտուն կանոնավոր հիշատակվում է շումերական, աքքադական, Ուրի III դինաստիայի, ասորեստանյան եւ բաբելոնյան սեպագիր տեքստերում (դրանց համահավաքը՝ Ungnad, 1936; Gelb, 1944: 1ff.; Finkelstein, 1955: 1ff.):

Սուբարտուի տեղադրությունը մասնագետների շրջանում երկար տասնամյակներ վեճերի առարկա էր: Առաջին ուսումնասիրողներից մեկի՝ Ա. Ունգնադի կարծիքով (Ungnad, 1936: 4ff.,163), Սուբարտուն կազմել է մի շատ ընդարձակ տարածաշրջանի կենտրոնական մասը, որը Խաբուրի վերին հոսանքների շրջանում էր, այնտեղ, որտեղ հետագայում հիշատակվում է Միտաննիի մայրաքաղաք Վաշշուգաննեն (S.163). դա, ըստ նրա, էնեոլիթյան «Թել Խալաֆ» մշակույթի կենտրոնն է: Իսկ Սուբարտուի բնակիչները էթնիկական եւ մարդաբանական առումով տարածված էին ողջ Միջագետքում՝ ընդհուպ մինչեւ Միջերկրական ծով ու Կապադովկիա՝ արեւմուտքում ու Զագրոսի լեռներ՝ արեւելքում, հյուսիսում՝ ներառյալ Հայկական լեռնաշխարհը (S.194):

Ի. Գելբը (Gelb, 1944: 85f.) Սուբարտուն տեղադրում էր Տիգրիսից արեւելք ու Դիյալայից հյուսիս, արեւելքում այն ձգվում էր մինչեւ Զագրոսի լեռները ներառյալ: Այսինքն, Սուբարտուն համապատասխանում էր հետագա Ասորեստանի տարածքին:

Հետագա ուսումնասիրությունները էականորեն լրացրեցին Սուբարտուի վերաբերյալ գոյություն ունեցող տեղեկությունները: Ըստ այդմ, պարզվում է հետեւյալը:

Միջագետքյան աղբյուրներում Սուբարտու տերմինը կիրառվում էր երկու իմաստներով: Նեղ իմաստով այն իսկապես հետագա Ասորեստանի միջուկն էր կազմում, ինչպես ենթադրում էր Ի. Գելբը (Steinkeller, 1998: 77): Սակայն միեւնույն ժամանակ այն ուներ ավելի լայն իմաստ, որ առաջին անգամ վկայված է Աքքադի արքա Նարամսինի տեքստերում, այն է՝ ամբողջ Հյուսիսային Միջագետքը՝ Զագրոսից մինչեւ Ամանոսի լեռներ (նույն տեղում; նաեւ Մովսիսյան, 2005: 31-32): Սա մ.թ.ա. III հազարամյակում:

Իսկ մ.թ.ա. II հազ. Սուբարտուն նշանակում էր ավելի որոշակի աշխարհագրական տարածք՝ այսպես կոչված «Խաբուրի եռանկյունին», այն է՝ Տիգրիսի վերին հոսանքի եւ Բալիխի միջեւ, մասնավորապես Խաբուրի ավազանը (Steinkeller, 1998: 76): Այս տեսակետը ժամանակին առկա էր Ի. Գելբի եւ Է. Ֆոռերի մոտ (Forrer, 1928: 259; Gelb, 1944: 46):

Սուբարցիները սերտ փոխհարաբերությունների մեջ էին շումերական քաղաք-պետությունների, Աքքադի եւ Միջագետքի հետագա շրջանի պետությունների հետ: Դրանք, ժամանակ առ ժամանակ, կրում էին տեւական պատերազմների բնույթ, հատկապես, Աքքադի արքա Նարամսինի օրոք (մ.թ.ա. XXIIIդ.): Դատելով տեքստերից՝ Սուբարտուի բնակիչները սովորաբար իրենք էին նախահարձակ լինում:

Մոտավորապես մ.թ.ա. 2400թ. սահմաններում շումերական Լագաշ պետության արքա Էաննաթումը հիշատակում է Էլամի, Սուբարտուի եւ Ուրուայի զորքերի նկատմամբ Լագաշի սահմանների մոտ իր տարած հաղթանակը (Steinkeller, 1998: 78): Հետագայում էլ, Աքքադի պետության գոյության ընթացքում շատ են Սուբարտուի դեմ ռազմական գործողությունների հիշատակությունները: Մ.թ.ա. XXդ. կեսերին Ուրի III դինաստիայի հզոր պետությունը կործանվեց Սուբարտուի եւ Էլամի հարձակումների հետեւանքով (Kramer, 1940: 44):

Ովքե՞ր էին սուբարցիները. հարցն անհամեմատ ավելի բարդ խնդիր է, քան այս տերմինով բնորոշվող աշխարհագրական տարածքը:

Է. Սփայզերը, Ն. Մառի «հաբեթական տեսության» ազդեցությամբ, առաջարկում էր սուբարցիներին համարել Առաջավոր Ասիայի տարածքի մեծ մասը զբաղեցնող մի հնագույն ժողովրդի մասը, որը սեմական կամ հնդեվրոպական ծագում չուներ. Միջագետքի սուբարցիները կազմում էին «արեւելահաբեթական» ճյուղը (Speiser, 1930: 13ff.; 1933): Սրանց ներկայացուցիչներն էին էլամցիները,

խուրրիները, կուտիները, կասսիտները եւ այլն: Մոտավորապես միևնույն դիրքորոշումն ուներ Ա. Ունգնադը (Ungnad, 1936: 194), այն տարբերությամբ, որ «հաբեթական ժողովուրդներ» տերմինի փոխարեն նա գործածում էր «սուբարցիներ» տերմինը: Ի. Գելբը առաջինն էր, որ հստակ տարբերակում մտցրեց հետեւյալ խնդրում: Նա, հենվելով սուբարական լեզվական նյութերի հետազոտության վրա, համոզիչ փաստարկներով ցույց տրվեց, որ սուբարցիների լեզուն միանգամայն տարբեր է խուրրիերենից (Gelb, 1944: 100ff.):

Թերեւս, զգալիորեն չափազանցված է այն կարծիքը, ըստ որի մ.թ.ա. 2400թ. սահմաններում Սուբարտուի բնակչությունը գերազանցապես սեմական է եղել, հագեցած որոշ էլամական տարրերով (Steinkeller, 1998: 88f.): Անշուշտ, Սուբարտուի տարածքում կարող էին լինել որոշ քանակությամբ նոր եկած սեմական ցեղեր, սակայն դրանց ներկայության հիմնական վկայությունը Էբլայի տեքստերն են, որոնցում արտացոլված տեղանունների մի մասը հստակ չի տեղորոշվում, ինչպես նաեւ վերջերս հայտնաբերված Թել Բեյդար հնավայրի սեպագիր տեքստերը (Ismail, Sallaberger, Talon and van Lerberghe, 1996), որը կարող էր լինել սեմական կղզյակ (անկլավ) այլ էթնիկական զանգվածի մեջ:

Հաջորդ՝ մ.թ.ա. II հազ. բնակչության էթնիկական կազմում լուրջ փոփոխություններ տեղի ունեցան: Առաջին անգամ Նարամսինի տեքստերում հայտնվում են խուրրիական անուններ, որոնց կրողները բնակվում էին Սուբարտուում (այս մասին տե՛ս Գլուխ Երկրորդ. «Խուրրիները Միջագետքում, Սիրիայում եւ հարակից շրջաններում մ.թ.ա. III հազ. վերջերին – II հազ. սկզբներին» ենթագլուխը): Հենց Նարամսինի տեքստերից մեկում է հիշատակվում առաջին խուրրիական քաղաքական միավոր Ազուխինումը, որի կառավարիչը խուրրիական անուն կրող Տախիշատիլին էր (Steinkeller, 1998: 91; Salvini, 1998: 7ff.): Այս պահից ի վեր Սուբարտուի եւ ընդհանրապես Հյուսիսային Միջագետքի բնակչության զգալի մասը ըստ էության կազմում էին խուրրիները: Արդեն մ.թ.ա. 2000թ. սահմաններում Հյուսիսային Միջագետքը հիմնավորապես խուրրիականացել էր: Անհրաժեշտ է արձանագրել, որ սուբարցիների լեզվի ուսումնասիրությունները, լեզվական նյութերի սակավության պատճառով, հնարավորություն չեն ընձեռում պարզելու դրա պատկանելությունը գիտությանը հայտնի որեւէ լեզվի կամ լեզվախմբի:

Սուբարտուի հետ անխզելի կապի մեջ է մ.թ.ա. III-II հազ. տեքստերում հիշատակվող Արմանում (Armanum) երկիրը: Այն սկսում է հայտնվել սեպագրական աղբյուրներում Աքքադի թագավորության ժամանակներից: Աքքադի արքա Նարամսինը հայտնում է, որ Արմանումը մեկն էր այն երկրներից, որոնք նվաճվել էին իր կողմից (Smith, 1928: 275 I 7ff.,17ff., III 4ff.): Այստեղ, որպես Արմանումի արքա, հիշատակվում է Ռիշ-Ադադը (Riš-Adad) (Gelb, 1935: 6): Նարամսինի պատերազմների մասին պատմող՝ խեթական մայրաքաղաք աթթուսասից հայտնաբերված մի տեքստում (Forrer, 1922: N.3) Արմանումը ներկայացված է որպես մեկը արքայի նվաճած 17 երկրներից Արմանումի արքան էր Մադակինան (Madakina): Վերջինիս անունը գերազանցապես ընթերցվում է այսպես (Forrer, 1922; Hrozny, 1929: 71; Gelb, 1935: 6; GƑterbock, 1938: 68), չնայած, ինչպես նշում էր Ի. Գելբը (Gelb, 1944: 103 n.48), անվան գրության մեջ ki նշանի փոխարեն առկա է di-ն (այսինքն գրված է Ma-da-di-na):

Երկու դեպքում էլ Արմանումը հիշատակվում է Էբլայի հետ կողք կողքի, որը այս երկրի տեղադրման հիմնական կռվաններից է: Այդ է պատճառը, որ առաջին ուսումնասիրողներից մինչ օրս դեռեւս Արմանումի տեղադրման խնդիրը վերջնականապես լուծված չէ: Հ. Գ. Գյուտերբոկի կարծիքով, Էբլայի հետ հիշատակությունը պարտադիր չէ, որ դրա եւ Արմանումի հարեւանության վկայությունը լիներ: Նարամսինի տեքստում կարող էին հիշատակվել ընդամենը արքայի առավել կարեւոր նվաճումները: Նա, որպես Արմանումի համարժեք, նշում էր Ասորեստանի արքաներ Ադադնիրարի I-ի (մ.թ.ա. XIVդ. վերջ-XIIIդ. սկիզբ) եւ Թիգլաթպալասար I-ի (մ.թ.ա. 1114-1077թթ.) կողմից հիշատակվող Արման (Arman) քաղաքը, որն ընկած էր Աքքադի եւ Լուլլուբումի միջեւ, այսինքն՝ Հյուսիսային Միջագետքում (GƑterbock, 1938: 73f.): Նրա հետ համակարծիք էր Ի. Գելբը (Gelb, 1944: 103):

Սակայն, հետագա ուսումնասիրություններում մասնագետները սկսեցին հակվել Արմանումի սիրիական տեղադրության օգտին: Քանի որ Էբլան Հալեպից ոչ հեռու էր, իսկ վերջինիս անվան գրության ձեւերից էր Halman-ը, ապա Armanum-Halman հնչյունական նմանության հիմքի վրա (l:r հերթագայության արդյունքում) ենթադրվեց, որ Արմանումը կարող էր լինել հենց Հալեպը, որով էլ Էբլա-Արմանում զույգը Նարամսինի տեքստերում իր համապատասխան բացատրությունն էր

ստանում (տե՛ս, օրինակ, Sollberger, Kupper, 1971: 107f.; Matthiae, 1977: 192; Гарелли, 1985: 256рս.): Վերջին շրջանի հետազոտողներից Էբլայի Armi եւ աքքադական աղբյուրների Armanum համադրությունը չի ընդունում Պ. Ֆրոնձարոլին (Fronzaroli, 1977: 145ff.):

Անհրաժեշտ է նշել հայ ուսումնասիրող Ա. Մովսիսյանի տեսակետը, որը հենվում է Արմանում աշխարհագրական տերմինի՛ ցայսօր հայտնի բոլոր վկայությունների քննության վրա (Մովսիսյան, 2005: 32-42): Նրա կարծիքով, տարբեր աղբյուրներում Արմանում - Արմի - Արմե ձեւերով նշվող երկիրը ոչ միայն տարածվել է Հայկական լեռնաշխարհի հարավային եւ արեւմտյան սահմանների երկայնքով, այլեւ ներառել այն:

Աստվածաշնչային տեղեկությունները հրեաների ծագման վերաբերյալ

Աշխարհի շատ ժողովուրդների պես հրեաների ծագման վերաբերյալ պահպանվել են տեղեկություններ Սուրբ Գրքում: Քանի որ ատենախոսության նպատակը հրեաների ծագման խնդրի հիմնավոր ուսումնասիրությունը չէ, ապա այստեղ միայն համառոտակի ներկայացնենք այն, ինչպես առկա է Աստվածաշնչում: Սակայն նշենք նաեւ, որ ներկայումս մասնագետների կողմից գործածվող Աստվածաշունչը մեզ է հասել ոչ իր նախնական տեսքով, այլ որոշակիորեն ժամանակի ընթացքում դրա մեկնաբանների խմբագրումների արդյունք է: Դրրանով էլ պայմանավորված են Սուրբ Գրքում հրեա ժողովրդի պատմության «նահապետական փուլի» վերաբերյալ առկա երբեմն հակասական տեղեկությունները: Վաղուց ի վեր նկատվել էր, որ Աստվածաշնչի սկզբում պահպանվել են հրեաների՝ Իսրայել գալու վերաբերյալ երեք ավանդույթներ (Sharpe, 1890: 1):

1) Հրեաների նախահայր Աբրահամի տոհմը Եփրատի հոսանքների շրջանում գտնվող քաղդեացիների երկրից սկզբում եկել էր Սիրիա, այնուհետեւ՝ Քանաան, բնակություն հաստատելով Հեբրոնի մոտ՝ ընդունելով այստեղ ապրող խեթերի գերիշխանությունը (Ծննդոց 12; 13): Քանաանից հետո հիշատակվում է Աբրահամի կարճատեւ բնակությունը Եգիպտոսում, սակայն, հնարավոր է, դա ուշ ժամանակների խմբագրում լինի:
2) Հրեաները նախապես բնակվել են Սիրիայում, այնուհետեւ գաղթել են եւ, հասնելով Հորդանան գետի ափերը, բաժանվել երկու խմբի: Առաջին խումբը Հակոբի գլխավորությամբ բնակություն է հաստատել Քանաանի հյուսիսում՝ Շեխեմի (= ժաման. Նաբլուս) մոտ (Ծննդոց 33.18), իսկ երկրորդը՝ Եսավի գլխավորությամբ գնացել է հարավ՝ Հեբրոնից այն կողմ եւ բնակություն հաստատել Էդոմում՝ Սեիրի մոտ (Ծննդոց 36.8-9; Հեսու 24.4):
3) Հետագայում, հյուսիսում բնակվող հրեաները շարժվել են հարավ, հասել Ստորին Եգիպտոս (= Նեղոսի Դելտա - Հ.Ա.): Այստեղ նրանք հանդիպել են իրենցից ավելի քաղաքակիրթ եւ հզոր բնակչության ու ընդունել նրանց գերիշխանությունը: Հետո հրեաների սերունդները Եգիպտոսից հեռացել են, Հորդանան գետի արեւելյան ափին նվաճել են ամորեյներին, որից հետո գնացել են Քանաանի հյուսիս: Այստեղ նրանք օգնել են իրենց ազգակիցներին՝ տեղացիների դեմ կռիվներում եւ դարձել Քանաանի տերերը:

Ինչպես տեսնում ենք, երեք տարբերակներն էլ միմյանց հետ շփման եզրեր ունեն՝ 1) հրեաները եկվոր են (Աբրահամը՝ քաղդեացիների երկրից, Հակոբը՝ Սիրիայից), 2) Քանաանից հետո շարժումը դեպի Եգիպտոս եւ վերադարձը Քանաան (Աբրահամը՝ կարճատեւ, Հակոբի տոհմը՝ մի քանի սերունդ տեւողությամբ): Անհրաժեշտ ենք համարում նշել, որ բոլոր դեպքերում հրեաներն իրենց համարում էին ոչ տեղաբնիկ Քանաանում: Այսպես, Աստվածաշնչում ամենուրեք հիշատակվում են մեծաքանակ ժողովուրդներ եւ ցեղեր, որոնք ապրում էին Քանաանում նախքան նահապետների գաղթը այս երկիր: Դրանք էին՝ քանաանցիները, խեթերը, ամորեյները, փերիզացիները, խեւացիները, յեբուսացիները եւ այլք (Դատավորաց 3.1-6): Ոչ պակաս կարեւոր է նաեւ այն տեղեկությունը, ըստ որի հրեաների ու տեղացիների միջեւ, բացի առանձին դեպքերից, գոյություն ունեին հիմնականում բարիդրացիական հարաբերություններ. շատ են խառը ամուսնությունների մասին հիշատակությունները: Այսինքն, հրեական ցեղերը, Քանաան գալով, բնակություն են հաստատել տեղական ցեղերի հարեւանությամբ, շփվելով վերջիններիս հետ:

Քանաանում հրեաների հայտնվելու եղանակի վերաբերյալ նախկինում գերիշխում էր նվաճման մասին տեսակետը, որը հենվում էր «նահապետական փուլին» նվիրված հատվածներում նրանց եւ

տեղացիների միջեւ վկայված բախումների հիշատակությունների վրա: Սակայն հետագայում մասնագետները որդեգրեցին ավելի իրատեսական դիրքորոշում, որը այսօր գրեթե համատարած ընդունելություն է գտել:

Այսպես, Ա. Ալտի եւ Մ. Նոտի կարծիքով (Alt, 1925; Noth, 1969 եւ այլն), հրեաները Քանաան են եկել ոչ որպես նվաճողներ, այլ խաղաղ ճանապարհով: Նրանք անասնապահությամբ զբաղվող ցեղեր էին, որոնք բնակեցրել էին Քանաանի սակավաբնակ շրջանները: Այս ներթափանցումը ուղեկցվել էր տեղական նշանակության բախումներով, որը եւ հիմք է տվել հրեաների «Ելքի» մասին պատմությանը: Այս սխեմայից զգալիորեն շեղվել են Գ. Մենդենհալը եւ այլք (Mendenhall, 1962; նաեւ Gottwald, 1979): Նրանք համարում էին, որ հրեաները չէին եկել դրսից, այլ իրականում միշտ ապրել են Քանաանում: Այստեղի գյուղացիական բնակչությունը ապստամբել է իր տերերի դեմ եւ հեռացել երկրի ծայրամասային շրջաններ: Հետո նրանք հարաբերվել են անհնազանդ, ավազակային կենցաղ վարող habiru-ների հետ, որի արդյունքում էլ դրվել է վաղ իսրայելական հասարակության հիմքը:

Աբրահամ նահապետի տոհմը, դրա տեղայնացումը եւ ժամանակագրությունը

Հրեաների նախահայր Աբրահամ նահապետի նախնական բնակության վայրի եւ ժամանակի վերաբերյալ Աստվածաշնչում հիշատակվող տեղեկությունների մեկնաբանության խնդիրը մասնագետների շրջանում վաղուց ի վեր թերեւս առավել վիճահարույցներից է: Այս խնդիրները մեծաքանակ մասնագետների հետազոտության առարկա են դարձել եւ դեռ այսօր էլ շարունակում են մնալ ուշադրության կենտրոնում (Ainstworth, 1838: 152f.; Albright, 1921: 49ff.; 1922: 110ff.; 1924: 125ff.; 1926a: 231ff.; 1932; 1942: 33ff.; BΦhl, 1924: 148ff.; Woolley, 1936; O'Callaghan, 1948: 119ff.; Biemson, 1978; Moorey, 1982; Isserlin, 1983: 85ff.; Gerber, 2001: 145ff. եւ այլն): Ուսումնասիրողները դեռեւս ընդհանուր հայտարարի չեն եկել ոչ մեկի, ոչ էլ մյուսի հարցում:

Ավանդական տեսակետի համաձայն, որ բխում է Աստվածաշնչի տեղեկություններից (Ծննդոց 11. 31), Աբրահամը ծագում էր հարավային Միջագետքից՝ քաղդեական Ուր քաղաքից: Այնուհետեւ, նա իր ընտանիքի հետ միասին գնացել է Հյուսիսային Միջագետքի Խառան քաղաք, որտեղից էլ՝ Քանաան: Աստվածաշնչի երկու հատվածներում Խառանը հիշատակվում է որպես Աբրահամի՝ դեպի Քանաան ուղեւորության մեկնակետ (Ծննդոց 11.32 և 12.5): Այստեղ էր ապրում Աբրահամի ազգական Լաբանը: Իսկ այլ հատվածներում Լաբանը տեղադրվում է Պադդան-Արամում (Ծննդոց 25.20; 28.1-7;31.18), ինչպեսեւ՝ Նախոր (Նախուր) քաղաքում (Ծննդոց 24.100), որը գտնվում էր Խառանի մոտ ընկած Բալիխ գետի հովտում: Աբրահամի տոհմի խառանյան աղերսներն այնքան ակնառու են, որ հիմք են տալիս կասկածի տակ առնելու Հարավային Միջագետքի Ուր քաղաքի՝ գերիշխող վարկածը:

Դեռեւս XIX դարի առաջին կեսին որոշ մասնագետներ (Ainsworth, 1838: 152f.; Ritter, 1844: 294ff. եւ այլն), հենվելով աստվածաշնչային, վաղ քրիստոնեական, եբրայական եւ մուսուլմանական ավանդությունների վրա, եկան այն եզրակացության, որ Աբրահամի տոհմի նախնական բնակության վայրը հյուսիսային Միջագետքն էր եւ որ Աստվածաշնչում որպես նրա հայրենի քաղաք հիշատակվող Ուրը հյուսիսային Միջագետքի Ուրֆա քաղաքն էր: Սակայն, 1854թ. հարավային Միջագետքում հնագետները հայտնաբերեցին շումերական Ուր քաղաքը, որը հետագայում հայտնի հնագետ Լ. Վուլլին առաջարկեց համարել Աբրահամ նահապետի հայրենիք (Woolley, 1936): Լ. Վուլլիի ազդեցությամբ մասնագետների մեծ մասը շարունակում է հետեւել այս տեղայնացմանը (օրինակ, Larsen, 1975; Soggin, 1997: 189; Millard, 2001): Այնինչ Աբրահամի գործունեությանն առնչվող աստվածաշնչյան տեղեկությունները հակասում էին դրան:

XX դարում առաջիններից մեկը Ս. Գորդոնն էր, որը հիմնավոր կասկածներ հայտնեց հարավային Ուրի հարցում եւ ձեւակերպեց նոր տեսակետ (Gordon, 1958: 28ff.): Նրա կարծիքով, «քաղդեական» մակդիրը վերաբերում էր ոչ թե հարավային Ուրին, այլ Քսենոփոնի կողմից հիշատակվող՝ Հայկական լեռնաշխարհի հարավում գտնվող՝ հայերի հարեւան խալդայներին (Քսենոփոն, Անաբասիս IV.3.4; Կյուրոպեդիա III.1.34): Եվ, քանի որ Աստվածաշնչի մեկնաբանները կարող էին ծանոթ չլինել այս հյուսիսային խալդայներին, նրանք Աբրահամի հայրենիքը փոխադրել էին հարավ: Սակայն հեղինակը, այնուամենայնիվ, վկայակոչելով Սբրահամի, Հովսեփի եւ այլ նահապետների գործունեության վերաբերյալ այն տեղեկությունները, որոնք նշում են առեւտուրը, եզրակացնում էր, որ Աբրահամը

պետք է ծագեր Կիլիկիայի Ուրա առեւտրական քաղաքից, որը լավ հայտնի է մ.թ.ա.XV-XIIIդդ. խեթական սեպագիր տեքստերից: Այս տեսակետը այժմ արդեն աստիճանաբար մուտք է գործում մասնագիտական հրատարակություններ, իհարկե, ոչ ամբողջությամբ, այլ միայն Ուրֆայի մասով (օրինակ, Gerber, 2001: 145ff.):

Ստորեւ կփորձենք ներկայացնել Նահապետի նախնական բնակավայրի խնդրին առնչվող նյութերը, որոնք վերցված են հինարեւելյան սեպագիր աղբյուրներից, որոնց հիման վրա կկատարվեն համապատասխան եզրակացություններ:
1) Մ.թ.ա. XXIII-XXIIդդ. Հյուսիսային Սիրիայի Էբլա քաղաք-պետության տեքստերում հիշատակվում է Ura, Ura'u, Uram, Uri'um, Urru քաղաքը, որը Էբլայի մերձավորությամբ էր (Bonechi, 1993: 310ff.):
2) Նույն տարածաշրջանի Ալալախի սեպագիր տեքստերում (Wiseman, 1953: Ns.105,162), որ թվագրվում է մոտավորապես մ.թ.ա.1600թ., հիշատակվում են Ure, Urri, Ura անունով բնակավայրեր:
3) Հյուսիսային Միջագետքի Նուզի խուրրիաբնակ քաղաքի արխիվներից հայտնի են «մեծ» եւ «փոքր» Ure քաղաքները (Fincke, 1993: 332):
4) Խեթական սեպագիր տեքստերին լավ հայտնի էր Ura կարեւոր առեւտրական քաղաքը, որ գտնվում էր կիլիկյան ծովափին (del Monte und Tischler, 1978: 457f.):
5) Մեկ այլ Ura հիշատակվում է Սիրիայի հյուսիս-արեւելյան ծովափից ոչ հեռու գտնվող Ուգարիտ (ժաման. Ռաս Շամրա հնավայրը) պետության շրջանում (Wiseman, 1953: Nr.142,154):
6) Խեթական տեքստերին հայտնի էին, բացի կիլիկյան Ura-յից, եւս երկուսը. մեկը՝ Հայասայում՝ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արեւմուտքում (del Monte und Tischler, 1978: 457f.; Քոսյան, 2004: 100-101), մյուսը ենթադրաբար կենտրոնական Փոքր Ասիայում՝ խեթական մայրաքաղաք Խաթթուսասից ոչ հեռու (Kammenhuber, 1970: 556f.):
7) Մեկ այլ Ura հիշատակվում է Ասորեստանի արքա Թիգլաթպալասար III-ի տեքստերից մեկում (Kessler, 1980: 179; Tadmor, 1994: 76,126,184):
8) Մ.թ.ա.XIXդ. միջագետքյան սեպագիր տեքստերից մեկում հիշատակվում է Տիգրիսից արեւմուտք՝ Խաբուրի ափին գտնվող Ur քաղաքը (Groneberg, 1980: 247):

Ինչպես տեսնում ենք, սեպագրական աղբյուրները տեղեկություններ են պահպանել մեծ թվով տեղանունների վերաբերյալ, որոնք գրեթե նույնահունչ են, չնայած տեղադրվում են Առաջավոր Ասիայի տարբեր շրջաններում: Վերը հիշատակված բնակավայրերից 1, 2, 4, 5-ը իրականում կարող էին նշել միեւնույնը, չնայած բացառված չէ, որ դրանք տարբեր էին:

Աբրահամի տոհմի նախնական բնակության վայրի տեղայնացման հարցում հնարավոր է այլ լուծում: Ստորեւ ներկայացնենք մեր նկատառումները հարավային Ուրի թեկնածության դեմ եւ մեկ այլ Ուրի օգտին:

Ըստ քրիստոնեական, եբրայական եւ մուսուլմանական ավանդույթների, առանից 14կմ հեռու գտնվող Ուրֆա քաղաքը (անտիկ աղբ. Եդեսիա, հայկ. Ուռհա, ժաման. Սանլըուրֆա) կառուցվել էր հին Ուրի ավերակների վրա: Ավանդույթը քաղաքի հիմնադիր է համարում առասպելական արքա Նիմրոդին: Իսլամական լեգենդը այս վայրը կապում է Աբրահամ նահապետի հետ. Ուրֆայի միջնաբերդից ցած գտնվող քարանձավը համարվում է Աբրահամի ծննդավայր: Այստեղ են գտնվում «Աբրահամի ջրավազանը», «Հակոբի աղբյուրը»: Այս վերջինը, ըստ Աստվածաշնչի, այն վայրն էր, որտեղ Հակոբը հանդիպել էր Ռաքելին, որտեղ Ռեբեքան (Իսահակի կինը) քար էր գցել Աբրահամի ծառայի վրա: Հարավային կամ հյուսիսային Ուրի ընտրության հարցում կարեւոր նշանակություն ունի Միջագետքի լուսնի աստծո՝ Սինի խնդիրը: Հայտնի է, որ հարավային Ուրը Սին աստծո պաշտամունքի կենտրոնն էր: Ըստ Աստվածաշնչի (Հեսու 24.2), Աբրահամի հայր Տերախի (հայալեզու հրատարակություններում Թարա) կերպարը կապված է լուսնի պաշտամունքի հետ: Հնարավոր է, նույնը կարելի է պնդել Լաբանի, Միլկախի եւ Սառայի մասին:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ նույնպիսի կարեւորագույն պաշտամունքային կենտրոն էր Խառանը՝ սկսած մ.թ.ա. II հազ. սկզբներից (O'Callaghan, 1948: 28f.; Millard, 2001): Խառանի լուսնի աստվածը իր գործառույթը պահպանում էր նույնիսկ մ.թ.ա. I հազ. կեսերին: Մասնավորապես, այն բազմիցս հիշատակվում է Փոքր Ասիայի եւ Հյուսիսային Սիրիայի մ.թ.ա. X-VIIIդդ. հիերոգլիֆային լուվիական արձանագրություններում՝ որպես Armas (սա Սին աստծո խեթերեն ձեւն է) (Meriggi, 1962: 32):

Անհրաժեշտ է նշել, որ Խառանի շրջակայքի օգտին է վկայում մի կարեւոր փաստ: Բանն այն է, որ Աբրահամի նախնիների անունները պահպանվել են այս տարածքի տեղանուններում: Դրանք են՝ Սերուգ (Աբրահամի նախապապը), Նախոր (Աբրահամի պապը) եւ Տերախ (Աբրահամի հայրը):

Սրանցից Նախորի անունը հստակ առնչվում է սեպագրական աղբյուրներում բազմիցս հիշատակվող Nahur քաղաքի անվան հետ: Նախուրը վկայված է հին բաբելոնյան, կապադովկիական, միջին ասորեստանյան եւ ուշ ասորեստանյան տեքստերում (Bilgiç, 1945-51: 34; Groneberg, 1980: 173; Nashef, 1982: 201; Gerber, 2001: 149 Anm.34 եւ այլն): Համաձայն ընդունված կարծիքի (Nashef, 1991: 86), Նախուրը գտնվել է Հյուսիսային Միջագետքի ժամանակակից. Tell ‘Amuda բնակավայրի մոտ՝ թուրք-սիրիական սահմանի վրա, այսինքն, Խառանից ոչ հեռու: Նախուրը առաջարկվել է նույնացնել Հայկական լեռնաշխարհի հարավ-արեւմուտքում գտնվող Նիխրիյա, Նիխիրիյա քաղաքի հետ, որը լավ վկայված է միջագետքյան եւ խեթական սեպագիր տեքստերում որպես Իսուվա (= հայկ. Ծոփք) պետության կարեւոր բնակավայրերից մեկը (Moisheson, 2001: 44):

Աբրահամի հոր՝ Տերախի անունը համադրվել է Հյուսիսային Միջագետքի Terqa քաղաքի հետ (Moisheson, 2001: 43ff.): Ի. Մոյշեսոնի կարծիքով, այս քաղաքանունը ծագում էր Աքքադի պետությունը մ.թ.ա. XXIIIդ. նվաճած հնդեվրոպացի կուտիների վերջին արքա Տիրիկկանի անունից: Այս եւ միջագետքյան տեքստերում հիշատակվող Turukki, Tukrish ցեղանվան եւ տեղանվան հիմքում ընկած է հնդեվր. «սայլ, կառք» բառը: Ք. Գերբերը հակված է Տերախի անվան ասորեստանյան համարժեք դիտելու Til ša Turahi բնակավայրը (Gerber, 2001: 149): Ինչ վերաբերում է Սերուգի անվանը, ապա առաջարկվել է այն համադրել Ուրֆայի եւ Բիրեջիկի միջեւ ընկած ժաման. Սուրուչ բնակավայրի հետ (Idem):

Վերոհիշյալ համադրումները թույլ են տալիս եզրակացնելու, որ աստվածաշնչյան պատմությունը Աբրահամի տոհմի անդամների անունների տակ նկատի է ունեցել Հյուսիսային Միջագետքից դեպի Քանաան ընթացած արտագաղթի ելակետերը:

Աբրահամ նահապետի՝ Միջագետքի Խառան քաղաքից Քանաան գնալու ժամանակի հարցում նույնպես առկա են մեծ տարաձայնություններ: Ուսումնասիրողները այդ իրադարձությունը հիմնականում առաջարկել են թվագրել մ.թ.ա. II հազ. տարբեր հատվածներում: Առկա տեսակետներում, որպես ելակետ եւ հիմնական փաստարկ հանդես է գալիս նահապետական փուլը ներկայացնող Ծննդոց գրքում հիշատակվող անձանց եւ նրանց հետ առնչվող երկրների ու բնակավայրերի անունների համադրումը այլ աղբյուրներից հայտնի պատմական գործիչների հետ: Այսպես, Վ. Օլբրայթը Ծննդոց գրքի 14.1-ում հիշատակվող «Էլամի արքա Խեդորլաոմերին» համադրում էր սեպագրական աղբյուրներում վկայված Էլամի արքա Կուտեր-Նախխունտե I-ի (մ.թ.ա.1625-1610թթ.[հին թվագրությամբ]) հետ (Albright, 1942: 33ff.): Դրա հիման վրա Ծննդոց գրքի 12-50 հատվածը, այն է՝ Աբրահամի՝ Քանաան ուղեւորվելու պահից մինչեւ Հովսեփի մահը առաջարկում էր տեղադրել մ.թ.ա. 1700-1550թթ. միջեւ: Ավելի վաղ նույն հեղինակը Ծննդոց գրքի 14.1-ում «Սեննաարի արքա Ամրափելին» նույնացնում էր Բաբելոնի հայտնի արքա Համմուրապիի հետ (Albright, 1924: 125ff.): Իր մեկ այլ աշխատության մեջ Վ. Օլբրայթը Աբրահամի գործունեությանն առնչվող Սոդոմի եւ Գոմորի ավերման դիպվածը առաջարկում էր տեղադրել վաղ բրոնզեդարի երկրորդ կեսում (Albright, 1932: 140ff.):

Ֆ. Բյոլը Աբրահամին համարում էր խեթական արքա Թուդխալիյաս I-ի ժամանակակիցը (մ.թ.ա. XVIIդ. հին թվագրությամբ) (BՓhl, 1924: 148ff.): Հետագայում նա առաջարկեց նոր համադրություններ. օրինակ, որ Ամրափելը Համմուրապին չէր, Աբրահամը պետք է ապրած լիներ մ.թ.ա. XVIդ., իսկ հրեաների ելքը Եգիպտոսից անհրաժեշտ է թվագրել մ.թ.ա. XIIIդ. (BՓhl, 1930: 31ff.): Այս թվագրությունները հիմնականում ընդունվեցին Վ. Օլբրայթի կողմից (Albright, 1931-32: 197f.): Ռ. Օ’Քալլաղանը առաջարկում էր ավելի ընդհանրական թվագրություն մ.թ.ա. II հազ. առաջին կեսում (O’Callaghan, 1948: 29):

Ի. Մոյշեսոնը հակված էր ավելի վաղ թվագրման՝ Ուրի III դինաստիայի վերջին շրջանում՝ մ.թ.ա. XXIդ. երկրորդ կես (Moisheson, 2001: 158): Նրա կարծիքով, Հակոբի վերադարձը Քանաան արտացոլված է եգիպտական աղբյուրներում որպես հիքսոսների արշավանքը Եգիպտոս:

Այսքանով սահմանափակելով նահապետական փուլի թվագրման շուրջ առկա կարծիքների տեսությունը՝ անհրաժեշտ է նշել, որ դրանց հիմքում ընկած է Ելից գրքի 12.40-ի տեղեկությունը այն մասին, որ «Իսրայելի որդիները» Եգիպտոսում մնացել են 430 տարի: Եվ քանի որ ելքը Եգիպտոսից սովորաբար թվագրվում է մ.թ.ա. XIIIդ., ապա ենթադրվում է, որ հրեաների նախնիները պետք է հայտնվեին Եգիպտոսում ոչ ուշ, քան XVIIդ. եւ որ Քանաան մուտք գործելու ժամանակը հազիվ թե շատ ավելի վաղ փուլում տեղի ունենար:

Վերոհիշյալ տեսակետները, որքան էլ որ բանավեճային են, այնուամենայնիվ առայժմ գերիշխում են եւ կարելի է համարել ընդունելի, որ իսկապես Աբրահամի տեղաշարժը Քանաան պետք է տեղ գտներ մ.թ.ա. XVIII-XVIIդդ. ընդգրկող ժամանակաշրջանում:

Մեր կարծիքով, նահապետական փուլի թվագրման եւ ընդհանրապես հրեաների կազմավորման վաղ շրջանի գնահատմանը մեծապես կարող է նպաստել Աբրահամի եւ նրա անմիջական հաջորդների (Իսահակ, Հակոբ եւ այլն) գործունեության տիպաբանական բնութագիրը: Վերջինիս բնորոշումը հնարավոր է նրանց կենսագործունեության բոլոր դիպվածների վերհանման, աշխատանքային գործունեության առանձնահատկությունների, այլոց հետ շփումների եւ այլ չափանիշների միջոցով: Ստորեւ կներկայացնենք այդ վերլուծության արդյունքները, որը թույլ կտա պարզելու Աբրահամի առնչակցությունը դեպի Քանաան մ.թ.ա. II հազ. ընթացքում տեղի ունեցած էթնիկական տեղաշարժերին եւ հարակից հարցեր:

Աբրահամ.
Շփումներ –
1) Եգիպտոսի փարավոն (Ծննդոց 12.16-20)
2) Սոդոմի, Գոմորի, Ադմայի, Զեբոիմի, Բելայի եւ Սալեմի արքաներ (Ծննդոց 14.1-21)
3) Գերարի արքա Աբիմելեխ (Ծննդոց 20.1-18; 21.22-34)
Գույք –
1) Փարավոնից ստացավ անասուներ եւ ծառաներ (Ծննդոց 12.16)
2) Շատ հարուստ էր՝ ուներ անասուններ, ոսկի եւ արծաթ (Ծննդոց 13.2)
3) Իր տանը ծառայող 318 զինյալներ ուներ (Ծննդոց 14.14)
4) Նա Հեբրոնի բնակիչներից գնում է դաշտ եւ քարանձավ՝ վրճարելով 400 սիկլ արծաթ (Ծննդոց 23.14-20)
Ռազմական գործ –
Արշավանք Սեննաարի, Էլլասարի, Էլամի եւ Գոյիմի արքաների դեմ (Ծննդոց 14.15-16)
Կարգավիճակը - Իշխան, որը Հեբրոնի խեթերի համար ամենահայտնին էր (Ծննդոց 23.3-6):

Նույնիսկ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Աբրահամի գործունեությունը եւ կերպարը Աստվածաշնչի կազմողների կողմից պետք է հարմարեցվեր իրենց առանցքագաղափարին, այնուամենայնիվ վերոհիշյալ բնութագրիչները կարող են ընդհանրական պատկերացում տալ Նահապետի միջոցով ներկայացվող իրավիճակի մասին:

Խառանից հետո Աբրահամը Քանաանում շարունակ տեղաշարժվում էր, հետո նա հայտնվում է Ազիպտոսում, այնուհետեւ՝ կրկին Քանաան, որտեղ չի հիմնավորվում ինչ-որ մի վայրում: Որքան էլ որ մի շարք դեպքերում նշվում է նրա՝ վրանում բնակվելու, անասնապահությամբ զբաղվելու մասին, դա անհրաժեշտ է ընդունել որպես արդեն մ.թ.ա. I հազ. սկզբների Քանաանի հրեաների համար հոգեհարազատ կենցաղին հարմարեցնելու միտում: Որ Աբրահամը եւ նրա ուղեկիցները ամենեւին քոչվոր կամ կիսաքոչվոր անասնապահներ չէին, պարզ է նրանց գործունեությունը բնութագրող դրվագներից:

Աբրահամը լիարժեք մասնակցում էր Քանաանի քաղաքական կյանքին, համագործակցում էր այստեղի մանր քաղաքական կազմավորումների (Սոդոմ, Գոմոր եւ այլն) հետ, մասնակցում պատերազմներին, տեղի արքայիկներից մեկն էր: Վերջապես, Աբրահամը ունեւոր մարդ էր, որն ի վիճակի էր պահելու 300-ից ավելի զինյալներ, գնելու անշարժ գույք: Ի դեպ, Աբրահամի զորաջոկատի թիվը լիովին համահունչ է փոքր քաղաքական կազմավորման զորքի մասին առկա պատկերացումներին:

Հայկական լեռնաշխարհ եւ Հյուսիսային Միջագետք. հարաբերությունների բնութագիրը
Այս ենթաբաժնում կքննարկենք հայոց պատմության վաղ փուլերում հյուսիսային Միջագետքի հետ աղերսների խնդիրը: Այն կներկայացվի մի զգալի ժամանակահատվածի կտրվածքով՝ բաժանված սկզբնաղբյուրների վերլուծությունից եւ դրանց ընձեռած հնարավորություններից ածանցված փուլերի: Քանի որ ատենախոսության նախորդ երկու գլուխներում արդեն ներկայացվել են բրոնզեդարում Հայկական լեռնաշխարհի եւ Քանաանի միջեւ ընթացած շփումները (Գլուխ 1), ինչպես նաեւ խուրրիների ու արիացիների տեղաշարժերի ենթատեքստում Հյուսիսային Միջագետքին առնչվող հիմնական նյութերը (Գլուխ 2), ապա այստեղ համապատասխան եզրակացությունները կտրվեն առանց մասնագիտական կարծիքների հանգամանալի հղումներով:

Վաղ բրոնզեդար

Ատենախոսության առաջին գլխում ներկայացված հնագիտական նյութերը միանշանակ վկայում են այն մասին, որ վաղ բրոնզեդարի ընթացքում Կուր-Արաքսյան մշակույթի անդրկովկասյան հատվածից տարբեր ուղղություններով դեպի հյուսիսային Միջագետք ուղղված առնվազն երեք զգալի միգրացիաներ են ընթացել:

Առաջինը մոտավորապես մ.թ.ա. 3000թ. սահմաններում, որի հետեւանքով կտրուկ փոխվեց Վերին Եփրատի ավազանի (Ծոփք, Մալաթիա եւ հարակից շրջաններ) մշակութային նկարագիրը: Այս միգրացիայի ալիքի շարունակությունը հասավ մինչեւ Հայկական Տավրոսի հարավային նախալեռներ եւ «Խաբուրի եռանկյունի»:

Երկրորդը մ.թ.ա. XXVIII-XXVIIդդ., հավանաբար միեւնույն երթուղով ընթացած շարժումն էր, որը հետո հասավ Սիրիա եւ Քանաան՝ հիմք դնելով Քիրբեթ-Կերակյան մշակույթին:

Եվ, վերջապես, երրորդ միգրացիան (մ.թ.ա. XXIV-XXIIIդդ.), որը սկսվելով այսօրվա Հայաստանի տարածքից, ավարտվեց Միջագետքում: Ըստ մասնագետների մեծ մասի, այս շարժման կրողները խուրրիներն էին, որոնք հաստատվեցին Հյուսիսային Միջագետքում, այնտեղ հիմնելով մի շարք իշխանություններ (Friedrich, 1969: 1; Diakonoff, 1972: 95f. n.60; 1984: 7; Steiner, 1992: 33; Steinkeller, 1998: 96): Այս վերջիններից Ուրկեշի պեղումները վեր են հանել զգալի քանակությամբ նյութեր (օրինակ, օջախի վրա դրվող՝ մարդակերպ գլխիկներով եռոտանիներ, պայտաձեւ շարժական օջախներ եւ այլն), որոնց ճշգրիտ համարժեքները լավ վկայված են Արարատյան դաշտի ավելի վաղ շրջանի Կուր-Արաքսյան հնավայրերում (Kelly-Buccellati, 2004: 67ff.):

Վերոհիշյալ երեք միգրացիաների հետեւանքով Հյուսիսային Միջագետքում պետք է հայտնվեր Կուր-Արաքսի բնակչության մի ստված զանգված: Ընդ որում միայն վերջին միգրացիայի կրողները պետք է լինեին խուրրիները, քանի որ մինչեւ մ.թ.ա. 2400թ. սահմանները այս ընդարձակ տարածքում որեւէ խուրրիական անձնանուն հայտնի չէ (Steinkeller, 1998: 89ff.): Արդյոք սրանք սուբարցիներ՞ն էին, թե՞ որեւէ հնդեվրոպական լեզվի կրողներ, պարզ չէ: Համենայնդեպս, ենթադրելով, որ դեպի հարավ գնացած բնակչության լեզվակիցները շարունակում էին ապրել իրենց ելակետում եւ Հայկական լեռնաշխարհի տարբեր հատվածներում, պետք է եզրակացնել, որ Հյուսիսային Միջագետքը ներառվել էր միգրանտների էթնոմշակութային արեալում:

Այսպիսով, մ.թ.ա. XXX-XXIIIդդ. միջեւ ընկած մեծ ժամանակահատվածի ընթացքում Հյուսիսային Միջագետքը՝ Զագրոսից մինչեւ Ամանոսի լեռներ եւ նույնիսկ վեհջինից հարավ (երկրորդ միգրացիայի ժամանակ՝ ընդհուպ մինչեւ Քանաան) եղել է ոչ միայն Հայկական լեռնաշխարհի ու սիրիա-միջագետքյան աշխարհի կապող գոտի, այլեւ զգալիորեն վերածվել է առաջինի մի հատվածի:

Խուրրիների եւ արիացիների միգրացիան

Մասնագետները համարում են, որ մ.թ.ա. XVIIIդ. կամ քիչ ավելի ուշ հյուսիսից կամ հյուսիս-արեւելքից դեպի Հյուսիսային Միջագետք տեղի է ունեցել խուրրիական նոր միգրացիա, ընդ որում այս անգամ նրանց հետ էին արիացիները (կամ հնդարիացիները), որը շուտով՝ մ.թ.ա. XVIդ. հանգեցրեց

Միտաննիի կազմավորմանը: Այս միգրացիայի ելակետը դեռեւս քննարկման առարկա է (տե՛ս Գլուխ 2), բայց մասնագետների մի մասը հակված է դրա աղբյուրը կրկին տեսնելու Անդրկովկասում: Սակայն խուրրիները եւ արիացիները այս նույն ժամանակաշրջանի միակ էթնիկական խումբը չէին, որ մտան հյուսիսային Միջագետք:

Մ.թ.ա. XVIIդ., եթե ոչ ավելի վաղ, Միջագետք եկան կասսիտական ցեղերը, որոնք նվաճեցին Բաբելոնը՝ հիմնելով իրենց թագավորությունը: Այսօր պարզ չէ կասսիտների եւ խուրրիների շարժումների հարաբերակցության խնդիրը՝ միաժամանակ, թե մեկը մյուսի ետեւից: Դեռ Ի. Գելբը ժամանակին ենթադրում էր, որ կասսիտները Բաբելոն էին հեռացել խուրրիների ճնշման տակ (Gelb, 1944: 65f.), սակայն նման ենթադրության համար հիմքեր չկան: Կարծիք է եղել այն մասին, որ ոչ միայն կասսիտները, այլեւ խուրրիներն էին մ.թ.ա. XVIIդ. ստիպված թողել իրենց բնակավայրերը եւ հեռացել Միջագետք (O'Callaghan, 1948: 69):

Այս երկու ենթադրություններն էլ մնում են զուտ ենթադրություն, քանզի ոչ մի հիմք չկա խոսելու նման հզոր արիական ներխուժման մասին: Մ.թ.ա.XV-XIIIդդ. ընթացքում Առաջավոր Ասիայի արիացիները եւ խուրրիները ամենուրեք հանդես են գալիս միասնաբար, ինչ վերաբերում է Միտաննիի եւ կասսիտական Բաբելոնիայի փոխհարաբերություններին, ապա դրանք անվազն թշնամական չեն եղել: Մեր կարծիքով, խուրրիները, արիացիները եւ կասսիտները Միջագետք են տեղաշարժվել գրեթե միաժամանակ կամ հաջորդաբար, կամ նույնիսկ մեկ միասնական ալիքով, միայն այստեղ ճյուղավորվելով՝ խուրրիները Հյուսիսային Միջագետք, Սիրիա, Պաղեստին, իսկ կասսիտները՝ կենտրոնական Միջագետք:

Կասսիտների էթնիկական պատկանելության խնդիրը նույնպես վերջնականապես պարզ չէ Է.Ունգերը կասսիտական Kuridurgu (այժմ ընթերցվում է Kurigalzu) անձնանունը փորձել էր ստուգաբանել հնդեվրոպական լեզուների հիմքի վրա (Unger, 1938: 16f.):

Ռ. O'Քալլագանը կասսիտական դիցանունների մեջ տեսնում էր արիական աստվածների անունների համարժեքները: Օր., Suriaš (= հնդկ. surya- «արեւ»), Šumalia «լեռների աստվածուհի» եւ Marutaš «քամու(՞) աստված» (O'Callaghan, 1948: 63):

Մուշկերի միգրացիան դեպի Հյուսիսային Միջագետք

Մ.թ.ա. XIIդ. Հայկական լեռնաշխարհի արեւմտյան շրջաններից դեպի հարավ ընթացավ մի հզոր տեղաշարժ, որը լավ վկայված է համաժամանակյա ասորեստանյան սեպագիր աղբյուրներում եւ որի հետեւանքները նշմարելի էին դրանից շուրջ 3-4 դար անց: Այդ տեղաշարժի մասին ուղղակի հիշատակություններ են պահպանվել Ասորեստանի արքա Թիգլաթպալասար I-ի (1114-1077թթ.) արձանագրություններում: «Իմ գահակալման տարում 20,000 մուշկեր իրենց հինգ արքաներով, ովքեր 50 տարի պահում էին Ալզին եւ Պուրուլումզին, իմ աստված Աշշուրի՝ տիրոջս հարկատուներին, (մուշկերը) որոնց ոչ մի արքա երբեւէ ետ չէր մղել, իրենց ուժերին վստահ, եկան (եւ) նվաճեցին Կադմուխի երկիրը …» (Grayson, 1976: 19; հղումը ըստ՝ Քոսյան, 1999: 157): «Ես նվաճեցի մուշկերի ընդարձակ երկրի 12,000 զորքը: Ես նետ ու աղեղով սփռեցի նրանց կռվողների դիակները ողջ դաշտով» (Grayson, 1976: 92; Քոսյան, 1999: 157): «[Ես պարտության մատնեցի] մուշկերի ընդարձակ երկրի 12,000 [զորքը]: Մնացած զորքը ես տեղահանեցի և բերեցի իմ երկիրը …» (Grayson, 1976: 66; Քոսյան, 1999: 157): Միեւնույն իրադարձության վերաբերյալ Ասորեստանի արքան հաղորդում է իր այլ տեքստերում (Grayson, 1976: 18, 67, 93): Այստեղ, մուշկերից բացի, հիշատակվում են Սուբարտուի քաղաքները նվաճած կասկերը եւ ապիշլուները: Մասնագետները հակված են վերոհիշյալ մուշկերին եւ նրանց հետ հիշատակվող կասկերի ու ապիշլուների ելակետը տեսնելու Հայկական լեռնաշխարհի արեւմուտքում եւ հյուսիս-արեւմուտքում, մասնավորապես խեթական աղբյուրներից հայտնի Հայասայում (Քոսյան, 1991: 77; 1996: 218; 1999: 162-167; Ավետիսյան, 1994: 243-244):

Հետագայի ասորեստանյան աղբյուրները Հյուսիսային Միջագետքում շարունակում են հիշատակել այնտեղ բնակվող մուշկերին (Քոսյան, 1999: 162-163): Այս ժողովրդի ներկայությունը Կադմուխիում ապացուցվում է Աշշուրբելկալայի (1073-1056թթ.), Թուկուլթի-Նինուրտա II-ի (890-884թթ.) եւ Աշշուրնաձիրպալ II-ի (883-859թթ.) տեքստերով: Իսկ դա նշանակում է, որ եկվորները բավական զգալի թիվ են կազմել եւ չեն ձուլվել տեղացիների մեջ, քանի որ իրենց գալստյան պահից ավելի քան երեք դար

անց դեռեւս պահպանում էին իրենց ինքնությունը:

Արամեացիները Հյուսիսային Միջագետքում

Հյուսիսային Միջագետքում մ.թ.ա. II-I հազ. ապրած էթնիկական խմբերից էին սեմական ծագում ունեցող արամեացիները, որոնք Աստվածաշնչում համարվում են հրեաներին ազգակից ժողովուրդ: Այստեղ Աբրահամի թոռ Հակոբը կոչվում է «թափառող արամեացի» (Թվականք 26.5): Խառան քաղաքի շրջանը կոչվում էր Պադան-Արամ. Պադանը ուշ ասորերենում նշանակում է «ճանապարհ», որը աքքադ. harrՉոս «ճանապարհ» բառի համարժեքն է (Kraeling, 1918: 24; Dhorme, 1928: 487): Իսկ համաձայն մուսուլմանների սուրբ գրքի՝ Ղուրանի, արաբները ծագել էին Աբրահամ նահապետից (ԼԺԹ II, 1988: 270):

Արամեական ցեղերը առաջին անգամ հանդես են գալիս Հյուսիսային Միջագետքում որպես եկվորներ Ասորեստանի արքա Արիկդենիլիի (1308-1297թթ.) մասին նրա որդու՝ Ադադնիրարի I-ի (1296-1264թթ.) տեքստում (ինչպես այս, այնպես էլ արամեացիների տեղաշարժերի եւ նրանց՝ Հյուսիսային Միջագետքում ստեղծած քաղաքական միավորների մասին տե՛ս Kraeling, 1918: 1ff.; O'Callaghan, 1948: 93ff.; Schwartz, 1989: 275ff.; ԸՉպՁՌրÿվ, 1997: 9բսս.; Ավետիսյան, 1998: 125-132; 2002: 97-105 եւ այլն): Ըստ դրա, Կադմուխիում արքան նվաճել էր ախլամուների, սուտիների եւ յաուրիների ցեղերին: Սրանցից սուտիները եւ յաուրիները հայտնի էին Հյուսիսային Սիրիայի Ալալախ քաղաքի շրջանում դեռեւս մ.թ.ա. XVIդ.: Արդեն Սալմանասար I-ի օրոք (1263-1234թթ.) ախլամուները խեթահպատակ Միտաննիի դաշնակիցներն էին ընդդեմ Ասորեստանի: Գրավոր աղբյուրներում արամեացիների նկատմամբ կիրառվում են մի շարք տերմիններ, որոնք արտաքնապես նման են հայ ժողովրդին օտարների կողմից տրված ցեղանվանը՝ armaya, arumu, aramu եւ այլն: Ինչպես կարող էր տեղ գտնել այս երեւույթը: Մասնագետները տարբեր ձեւով են բացատրում այդ համահնչունությունը:

Ինչպես նշվեց վերը, սեպագրական աղբյուրներում ամենավաղ արամեական ցեղը, որը եկել էր Հյուսիսային Միջագետք, կոչվում էր ախլամու: Այս բառը ցեղանուն չէր, այլ հասարակ բառ, որ նշանակում էր «միություն, դաշնակցություն» (Kraeling, 1918: 18; O'Callaghan, 1948: 95), «քոչվոր» (Grayson, 1976: 13; Schwartz, 1989: 286) կամ «ճանապարհ իմացող» (Diakonoff, 1982: 23): Բոլոր հետազոտողները նշել են, որ ախլամու-արամեացիները որոշակի ցեղ չեն եղել, այլ միանման կենցաղ վարող անապատի քոչվորներ: Կարեւոր է նշել, որ ախլամուները սկսել են «արամեացի» կոչվել միայն այն պահից, երբ հայտնվել են Հյուսիսային Միջագետքում (Կադմուխի երկրում): Հետեւաբար, «արամեացի» տերմինը նրանց նախնական անվանումը չի եղել: Իսկ դա նշանակում է, որ «արամեացի» տերմինը պետք է նշանակեր ինչ-որ մի հավաքական բառ, որով ասորեստանցիները միավորեին քոչվորներին (օրինակ, «քոչվոր»- ԺՖÿՍՏվՏՉ, 1981: 337) կամ ներկայացներ տեղանուն:

Նկատի առնելով, որ Հյուսիսային Միջագետքի այն շրջաններում, որտեղ մ.թ.ա. XIVդ. հիշատակվում են ախլամուները, մ.թ.ա. III հազ. հայտնի էր Armanum-ը (տե՛ս վերը), ապա սխալ չէր լինի ենթադրել, որ «արամեացի»՝ նշանակել է «Արմանում երկրի բնակիչ»՝ անկախ Արմանումի բնակչության էթնիկական պատկանելությունից: Կարծում ենք, որ Հյուսիսային Միջագետքում, Սիրիայում եւ Հայկական լեռնաշխարհի հարավում մ.թ.ա. III-I հազ. սեպագրական աղբյուրներում հիշատակվող մեծաքանակ տեղանունները, որոնք պարունակում են Arm հիմքը (Arame, Arime, Armanum, Aramale, Arman եւ այլն), ծագում են հնդեվրոպական «սեւ, մութ» հիմքից կազմված Հայաստանի Արամ դիցանվան հետ. այդ անվանումը հետագայում պահպանվեց Սասունի եւ Մուշի որոշ մասի նկատմամբ կիրառվող Arme անվան մեջ, որը համապատասխանում էր ասորեստանյան աղբյուրների Šubria-ին (Պետրոսյան, 1997: 131-133,158-169; 2003: 217): Չնայած Աստվածաշնչում արամեացիների էպոնիմը (նահապետը) համարվում է Արամը, սակայն արամեացիներին այնքանով էր տրվել սույն անվանումը, որքանով նրանք մ.թ.ա. XIV-XIIդդ. հաստատվել էին Հյուսիսային Միջագետքի Կադմուխի երկրում, որը վաղուց ի վեր կրում էր վերոհիշյալ Arm- հիմքով անվանում (Պետրոսյան, 2003: 221): Այս առնչությամբ հիշատակելի է Hatti տերմինի կիրառությունը մ.թ.ա. I հազ. սկզբների Սիրիայի նկատմամբ, որը գերազանցապես սեմական բնակչություն ուներ, քանի որ մինչեւ XIIIդ. վերջերը այս տարածքը գտնվում էր Խեթական տերության տիրապետության ներքո (Hawkins, 1973: 152ff.):

Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել ախլամու-արամեացիների ծագմանն առնչվող մի խնդիր, որը

շատ կարեւոր է մեր ատենախոսությունում արծարծած հիմնախնդրի առնչությամբ: Դեռ 1940-ական թվականներին Վ. Օլբրայթը առաջ էր քաշել մի վարկած, ըստ որի ախլամուները պատկանում էին հյուսիս-արեւմտասեմական ցեղերին, եւ որ Աստվածաշնչային առաջին նահապետները, հավանաբար, խոսում էին այդ լեզվով, այսինքն նրանք ախլամուներ կարող էին լինել (Albright, 1948: 182): Այս տեսակետը ընդունվեց Ռ. Օ'Քալլագանի կողմից (O'Callaghan, 1948: 112), սակայն հետագայում ինչպես հարկն է շարունակություն չունեցավ: Կարծում ենք, որ անկախ հետագա հետազոտությունների արդյունքներից, իսկապես անհրաժեշտություն կա նահապետական փուլի հրեական էթնոսում հստակ առանձնացնելու հյուսիսմիջագետքյան արամեական շերտը (այդ մասին տե՛ս եզրակացություններում):

Այսպիսով, ամենաուշը մ.թ.ա. XIIIդ. արամեացիները սկսում են հաստատվել հյուսիսային Միջագետքում, որն այդ պահին գերազանցապես խուրրիական էր, որոշ քանակությամբ սեմական տարրով հագեցած: Այդ նույն շրջանում՝ քիչ ավելի ուշ, հյուսիսից գալիս են մուշկերը՝ նույնպես հաստատվելով այստեղ: Ըստ էության, նախկին Միտաննիի բուն տարածքը այս շրջանում բազմաէթնիկ մի երկիր էր:

Բեհիսթունյան Արմինա-Հայաստանը

Մ.թ.ա. VIդ. վերջին քառորդում Աքեմենյան արքա Դարեհ I-ը նվաճեց Հայկական լեռնաշխարհը, իսկ մի որոշ ժամանակ անց նրա դեմ ապստամբեցին գրեթե բոլոր նվաճված երկրները, այդ թվում՝ Հայաստանը, որը նշանավոր Բեհիսթունյան արձանագրությունում կոչվում է Արմինա: Նույն արձանագրությունում նկարագրված են Արմինայի ապստամբության եւ դրա ճնշման մանրամասները (Մանանդյան, 1977: 53-61):

Հայերի ու պարսիկների միջեւ տեղի ունեցավ հինգ ճակատամարտ, որից հետո միայն Դարեհին հաջողվեց ճնշել ապստամբությունը: Բոլոր ճակատամարտերը հիշատակվում են ըստ բնակավայրերի, որը հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմելու Արմինա-Հայաստանի զբաղեցրած տարածքի մասին: Դրանք են՝ Զուզահյա, Տիգրա, Ուհյամա, Իզալա եւ Աուտիյարա: Բնակավայրերը, ըստ հետազոտողների, գտնվել են «Հին Ասորեստանի հյուսիսակողմում» (Մանանդյան, 1977: 59)՝ պատմական Հայաստանի Աղձնիք եւ Կորճայք նահանգներում, որտեղ հայկական եւ հունական ավանդազրույցները նշում են հայ ժողովրդի հնագույն գաղթավայրերը: Բեհիսթունի արձանագրության տվյալները համահունչ են Աքեմենյան տերության սատրապությունների վերաբերյալ Հերոդոտոսի հաղորդած տեղեկություններին: Այստեղ Արմենիան հանդես է գալիս որպես XIII սատրապություն (Հերոդոտոս, III 93), որն ընդգրկում էր Փոքր Հայքը, Ծոփքը եւ Աղձնիքը (Մանանդյան, 1977: 62; Սարգսյան, 1988: 72-73 եւ այլն):

Ինչպես տեսնում ենք, Բեհիսթունի արձանագրության կազմման շրջանում Արմինա կոչվող հայկական պետությունը տեղադրվում էր Հյուսիսային Միջագետքին հարող շրջաններում, այնտեղ, որտեղ նախորդող ժամանակաշրջանում հիշատակվում էին Սուբարտումն ու Արմանումը:

Հյուսիսային Միջագետքը հայկական եւ հրեական ազգածագման ենթատեքստում. միջավայր եւ ընդհանրություններ

Հյուսիսային Միջագետքը հայ եւ հրեա ժողովուրդների կազմավորման գործընթացում կարեւորագույն դեր է խաղացել, ինչն առաջին հերթին վկայված է երկու ժողովուրդների ազգածագման առասպելներում (Աստվածաշունչ եւ Մովսես Խորենացի, նաեւ հունական աղբյուրներ՝ հայ ժողովրդի համար): Երկու դեպքում էլ այս ժողովուրդների նախահայր-նահապետների գործունեությունը սկսվում է այստեղ եւ հետագայում նրանք տեղափոխվում են իրենց ապագա հայրենիք: Թե որքանով են այս առասպելները պատմական իրողություններ պարունակում, մասնագետները կատարել են համապատասխան հետազոտություններ, սակայն այստեղ մեր խնդիրն է, հենվելով առկա սկզբնաղբյուրներին, փորձել ցույց տալ նշված տարածաշրջանում հնագույն ժամանակներից վկայված էթնիկական խմբերի ունեցած ազդեցությունը հայերի եւ հրեաների վրա, որ պահպանվել է նրանց լեզվում եւ հոգեւոր մշակույթում:

Նախորդ բաժնում ներկայացվեց հրեաների ազգածագման խնդիրը, իսկ ստորեւ կանդրադառնանք հայոց ազգածագմանը, որը պահպանվել է հայ եւ հույն հեղինակների աշխատություններում:

Հայ ժողովրդի ծագման վերաբերյալ հայկական եւ անտիկ աղբյուրները պահպանել են տարբեր մոդելներ, որոնց համեմատական ուսումնասիրությունը բազմաթիվ հետազոտությունների առարկա է դարձել: Համառոտ ներկայացնենք դրանք, որից հետո կանցնենք դրանց համադրմանը մեր ատենախոսության տեսանկյունից:

Ըստ Պատմահայր Մովսես Խորենացու (Խորենացի, Գիրք Ա.10), հայոց նախահայր Հայկը սերում էր Թիրասի (Հաբեթի որդին) որդի Թորգոմից: Նա իր տոհմի հետ ապրում էր Բաբելոնում: Չկարողանալով հանդուրժել Բելի տիրապետությունը՝ Հայկը հեռացավ հյուսիս ու հաստատվեց իր ապագա հայրենիքում: Վերոհիշյալից բխում է, որ Խորենացու մոտ պահպանվել է հայոց էթնոսի՝ հարավից, այն է՝ Միջագետքից ծագելու վարկածը, որի արմատները առ այսօր պարզ չեն: Ինչու՞ հատկապես Միջագետքը:

Հայագիտական ուսումնասիրություններում այս խնդիրը տարբեր մեկնաբանությունների տեղիք է տվել, մանավանդ որ հայոց ծագումնաբանության հին հունական տարբերակը (տե՛ս ստորեւ) հայերին Հայաստան է բերում միանգամայն այլ ճանապարհով: Չխորանալով առկա տարբեր կարծիքներում՝ նշենք այսօր գերիշխող տեսակետը (Սարգսյան, 1992: 27-50), որն ընդունվում է ուսումնասիրողների կողմից (Քոսյան, 1998: 6 եւ այլն):

Ըստ դրա, Խորենացու վարկածը ակնհայտորեն Աստվածաշնչի ազդեցությամբ է մուտք գործել հայոց էթնոգենեզ, քանի որ Հայկի հայր Թորգոմը հստակ առնչվում է Հայկական լեռնաշխարհի արեւմուտքում գտնվող՝ սեպագրական աղբյուրների Թեգարամայի (Աստվածաշնչի Բեթ-Թոգարմա [Եզեկիէլ. ԻԷ,14; ԼԸ, 6], ժաման. Գյուրյուն) հետ: Հարկ է նշել, որ Թորգոմի կերպարը հին Հայաստանում գիտակցվել է ընդհուպ մինչեւ միջնադար, քանի որ հայոց մատենագրությունում հայ ազգը կոչվում էր «ազգն Թորգոմայ»: Հայկի տոհմի մուտքը Հայաստան Միջագետքից դիտելով որպես աստվածաշնչյան ներդիր՝ մասնագետները համարում են, որ իրականում հայոց արմատները պետք է փնտրել Եփրատի վերին հոսանքների շրջանում, որտեղ սեպագրական աղբյուրները հիշատակում էին Հայասա, Իսուվա, Թեգարամա երկրները: Այժմ անդրադառնանք հունական առաջին վարկածին: Ըստ դրա (Страбон, XI 4,8 (503) եւ XI 14,12 (530)), հայերի նախահայր, ծագումով Թեսսալիայի (Հյուսիսային Հունաստանի մարզերից մեկը) Արմենիոն քաղաքից ոմն Արմենոսը մեկն էր հունական առասպելական հերոս Յասոնի՝ դեպի Կոլխիդա ձեռնարկած ծովային ճանապարհորդության մասնակիցներից, որը բնակվում է Ակիլիսենեում (հայկ. Եկեղյաց գավառը) եւ Սյուսպիրիտիսում: Հետագայում նրա ուղեկիցները, իջնելով հարավ, հաստատվում են Հյուսիսային Միջագետքի Ադիաբենե եւ Քալաքենե շրջաններում, որը գտնվում էր Հայաստանից դուրս: Ահա թե ինչ է գրում Ստրաբոնը. «Արմենոսի ուղեկիցներից ոմանք գրավեցին Ակիլիսենեն, որը մինչ այդ գտնվում էր սոփենների իշխանության տակ, իսկ մյուսները բնակություն հաստատեցին Սյուսպիրիտիսում, մինչև Կալաքենե եւ Ադիաբենե՝ Հայկական լեռներից այն կողմ» (Страбон, XI,XIV,12):
Ստրաբոնի մեկ այլ վկայություն կարեւոր է այն առումով, որ հայերին համարում է Հյուսիսային Միջագետքի հիմական բնակիչներից մեկը. «Ադիաբենեն մեծ մասամբ դաշտավայր է: Չնայած այս մարզը Բաբելոնի մասն է կազմում, բայց եւ այնպես ունի իր հատուկ կառավարիչը եւ որոշ տեղերում սահմանակից է Հայաստանին: Մարերը, հայերը եւ բաբելացիները այս երկրում [ապրող] ցեղերի մեջ ամենաշատն են եւ շատ վաղուց այնպիսի հարաբերությունների մեջ են եղել իրար հետ, որ հաճախ հարձակվել են միմյանց վրա, ապա կրկին հաշտվել: Այս վիճակը շարունակվել է մինչեւ պարթեւների գերիշխանության [հաստատումը]: Այժմ պարթեւները, ճիշտ է, տիրում են մարերին ու բաբելացիներին, սակայն հայերը երբեք նրանց ենթակա չեն եղել» (Страбон, XVI, 1,20):

Վերոհիշյալ երկրորդ տեղեկության հիմամբ կարելի է եզրակացնել Հյուսիսային Միջագետքում հայերի լուրջ ներկայության, ինչպես նաեւ այս տարածաշրջանի բնակչության բազմաէթնիկ կազմի մասին: Հունական երկրորդ վարկածը պահպանվել է հունական պատմահայր Հերոդոտոսի մոտ (Հերոդոտոս, VII 73): Նրա աշխատությունում արմենները հիշատակվում են որպես «փռյուգացի վերաբնակիչներ», նաեւ ընդգծվում է, որ աքեմենյան արքա Քսերքսեսի բանակում արմենները զինված էին ինչպես փռյուգացիք:

Վերոհիշյալ հունական վարկածները, ինչպեսեւ նախկինում լեզվաբանությունում գերիշխող կարծիքը այն մասին, որ հնդեվրոպական նախահայրենիքը գտնվել է Եվրոպայում, ստիպում էին մասնագետներին՝ օտարալեզու եւ հայ, եզրակացնել, որ հայերի նախնիները Հայաստան են ներգաղթել ինչ-որ ժամանակ Եվրոպայից՝ Բալկանյան թերակղզու վրայով: Որպես հայերի նախնիների ներգաղթի ժամանակաշրջան էր նշվում մ.թ.ա. VIդ. (Халатьянц, 1910: 11; Markwart, 1928: 211ff.; Մանանդյան, 1971: 21-31; Mallory, 1989: 34f. եւ այլն): Ի. Դյակոնովը որպես ներգաղթի ժամանակ առաջարկեց մ.թ.ա. XIIդ., այն պահը, երբ Հյուսիսային Բալկաններից տեղի ունեցավ թրակա-փռյուգական ցեղերի շարժումը դեպի Փոքր Ասիա. այդ շարժման առաջապահները նախահայկական ցեղերն էին (Дьяконов, 1968: 204рuu.; Mallory, 1989: 34f.): Այս տեսակետի կողմնակիցներից շատերը համարում էին, որ Բալկաններից Փոքր Ասիա ներգաղթելուց հետո հայերի նախնիները մի քանի դար ապրել են այստեղ (Արգեոս լեռան շրջակայքում՝ Կեսարիայի մոտ, կամ Մալաթիայի շրջանում), որից հետո միայն, Ուրարտուի թուլացման հետ միաժամանակ, նրանք շարժվել են դեպի արեւելք ու յուրացրել Հայկական լեռնաշխարհը (Մանանդյան, 1977: 21-31; Дьяконов, 1968: 122рu.; 1981: 51рuu. եւ այլն):

Մասնագետների մեկ այլ խումբ, ժխտելով բալկանյան վարկածը, կարծում էր, որ հայերի նախնիները ապրել են Հայկական լեռնաշխարհում նախքան թրակա-փռյուգական ցեղերի գաղթը եւ նրանց տեղադրում էր Լեռնաշխարհի արեւմուտքում, այնտեղ, որտեղ մ.թ.ա. II հազ. սեպագրական աղբյուրները հիշատակում են Հայասա, Իսուվա եւ այլ քաղաքական միավորներ (Капанцян, 1948: 140рuu.; Ջահուկյան, 1987: 340-341 [Հայասայում հնդեվրոպական լեզվի հետքերի համար]; Քոսյան, 1996: 207-220; 1997: 177-192): Սույն տեսակետը վերջին տարիներին ամրապնդվեց հնդեվրոպական ժողովուրդների առաջավորասիական վարկածի շնորհիվ (Gamkrelidze and Ivanov, 1985), որին նախորդել էր մի շարք հետազոտողների կողմից Հայկական լեռնաշխարհում դեռեւս մ.թ.ա. III հազ. հնդեվրոպական ցեղերի առկայությունը հավաստող նյութերի առանձնացումը (Winn, 1981: 113ff.; Yakar, 1981: 94ff.; Арешян, 1988: 84рuu.; Kosyan, 1997: 253ff. [խնդրի տեսությունը եւ նոր մոտեցումները]):

Բացի վերոհիշյալից, անհրաժեշտ է նշել մի կարեւոր հանգամանք, որը կարող է վճռական դեր խաղալ հայերի նախնիների՝ Եվրոպայից գաղթելու մասին կարծիքի մերժման գործում: Մ.թ.ա. XIIդ. կամ դրանից հետո Փոքր Ասիայում եւ Հայկական լեռնաշխարհում կատարված բազմաթիվ հնագիտական ուսումնասիրությունները որեւէ հնարավորություն չեն ընձեռում ենթադրել ներգաղթ դեպի Հայկական լեռնաշխարհ (տե՛ս Քոսյան, 1996; 1997 [խնդրին վերաբերող համապատասխան հղումներով]): Ընդհակառակը, հնագիտական նյութերը թույլ են տալիս վստահորեն խոսելու Հայկական լեռնաշխարհի ներսում ընթացած էթնիկական տեղաշարժերի մասին, որոնք երբեմն տարածվել են նույնիսկ դուրս՝ Միջագետք եւ Իրան:

Վերջին տարիներին առաջարկվեց հայ ժողովրդի բնօրրանի խնդրի ուսումնասիրության վերաբերյալ մի նոր մոտեցում, որ քիչ ավելի վաղ ընդհանուր գծերով առկա էր Ա. Քոսյանի աշխատություններից մեկում (Քոսյան,1998: 55-66): Ըստ այդ վարկածի (Օհանյան, 2002), նախքան միասնական հայկական պետության կազմավորումը, զուգահեռ գոյություն են ունեցել հայկական երեք խոշոր ցեղամիություններ՝ 1) Վանա լճի ավազանը (Հայկ նահապետ), 2) Արագածոտն, Շիրակ, Կոտայք, Գեղարքունիք եւ Սյունիք (Արամանյակ եւ նրա սերունդներ), Կորդուք–Կադմուխի (Հայկի թոռ Կադմոս): Սրանցից վերջինը հենց այն տարածքն է, որն ընկած էր հիմնականում Հյուսիսային Միջագետքում:

Այսպիսով, հաշվի առնելով հայ ժողովրդի ծագմանն առնչվող ավանդական տեսակետներն ու դրանց ու ժամանակակից սկզբնաղբյուրների ընձեռած հնարավորությունները, կարելի է հանգել հետեւյալ եզրակացություններին:
1.Հայ ժողովրդի նախնիների եկվորության մասին ավանդական տեսակետը, որ հենվում էր հիմնականում հունական երկու աղբյուրների, ինչպես նաեւ հնդեվրոպական նախահայրենիքի տեղադրության փաստարկների վրա, այսօր աստիճանաբար տեղի է տալիս, թույլ տալով ենթադրելու, որ հայերի նախնիները շատ վաղ ժամանակներից բնակվել են Հայկական լեռնաշխարհում:
2.Հայ ժողովրդի կազմավորման շրջանը կամ դրանցից կարեւորը, ամենայն հավանականությամբ, գտնվել է Հայկական լեռնաշխարհի արեւմուտքում: Հայասա երկրանվան ակնհայտ կապը «հայ»

էթնոնիմի հետ, որ նշում է մասնագետների մեծ մասը (Kretschmer, 1932; Adontz, 1946: 27ff.; Капанцян, 1948: 124слл.; Еремян, 1951: 101слл.), կարող է վկայել այս ենթադրության օգտին:
Ավարտելով հայ ժողովրդի կազմավորման խնդրի շուրջ առկա տեսակետների ուրվագիծը՝ փորձենք առանձնացնել դրա՝ Հյուսիսային Միջագետքին առնչվող կռվանները եւ դրանք համադրել Աբրահամ նահապետի Աստվածաշնչային վարկածի հետ:

Մուրրիները եւ հայերը

Մուրրիները խոշորագույն դեր են կատարել Առաջավոր Ասիայի պետությունների եւ ժողովուրդների պատմության ու մշակութային զարգացման ասպարեզում: Ատենախոսության նախորդ գլխում բերված նյութերը թույլ են տալիս եզրակացնելու, որ խուրրիական էթնոսի տարբեր հատվածները լայնորեն տարածված էին Առաջավոր Ասիայի գրեթե բոլոր շրջաններում: Բացի Հյուսիսային Միջագետքից, Սիրիայից, Կիլիկիայից եւ Պաղեստինից, խուրրիական հոծ բնակչություն կար նաեւ Փոքր Ասիայի կենտրոնական ու հյուսիս-արեւելյան շրջաններում, ինչպեսեւ Հայկական լեռնաշխարհում՝ առնվազն մ.թ.ա. II հազ. կեսերից: Խուրրիների դերը հայկական էթնոսի ձեւավորման գործում, դատելով Հայկական լեռնաշխարհի մի շարք շրջաններում նրանց տեւական բնակության փաստից, եղել է շոշափելի: Ստորեւ ներկայացնենք Հայկական լեռնաշխարհում խուրրիների առկայության մասին սեպագրական աղբյուրների տեղեկություններից բխող եզրակացությունները:

Այդ տեղեկությունները պահպանվել են մ.թ.ա. II հազ. խեթական, ինչպես նաեւ II-I հազ. սկզբների ասորեստանյան սեպագիր տեքստերում: Ըստ դրանց, բուն խուրրիները զգալի տարածքներ էին զբաղեցնում Լեռնաշխարհի հարավում եւ արեւմուտքում: Այդ մասին կարելի է դատել տարբեր քաղաքական միավորների արքաների ու կառավարիչների, նաեւ ազնվականության ներկայացուցիչների խուրրիական անունների հիմամբ:

Ալզի
Մ.թ.ա. II հազ. այս կարեւոր պետությունը հետագայի Մեծ Հայքի Աղձնիքի տարածքում էր:
1) Մ.թ.ա. XIVդ. երկրորդ կեսին՝ խեթական մեծ արքա Սուպպիլուլիումաս I-ի եւ կախյալ Միտաննիի արքա Շատտիվազայի միջեւ կնքված պայմանագրում (Weidner, 1923: 2ff.; Beckman, 1996: 38ff.) հիշատակվում է Ալզիի խուրրի արքա Անտարատալը:
2) Մ.թ.ա. XIIIդ. Ասորեստանի արքա Թուկուլթի-Նինուրտա I-ի (1234-1197թթ.) արձանագրությունում հիշատակվում է Ալզիի խուրրի արքա Էխլի-Թեշուբը (Grayson, 1972: « 693):
Ասորեստանի արքայի տեքստերում Ալզին ներկայացված է որպես «Սուբարուի» երկիր, Ամադանի, Նիխանի, Ալայա, Թեբուրզի, Պուրուլումզի, Կադմուխի, Բուշշի, Մումմի երկրների հետ միասին: Բնական է ենթադրել, որ սուբարյան երկրներում խուրրիները պետք է կազմեին բնակչության հիմնական մասը: Մասնավորապես, Պուրուլումզի տեղանվան հիմքում ընկած է խուրր. purli, purulli «տաճար» բառը (Wilhelm, 1989: 40):
3) Մ.թ.ա. XIIդ. վերջերին – XIդ. սկզբներին, Ասորեստանի արքա Թիգլաթպալասար I-ը (1114-1077թթ.) իր՝ դեպի հյուսիս ուղղված արշավանքների ընթացքում (Grayson, 1976: « 13) հիշատակում է Պապխի երկրի արքա Կիլի-Թեշուբին՝ Կալի-Թեշուբի որդուն (երկուսի անուններն էլ խուրրիական են): Պապխին Ալզիի անմիջական հարեւանն էր հարավից (Արեւելյան ու Արեւմտյան Տիգրիսների միախառնման վայրում): Այս երկրանունը կազմված է խուրր. paphi «լեռնային (երկիր)» բառից (Diakonoff and Kashkai, 1981: 17):

Այս նույն շրջանում Ասորեստանի արքան հիշատակում է Ուրրատինաշ քաղաքի կառավարիչ՝ խուրրի Շադի-Թեշուբին՝ Խաթթուխիի որդուն:

Իսուվա
Իսուվան (հայկ. Ծոփք) գտնվում էր Արածանիի՝ բուն Եփրատին միախառնվելու շրջանում՝ ընդգրկելով նաեւ Եփրատից արեւմուտք ընկած տարածքներ (Klengel, 1968; Քոսյան, 1997; 2004: 61-63):
1) Մ.թ.ա. XIIIդ. Իսուվայի թագավորության իշխող դինաստիան խուրրիական ծագում ուներ. հիշատակվում են երկու արքաներ՝ Արի-Շարրուման, Էխլի-Շարրուման եւ թագուհի Կիլուշխեպան: Իսուվայի տարածքում խուրրիական էթնիկական տարրի ներկայությունը փաստվում է մի շարք այլ անձնանուններով՝ Կիլի, Կումարպի, Աքարքի եւ այլն (Քոսյան, 2004: 63; 2005):

2) Ըստ խեթական KUB XLV 41 տեքստի, Իսուվայի Նիխրիյա քաղաքում էր գտնվում խուրրիական դիցարանի գլխավոր աստվածություններից մեկի՝ Շավուշկայի սրբավայրը (Քոսյան, 2004: 74):

Շուբրիա
Շուբրիան Վանա լճից արեւմուտք էր՝ Սասուն գավառի տարածքում, հավանաբար, ընդգրկելով շրջակա տարածքները (Տարոնի մի մասը):

Մ.թ.ա. VIIդ. Ասորեստանի արքա Ասարհադդոնը (մ.թ.ա.680-669թթ.) դեպի Շուբրիա կազմակերպած արշավանքի ընթացքում հիշատակում է Շուբրիայի արքա Նիկ-Թեշուբին եւ նրա երկու որդիներին՝ Լիգի-Թեշուբին, Շերպի-Թեշուբին եւ Խու-Թեշուբին (ԺՖÿՍՏվՏՉ, 1951: վՏՎ.50, 67, 70; Luckenbill, 1927: N.601): Հիշատակված բոլոր անունները խուրրիական են:

Այլ շրջաններ
1) Մ.թ.ա. Xդ. Ասորեստանի արքա Աշշուրդան II-ի (934-912թթ.) տարեգրություններում որպես Կադմուխիի արքա հիշատակվում է խուրրիական անուն կրող Կունդաբխալեն (Grayson, 1976: 364): Կադմուխին գտնվում էր Հյուսիսային Միջագետքում՝ Քաշիյարի (ժաման. Տուր Աբդին) լեռների շրջանում (Forrer, 1921: 18; ԸՐցՖվÿվ, 1970: 22րս.; 1985: 98րս.):
2) Ասորեստանի արքա Սարգոն II-ը (722-705թթ.) իր՝ դեպի Ուրարտու կազմակերպած արշավանքի հետ կապված հիշատակում է Ուրմիա լճի շրջանում գտնվող Անդիա փոքր պետության արքա Տելուշինային (Luckenbill, 1926: 13,56), որի անունը հստակ խուրրիական է:
3) Ասորեստանի արքա Ասարհադդոնը (680-669թթ.), Շուբրիայի հետ կապված իրադարձությունների ենթատեքստում հիշատակում է շուբրիացիների հետ առնչվող ուրարտական զորավար Անդարիային (Luckenbill, 1927: 854), որի անունը, հավանաբար, խուրրիական է (Gelb, 1944: 83):
4) Ասորեստանի արքա Աշշուրբանապալը (668-633/27թթ.) հիշատակում է Ուրմիա լճի շրջանում գտնվող՝ խուրրիական անուններ կրող Մանայի արքա Ախշերիին եւ նրա թոռ Էրի-շիննիին (Luckenbill, 1926: 786):

Վերը ներկայացված տեղեկությունները վստահելի են ու մատնանշում են վերոհիշյալ տարածքներում խուրրիական բնակչության առկայությունը եւ քաղաքական դերը ընդհուպ մինչեւ մ.թ.ա.VIIդ., այսինքն Միտաննիի անկումից առնվազն 600 տարի անց:

Խուրրիերենից հայերեն

Ապրելով Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններում՝ մ.թ.ա. III-I հազ., ընդհուպ մինչեւ հայկական պետականության կազմավորման շրջանը, բնականաբար, խուրրիները եւ հայերը պետք է սերտ շփումներ ունենային: Այդ շփումների հավաստիությունը արտացոլված է հայերենում ի դեմս խուրրիերեն բառերի փոխառության: Դրանք հիմնականում ընդգրկում են բուսանուններ եւ սոցիալական տերմիններ:

Ստորեւ ներկայացվող՝ խուրրիերենից հայերեն կատարված փոխառությունները տրվում են ըստ մասնագետների շրջանում գերազանցապես համընդհանուր ընդունելություն ստացած ցուցակի, որն առկա է ակադ. Գ. Ջահուկյանի եւ Մ. Խաչիկյանի մոտ (ղՈփՌՍÿվ, 1985: 55րս.; Ջահուկյան, 1987: 425-426): Հարկ է նշել, որ, բացի սրանցից, տարբեր ուսումնասիրողներ առաջարկել են անհամեմատ ավելի շատ համադրումներ (ԽՈտՈվՓÿվ, 1961; Greppin, 1991 եւ այլք): Արեւմտյան հետազոտողները մեծ զգուշավորություն են դրսեւորում խուրրի-հայկական ընդհանրությունների հարցում, որ հիմնականում բացատրվում է ինչպես հայերենին չտիրապետելու, այնպես էլ խուրրիների ու հայերի միջեւ տեւական շփումների անհնարինության փաստարկներով: Ներկայացնենք այսօր արդեն կասկած չհարուցող փոխառությունների ցանկը.
հայ. անագ > anagi
հայ. աղախին > al(l)ahinnu «տնտեսությունը վարող», al’ai «տիրուհի»
հայ. անանուխ > *ananuh’e
հայ. աստ «կին» > ašti
հայ. խաղող > haluli «ինչ-որ պտուղ»
հայ. խոռ «ժլատ» > hurri (խուրրիների անվանումը)

հայ. ծառա > sar'U «ռազմագերի»
հայ. ծառ > «ari
հայ. ծով > «ue
հայ. սալոր > šaluru
հայ. նուռն > nuranti (ինչ-որ բույս)
հայ. փոխ > puh- (puhizzari, puhugari «փոխանակություն, փոխհատուցում»)
հայ. քաքար (մի տեսակ խմորեղեն) > kakkari
հայ. տուղտ (բույսի տեսակ) > tuldi (ինչ-որ բույս)
հայ. թարմաջուր > tarma(ne) «աղբյուր»
հայ. ուղտ > ուրարտ. ultu
հայ. խնձոր > hinzuri

Ուրարտերենից հայերեն

Խուրրիերենին ազգակից ուրարտերեն լեզվի հետ հայերենը ունի մեծ թվով ընդհանրություններ, որոնք վկայում են ինչպես երկու լեզուների կրողների երկարատեւ շփումների, այնպես էլ ձեւավորվող հայ ժողովրդի մեջ ուրարտացիների ձուլման մասին:

Ակադեմիկոս Գր. Ղափանցյանը, որն առաջինն էր ուրարտերենի եւ հայերենի միջեւ լեզվական ընդհանրությունների ուսումնասիրման ասպարեզում (ԽՈՏՈՎՓÿվ, 1975: 270բսս.), առաջարկել էր մեծ քանակությամբ հասարակ բառեր եւ հատուկ անուններ, որոնց մի մասը հետագայում մերժվեց Գ. Ջահուկյանի կողմից (Ջահուկյան, 1987: 430-431), չնայած դրանց իրավացիությունը կարող են նոր ուսումնասիրությունները հաստատել:
հայ. բաբայ «լեռ» < ուրարտ. baba
հայ. բուրգն < ուրարտ. burgana
հայ. աւելի < ուրարտ. abili-d(u)-
հայ. պեղ-ել < ուրարտ. pili «ջրանցք»
հայ. թուել «ասել, պատմել» < ուրարտ. tia(u)-
հայ. ուղտ < ուրարտ. ultu
հայ. սան «կաթսա» < ուրարտ. šani «ման»
հայ. ծով < ուրարտ. «ue
հայ. խարխարել < ուրարտ. harhar-š(u)-
հայ. հովիտ < ուրարտ. hubi
հայ. խաղաղ < ուրարտ. harare «խաղաղություն, բարօրություն»
հայ. կամ «կենալ, կանգնել, երեւան գալ» < ուրարտ. ka- «կանգնել, երեւալ»
հայ. կորդ «անմշակ» < quldi/e(ni) «խոպան. անմշակ, ամայի»
հայ. ուրիշ < ուրարտ. uliše
հայ. տոլի «խաղող» < ուրարտ. uduli «խաղողի այգի»
հայ. տի- (տի-կին, տի-այր) < ուրարտ. teae «մեծ»

Խուրրիական շերտը հայ եւ հրեա ժողովուրդների կազմավորման գործում
Ատենախոսության նախորդ բաժիններում ներկայացված նյութերում հստակ գծագրվում են Հայկական լեռնաշխարհի եւ Քանաանի միջեւ մ.թ.ա. III-II հազ. տեղի ունեցած փոխհարաբերությունների ուրվագծերը: Այսօր առկա սկզբնաղբյուրների ընձեռած հնարավորությունները ոչ բոլոր դեպքերում են թույլ տալիս պարզելու այդ շփումների խորությունը եւ ծավալները, սակայն ակնհայտորեն կարող ենք եզրակացնել Քանաանում ոչ սեմական էթնոմշակութային տարրի խաղացած որոշակի դերի մասին: Կասկածից վեր է, որ մ.թ.ա. III հազ. եւ նույնիսկ II հազ. կեսերին, երբ Հյուսիսային Միջագետքից, Հյուսիսային Սիրիայից եւ Հայկական լեռնաշխարհից դեպի Քանաան վկայված են մի քանի հաջորդական միգրացիաներ, հնարավոր չէ խոսել հայ եւ հրեա ժողովուրդների կազմավորված կարգավիճակի մասին: Առավելագույնը, որ կարելի է ենթադրել, երկու ժողովուրդների կազմավորման գործընթացում լուրջ ներդրում ունեցած միեւնույն բաղադրատարրերն են: Դրանք հետեւյալն էին: Ատենախոսության երրորդ գլխում քննարկված՝ հայ ժողովրդի կազմավորման մեջ խուրրիների կարեւոր դերի մասին խնդիրը որոշակի կռվան է: Հայտնի է, որ խուրրիները, անկախ այն հանգամանքից, թե որտեղ էր գտնվում նրանց «նախահայրենիքը» (տե՛ս Գլուխ 1. «Խուրրիները

Միջագետքում, Սիրիայում եւ հարակից շրջաններում մ.թ.ա. I II հազ. վերջերին - II հազ. սկզբներին» ենթագլուխը), մ.թ.ա. III հազ. վերջերին - II հազ. բնակվում էին Հայկական լեռնաշխարհի հարավում եւ արեւմուտքում: Սրանք այն շրջաններն էին, որտեղ ժամանակի միջագետքյան եւ խեթական սեպագիր աղբյուրները հիշատակում են մեծաքանակ խուրրիական պետություններ: Նույնիսկ ամենախոշոր խուրրիական պետության՝ Միտաննի անկումից դարեր անց խուրրիական դինաստիաները շարունակում են գոյատեւել Եփրատի եւ Տիգրիսի միջին ու վերին հոսանքների շրջանում: Հայերենում խուրրիերենից կատարված զգալի քանակությամբ փոխառությունները վկայում են այն մասին, որ հայերը եւ խուրրիները ապրել են տեւական համակեցության շրջան: Հայկական պետականության ձեւավորմանն ու կայացմանը զուգընթաց, բնականաբար, խուրրիները, մյուս էթնիկական խմբերի հետ միասին, ձուլվեցին հայ ժողովրդի մեջ:

Հնդեվրոպացի արիացիների՝ Հայկական լեռնաշխարհի հետ առնչակցության վերաբերյալ սկզբնաղբյուրների տեղեկությունները չափազանց սուղ են, սակայն նրանց գոյության փաստն արդեն իսկ բավարար է:

Վերոհիշյալ երկու էթնոսները պետք է յուրատեսակ կապող օղակ լինեին Հայկական լեռնաշխարհի եւ Քանաանի միջեւ, այն առումով, որ հայ եւ հրեա ժողովուրդների մեջ, նրանց կազմավորման շրջանում, մուտք են գործել զգալի քանակությամբ խուրրիներ ու արիացիներ: Սրանց ներկայությունը Քանաանում լավ արտացոլված է Աստվածաշնչի տարբեր գրքերում եւ արժանացել է մասնագետների ուշադրությանը:

Խուրրիների եւ արիացիների՝ Քանաան արտագաղթելը, անկասկած, հրեաների վաղ պատմության շրջանում, պետք է անհամեմատ ավելի տեսանելի լիներ լեզվի եւ հոգեւոր-նյութական մշակույթի մեջ, որը հետագայում աստիճանաբար կարող էր սեմական մշակույթի ազդեցությամբ օտարվել: Ինչ վերաբերում է այդ էթնիկական խմբերի ազդեցությանը հայ ժողովրդի վրա, ապա այս պարագայում դա շատ ավելի զգալի է:

Խուրրիական եւ արիական ազդեցությունը Քանաանում
Հյուսիսային Միջագետքի ժողովուրդների լեզվամշակութային ազդեցությունը Քանաանի եւ, մասնավորապես, հրեա ժողովրդի վրա հնարավոր է բացահայտել կենցաղային-սովորութային իրողությունների եւ լեզվական մակարդակներով: Մասնագետներն անդրադարձել են այս խնդրին՝ մասնավորապես նշելով խուրրիաբնակ Նուզիի, նաեւ խուրրիական զգալի ազդեցություն դրսեւորող հյուսիսսիրիական Ալալախի տեքստերում վկայված սովորույթների ու Աստվածաշնչի նմանօրինակ իրողություններ:Պարբերական ուսումնասիրություններ այս ուղղությամբ առայժմ չեն ընթացել, ինչով էլ պայմանավորված է ներկայացվող նյութերի սակավությունը, իսկ որոշ պարագաներում նաեւ՝ վիճելի բնույթը: Անհրաժեշտ է նշել որոշ մասնագետների թերահավատությունը Հյուսիսային Միջագետքի ու նահապետական Իսրայելի սովորույթների միջեւ հնարավոր առնչակցության խնդրին (Weeks, 1975-1976: 73ff.; Selman,1978: 114ff.), սակայն նրանց փաստարկները որոշակիորեն արհեստական են եւ, ըստ այդմ, անընդունելի:

Ատենախոսությունում ներկայացված չեն քննարկվող սովորույթների դրսեւորումները հայկական իրականությունում՝ մի պարզ հիմնավորումով: Համարժեք հայկական (կամ որոշակի նմանություն ցուցաբերող) սովորույթները պահպանվել են մ.թ.V դարից սկսած եւ մեթոդաբանորեն ճիշտ չէր լինի համադրել ժամանակի մեծ տարբերությամբ վկայված իրողությունները: Ուսումնասիրվող սովորույթների հայկական դրսեւորումները առանձին քննարկման առարկա պետք է դառնան:

Սովորույթներ. Որդեգրում

Աստվածաշունչը հստակ տվյալներ է պարունակում նահապետական շրջանի հրեաների մոտ որդեգրման ինստիտուտի գոյության վերաբերյալ: Այդ տվյալների համադրությունը հյուսիսային Միջագետքի վաղ խուրրիական հասարակությունում, մասնավորապես Նուզիում տիրող իրավիճակի հետ, թույլ է տալիս ենթադրելու խուրրիական նահապետական սովորույթների ազդեցությունը վաղ հրեական հասարակության վրա:

Ծննդոց 15,2-5.
«Եվ Աբրահամն ասաց. «Ով տեր Եհովա, ինձ ինչ ես տալիս, քանի որ առանց զավակի եմ մնացել, եւ իմ տան տիրողն ահա դամասկոսցի Եղիազարն է: Նաեւ ասաց Աբրահամը. «Որովհետեւ ինձ սերունդ չտվիր, ահա իմ ընդոծինն ինձ ժառանգ կլինի»: Եվ ահա Եհովայի խոսքը եղավ դեպի նրան ասելով. «Նա չի ժառանգի քեզ. այլ նա որ քո մեջքից դուրս կգա, նա կլինի քո ժառանգը»:

Աբրահամը կատարեց Տիրոջ խոսքը եւ, մերձենալով կնոջ աղախին Հագարի հետ, նրանից որդի ունեցավ:

«Եվ Աբրահամի կինը՝ Սառան չէր ծնում նրա համար, եւ նա մի եգիպտացի աղախին ուներ անունը Հագար: Եվ Սառան ասաց Աբրահամին. «Ահա Եհովան ինձ արգելեց ծնելուց, ուրեմն աղախնիս մոտ մտիր, գուցե նրանից որդի ստանամ …» (Ծննդոց 16,1-3):

Անկախ այն բանից, որ նորածնի եւ նրա մոր հանդեպ Սառայի վերաբերմունքը բացասական էր, որի պատճառով նրանք վտարվեցին տանից, սակայն աղախնի որդի Իսմայելը Աբրահամի համար ժառանգ էր, մինչեւ նրա՝ Սառայից որդի ունենալը:

Միեւնույն իրավիճակն է Հակոբի եւ Ռաքելի պարագայում (Ծննդոց 30,1-8): Երբ Ռաքելը չի կարողանում երեխա ունենալ, ապա խնդրում է Հակոբին կենակցել իր աղախին Բիլխախի հետ, որի արդյունքում մեկը մյուսի հետեւից ծնվեցին երկու որդիներ:

Այժմ անդրադառնանք խուրրիական սովորույթներին: Նուզիից հայտնաբերված որդեգրման պայմանագրերում կան մի քանիսը, որոնք ակնհայտորեն նույնական են Աստվածաշնչի վերը հղված հատվածներին:

1)«Արիշեննիի տոհմից Նաշվին կորդեգրի Վուլլուին՝ Պուխիշեննիի տոհմից: Վուլլուն պիտի Նաշվիին մատակարարի սընունդ եւ հագուստ, քանի դեռ վերջինս կենդանի է: Երբ Նաշվին մահանա, Վուլլուն կժառանգի նրա հողը» (Ramsey, 1971: 31):
2)«Շուրրիխաիլուն կորդեգրի Զիկեի որդի Շեննինային՝ Ակկույայի տոհմից, եւ նրան կտա իր հողը, տները եւ ողջ ունեցվածքը» (Speiser, 1930b: 31ff.):
3)«Պուխիյայի որդի Էխել-Թեշուբի որդեգրման աղյուսակը: Նա որդեգրեց Ակույայի որդի Զիգիին: «Իմ բոլոր հողերը, տները, եկամուտը, գույքը, ամբողջ ունեցվածքի մի մասը ես տվեցի Զիգիին»: Եթե Էխել-Թեշուբը (սեփական) որդիներ ունենա, նրանք կստանան կրկնակի բաժին, իսկ Զիգին կլինի երկրորդը: Եթե Էխել-Թեշուբը որդիներ չունենա, ապա Զիգին կլինի ժառանգը: Քանի դեռ Էխել-Թեշուբը կենդանի է, Զիգին կծառայի նրան» (Speiser, 1930: 30):

Վերը բերված Նուզիի որդեգրման պայմանագրերը ցույց են տալիս, որ որդեգրման սովորույթը, ինչպես Նուզիում, այնպես էլ Աստվածաշնչում, ենթադրում էր որդեգրողի եւ որդեգրվողի միջեւ կանոնակարգված հարաբերություններ: Հատկապես ուշադրության է արժանի երրորդ պայմանագիրը, որտեղ խոսվում է որդեգրումից հետո որդեգրողի սեփական որդու ծնվելու հնարավորության եւ տվյալ պարագայում արյունակից ու խորթ որդիների միջեւ ժառանգության բաշխման մասին: Սա Աբրահամի որդի Իսմայելի եւ Իսահակի հարաբերությունների հստակ զուգահեռն է: Որդեգրվողը պարտավոր էր նյութապես ապահովել որդեգրողին մինչեւ նրա կյանքի վերջը: Որդեգրման գործողության ենթատեքստը միանշանակ չէ: Առավել ընդունելի բացատրությունը հետեւյալն է: Նուզիում հողը չէր կարող օտարվել, այլ միայն ժառանգվել ընտանիքի անդամի կողմից: Այդ պատճառով մարդիկ, հողը վաճառելու նպատակով, որդեգրում էին գնորդին (Feigin, 1931: 186ff.; Cassin, 1938; Rhea, Nejat, 1998: 132): Սա, իհարկե, տրամաբանական է, սակայն միակ հնարավոր բացատրությունը չէ: Կարծում ենք, որ որդեգրման պատճառ կարող էր լինել նաեւ արու ժառանգի բացակայությունը: Աղքատ անձինք կարող էին որդեգրվել, ամուսնանալով որդեգրողի դստեր հետ եւ դրա դիմաց չվճարել օրենքով սահմանված գումարը, սակայն պարտավորվելով ծառայել կնոջ հորը: Այս սովորույթը լավ վկայված է Աստվածաշնչում՝ Հակոբի պարագայում: Հակոբը, ամուսնանալով Ռաքելի հետ, 20 տարի պարտավոր էր ապրել Լաբանի տանը եւ աշխատել նրա համար (Ծննդոց 23,15-18):Հակոբը միեւնույն ժամանակ համարվում էր Ռաքելի եղբայրը:

Կին - քույր ամուսնությունը
Ծննդոց 12.11-13
«Եվ եղավ երբ որ նա (Աբրահամը – Հ.Ա.) Եգիպտոս մտնելու մոտեցավ, իր կնոջը՝ Սառային ասաց. Ահա գիտեմ, որ դու մի գեղեցիկ տեսքով կին ես: Եվ անպատճառ երբ եգիպտացիք քեզ տեսնեն, ասելու են՝ սա նրա կինն է. եւ ինձ կսպանեն, բայց քեզ ողջ կթողնեն: Ասա թե դու իմ քույրն ես»:

Ծննդոց 20.1-2
«Եվ Աբրահամն այն տեղից դեպի հարավային երկիր չվեց. եւ Կադեսի եւ Սուրի մեջ բնակվեց, եւ Գերարում պանդուխտ եղավ: Եվ Աբրահամն իր կնոջ՝ Սառայի համար ասաց՝ Նա իմ քույրն է: Եվ Գերարի թագավոր Աբիմելեքը մարդ ուղարկեց եւ առավ Սառային»:

Ծննդոց 26.6-8
«Եվ Իսահակը բնակվեց գերարում: Եվ այն տեղի մարդիկ հարցրին նրանից նրա կնոջ մասին. եւ նա ասաց՝ Իմ քույրն է նա, որովհետեւ վախեցավ ասել թե իմ կինն է, միգուցե այս տեղի մարդիկ ինձ սպանեն Ռեբեքայի պատճառով, որովհետեւ տեսքով գեղեցիկ էր»:
Կին-քույր հարաբերությունների խնդիրն արծարծվում է նաեւ Նուզիի խուրրիական սովորույթներն արտացոլող մի շարք՝ ընտանեկան հարաբերությունները կարգավորող պայմանագրերում (Speiser, 1930b: 60):
1ա)«Ակիյայի որդի Ակուլեննիի քույրության աղյուսակի համաձայն, նա իր քույր Բելտակկադումմիինն վաճառեց Էննայայի որդի ուրազզիին որպես քույր»:
Եվ նույն գործարքի շարունակությունը.
1բ) «Ակիյայի որդի Ակուլեննիի ամուսնության պայմանագրի աղյուսակը, կնքված Էննայայի որդի ուրազզի հետ: … Ակուլեննին իր քույր Բելտակկադումմիին կտա ուրազզիին որպես կին»:

2) «Ես՝Կունի-ասուն՝ Խուտ-Թեշուբի դուստրը, վկաների առջեւ հայտարարում եմ. Նախկինում Ակամ-մուշնին ամուսնական պայմանագիր ձեւակերպեց ինձ համար եւ ստացավ 40 սիկլ արծաթ որպես օժիտ: Ակամ-մուշնին եւ ամուսինս այժմ մահացած են: Այժմ Խուտ-Թեշուբի որդի Ակիյան որդեգրել է ինձ (աքքադերեն՝ «բռնել է ինձ փողոցում) որպես քույր: Որպես իմ օրինական հոգատար, նա ինձ համար պետք է կազմակերպի ամուսնական պայմանագիր եւ ստանա 40 սիկլ արծաթ որպես օժիտ: Ով կխախտի այս պայմանագիրը, պետք է վճարի 18 մինա մաքուր ոսկի»:

Նուզիի պայմանագրերից հղված նյութերը վկայում են, որ վաղ խուրրիական հասարակությունում կինը միաժամանակ պետք է հանդես գար որպես քույր, այսինքն՝ օրենքով համարվեր ամուսնու ընտանիքի անդամը, անկախ այն բանից, որ նրանք արյունակիցներ չէին: Սրանով միայն կարելի է բացատրել քրոջը որեւէ մեկին որպես քույր փոխանցելու (վաճառքի միջոցով) սովորույթը (օրինակներ 1ա եւ 1բ): Է. Սփայզերը համարում էր, որ խուրրիական հասարակությունում ամուսնական կապերը շատ ուժեղ էին եւ ամրապնդվում էին կընոջը քրոջ, այսինքն արյունակցի կարգավիճակ հաղորդելու միջոցով (Speiser, 1962: 91f.): Կասկածից վեր է, որ այս սովորույթի նպատակը կնոջը ամուսնու գույքի ժառանգորդ դարձնելն էր: Որպեսզի կինը հանդես չգար միայն որպես ամուսնու երեխաներին ծնող մայր, նա պետք է որդեգրվեր ամուսնու կողմից (որդեգրման մասին տես վերը՝ «Որդեգրում» բաժինը):

Ինչ վերաբերում է Աստվածաշնչի տվյալներին, ապա փարավոնի եւ Գերարի արքա Աբիմելեքի ու գերարցիների հանդեպ տածած վախը Աբրահամի եւ Իսահակի գործողության իրական պատճառն էր, սակայն հետեւյալ մեկնաբանությամբ: Ընտանիքի գլխավորի (հայր, իսկ նրա բացակայության դեպքում՝ եղբայր) հետ կարելի էր համաձայնության գալ դստեր կամ քրոջ ամուսնության հարցում՝ օժիտ վճարելու պայմանով: Սակայն արդեն «պայմանագրով» ամուսնու հետ կապված կնոջը կարելի էր ձեռք բերել միայն ամուսնու բացակայության (այսինքն մահվան) պարագայում: Աբրահամը եւ Իսահակը օրինական ճանապարհով տիրացել էին Սառային եւ Ռեբեքային ու նրանց կարելի էր ձեռք բերել միայն ամուսիններին սպանելու միջոցով: Այս մեկնաբանությունը, մի փոքր այլ երանգով, առկա է Ջ. Լանգեի մոտ (Lange, 1960: 392):

Անդրանիկության իրավունքի փոխանցում
Ծննդոց 25. 24-34
«Եվ երբ որ նրա օրերը լրացան որ նա ծներ, եւ ահա երկվորյակ էին նրա արգանդում: Եվ առաջինը

ելավ կարմրագույն, բոլոր մարմինը մազոտ վերարկուի պես էր, եւ նրա անունը Եսավ դրին: Եվ նրանից հետո ելավ նրա եղբայրը, եւ նրա ձեռքը բռնել էր Եսավի գարշապարից, եւ նրա անունը Հակոբ դրին: …Մի օր Հակոբը թան էր եփում. Եսավը դաշտից եկավ եւ սոված թուլացած էր: Եվ Եսավը ասաց Հակոբին. «Խնդրեմ այդ շիկաթանից թող տուր ուտեմ, որովհետև թուլացել եմ ….»: Եվ Հակոբն ասաց. «Ծախիր ինձ վրա այս քո անդրանիկությունը»: Եվ Եսավն ասաց. «Ահա ես գնալով մեռնելու եմ, եւ ինչ պետք է ինձ անդրանիկություն»: Եվ Հակոբն ասաց. «Այսօր ինձ երդում արա»: Եվ նա երդում արավ նրան եւ իր անդրանիկությունը ծախեց Հակոբին: …Եվ Եսավն անարգեց անդրանիկությունը»:

Ա. Մնացորդաց 26.10
«Ոզիան՝ Մերարիի որդին, որդիներ ուներ, առաջինը Շիմրին (թեեւ նա անդրանիկը չէր, սակայն հայրը նրան նշանակեց անդրանիկ) …»:
Վերը հղված երկու հատվածները լույս են սփռում ընտանիքում անդրանիկության իրավունքի փոխանցման երկու ձեւերի սովորույթի առկայության փաստի վրա աստվածաշնչային ժամանակների հրեաների մոտ: Առաջին դեպքում այդ գործողությունն արվում էր որդիների փոխհամաձայնությամբ (Հակոբ եւ Եսավ), իսկ երկրորդում՝ հայրն էր որոշում, թե որ որդին պիտի ստանա այդ իրավունքը՝ անկախ առաջնեկությունից: Միեւնույն սովորույթը տեսնում ենք ամրագրված Նուզիի եւ Ալալախի խուրրիական օրենքներում եւ ամուսնության պայմանագրերում:
Նուզի (Speiser, 1930b: 38)
1)«Ինչ վերաբերում է իմ որդի Զիր-Թեշուբին, սկզբում ես չեղյալ համարեցի նրա կապը, բայց այժմ ես վերականգնեցի նրա որդիության իրավունքը: Նա իմ ավագ որդին է եւ կրկին կրկնակի բաժին կստանա»:
2) «Եթե Նաիդուն չի ծննդաբերում, ապա նրա եղբոր դուստր Իվաշուրան պետք է (կնության) տրվի Իրիխալպային: Եթե Իրիխալպայի մյուս կինը (Իվաշուրան – Հ.Ա.) առաջինը որդի ծնի եւ դրանից հետո Նաիդուն որդի ծնի, ապա միայն Նաիդուի որդին կլինի անդրանիկը»:

Ալալախ (Mendelsohn, 1959: 38ff.)

Այստեղից հայտնաբերված ամուսնական պայմանագրի համաձայն, մարդը իրավունք ուներ նշանակելու անդրանիկության իրավունք իր ներկա կնոջ որդիներից մեկին, նույնիսկ եթե մյուս կինը ավելի շուտ որդի ծներ: Մասնագետները արդեն նկատել են Նուզիի եւ Ալալախի խուրրիական սովորույթների նմանությունը աստվածաշնչային նահապետների սովորույթներին (Albright, 1929; Speiser, 1930a: 212): Ահա թե ինչ էր նախատեսում այդ սովորույթը:
1) Անդրանիկությունը առաջին որդու մենաշնորհը չէր:
2) Անդրանիկությունից կարելի էր հրաժարվել կամավոր կերպով կամ այն վաճառել:
3) Հայրը կարող էր որոշել անդրանիկության իրավունքը:
4) Անդրանիկությունը չէր կարող տրվել օտարին, այլ միայն սեփական որդիներից մեկին:

Տնային կուռքերի ապահովումը
Ծննդոց 31.4-34.
«Եվ Հակոբը մարդ ուղարկեց եւ կանչեց Ռաքելին եւ Լիային դաշտ՝ իր հոտերի մոտ: Եվ ասաց նրանց. Ես ձեր հոր երեսը տեսնում եմ, որ իմ դեմ երեկվա եւ նախորդ օրվա պես չէ, բայց իմ հոր աստվածն ինձ հետ է: … Եվ Հակոբը վեր կացավ եւ իր որդիներին ու կանանց ուղտերի վրա նստեցրեց եւ քշեց իր բոլոր անասուններն ու իր ողջ ստացվածքը որ ստացավ … դեպի իր Իսահակ հայրը գնալու՝ Քանաանի երկիրը: Եվ Լաբանը գնացել էր իր խաշինքը ասրակտոր անելու. եւ Ռաքելին իր հոր կուռքերը (եբր. terafim) գողացավ: … Եվ Ռաքելը վերցրեց կուռքերը եւ նրանց դրեց ուղտի պատատում եւ նստեց վրան»:

Սամուել 1,19.12-13
«Եվ Միլքալը (Դավիթի կինը – Հ.Ա.) Դավիթին վայր իջեցրեց պատուհանից, եւ նա գնաց՝ փախավ եւ ազատվեց: Եվ Միլքալը մեկ արձան վերցրեց եւ նրան անկողնի մեջ դրեց եւ նըրա գլխի տակ դրեց եւ այն ծածկոցով ծածկեց»:

Այժմ ներկայացնենք Նուզիից հայտնաբերված տեքստերից մի հատված (ANET, p.219).
«Եթե Նաշվին սեփական որդի ունի, ապա նա պետք է (ունեցվածքը) հավասարապես բաժանի Վուլլուի

հետ, բայց Նաշվիի որդին պետք է վերցնի Վուլլուի աստվածներին: Սակայն եթե Նաշվին սեփական որդի չունի, ապա Վուլլուն կվերցնի Նաշվիի աստվածներին»:

Նուզիի տեքստից հստակ երեւում է, թե ինչ կարեւոր նշանակություն ունեին խուրրիական հասարակությունում ընտանիքում երկրպագվող աստվածների պատկերները (արձանները): Դրանք խորհրդանշում էին ժառանգման իրավունքը: Սեփական-արյունակից որդին միայն իրավունք ուներ տիրանալու այդ խորհրդանիշերին:

Աստվածաշնչի որոշ միջնադարյան հրեա մեկնիչներ (Իբն Էզրա, Քիմխի եւ այլն) կարծում էին, որ Ռաքելը գողացել էր կուռքերը, որպեսզի թաքցնի Լաբանի կողմից իրենց փախուստի մասին տեղեկանալը: Այս բացատրությունը, իհարկե, անհիմն է: Կարելի է առաջարկել ավելի իրատեսական մեկնաբանություն: Հակոբի եւ Լաբանի բախումը կարելի է բացատրել հետեւյալ կերպ: Գողանալով Լաբանի տան կուռքերը՝ դրանով Հակոբը փորձում էր հավակնել Լաբանի սեփական որդիների (ի տարբերություն իրեն, որը Լաբանի որդեգիրն էր Ռաքելի եւ Լիայի միջոցով) ժառանգման իրավունքին: Թերեւս, Ռաքելն էր դրդել Հակոբին այս արարքին, նրա ունեցվածքին տիրանալու մղումով:

Հատկանշական է, որ ընտանեկան պաշտամունքի առարկա կուռքերի առկայության մասին աստվածաշնչային նահապետների օրոք քաջատեղյակ էր մ.թ. Վդ. հայ կրոնա-փիլիսոփա Եզնիկ Կողբացին, քանի որ հետաքրքիր տեղեկություն է հաղորդում այդ կապակցությամբ. «Բայց հեթանոսությունն սկիզբ առավ Սերուքի ժամանակներից. որովհետեւ երբ աշխարհ եկած մի քաջ անձնավորություն մեռնում էր, նրա քաջության հիշատակի համար պատկերը ներկերով նկարում էին, եւ տխմարները, այնտեղից սովորելով, հետզհետե պաշտում էին (այդպիսիներին): Կուռքերի ու արձանների հանգամանքն էլ Աբրահամի հոր՝ Թարայի օրոք (սկսվեց): …Առաջին կրոնները կոչվում էին խուժական, սկյութական եւ հեթանոսական, մինչեւ որ եկավ Աբրահամի աստվածապաշտությունը եւ վերացրեց դրանք»:

Բնականաբար, ընտանեկան կուռքերը աստվածները չէին, այլ տվյալ ընտանիքի նախնիների պատկերները, ինչպես ներկայացնում է դրանք Եզնիկ Կողբացին: Ինչ վերաբերում է Հակոբի եւ Դավիթի օրոք կուռքերի առկայությանը, ապա պարզ է, որ նույնիսկ Աբրահամի մահից շատ հետո էլ հրեաները դեռեւս շարունակում էին երկրպագել դրանց:

Մահամերձի օրհնությունը

Մահամերձ հոր օրհնությունը անդրանիկության իրավունք ձեռք բերած որդուն՝ կարեւոր տեղ ուներ աստվածաշնչային հասարակության մեջ: Այսպես, Իսահակը օրհնեց Հակոբին, Հակոբը՝ Հովսեփին, Դավիթը՝ Սողոմոնին:

Ծննդոց 49. 25-26
«Աստված տա քեզ երկնքի ցողից եւ երկրի պարարտությունից, եւ ցորենի ու գինու առատություն: Թող ժողովուրդները քեզ ծառայեն, քո եղբայրների տերը եղիր եւ քո մոր որդիները քեզ խոնարհություն անեն, քեզ անիծողը անիծյալ լինի եւ քեզ օրհնողը՝ օրհնյալ»:
Այժմ ներկայացնենք Նուզիից վկայված մահամերձ հոր օրհնության մի փաստ:
«Թարմիյան այսպես ասաց դատավորների առջեւ. «Իմ հայր Խույան հիվանդ էր եւ պառկած էր անկողնում. հետո հայրս բռնեց ձեռքս եւ ասաց ինձ. իմ մյուս որդիները, որոնք ավելի մեծ են, կանայք են առել, բայց դու կին չունես, այդ պատճառով ես քեզ որպես կին եմ տալիս Զուլուլի-Իշտարին …»:
Այս բովանդակությամբ այլ վկայություններ էլ կան Նուզիից: Դրանք ցույց են տալիս, որ ընտանիքի կամ տոհմի նահապետի օրհնությունը կարեւորագույն դեր ուներ դրա հետագա ճակատագրում: Այն կարող էր որդուն տալ ժառանգությանն առնչվող յուրաքանչյուր մենաշնորհ: Հենց այդ օրհնության շնորհիվ էր, որ Աբրահամի, Իսահակի եւ Հակոբի կրտսեր որդիները ստացան ժառանգությունը:
Համայնքի կոլեկտիվ պատասխանատվությունը
Աստվածաշնչում առկա է մի սովորույթ, որը ծագում է շատ վաղ՝ մինչպետական ժամանակներից, ըստ որի համայնքը պատասխանատու էր իր անդամների հանցագործության համար, եւ համայնքի ավագները իրավունք ունեին իրենց սահմանած պատիժը կիրառելու նրանց նկատմամբ. որեւէ մեկը չէր կարող նրանց արգելել այդպես վարվել:

Թվականք 21.1-7
«Եթե մարդը գտնվել է սպանված՝ դաշտում ընկած … եւ հայտնի չէ թե ով է նրան սպանել, ավագները եւ դատավորները պետք է գնան եւ չափեն մարմնից մինչեւ հարեւան քաղաքները եղած հեռավորությունը: Հետո մարմնին ամենամոտ քաղաքի ավագները պետք է հանցագործին տանեն …: Այնտեղ, հովտում նրանք պետք է կոտրեն հանցագործի վիզը …: Հետո մերձակա քաղաքի բոլոր ավագները պետք է լվանան ձեռքերը հանցագործի վրա, որի վիզը կոտրվել էր հովտում նրանք պետք է հայտարարեն. Մեր ձեռքերը չեն այս արյունը թափել, ոչ էլ մեր աչքերն են տեսել»:
Գրեթե նույն սովորույթը տեսնում ենք խուրրիական Նուզիից հայտնաբերված մի տեքստում (Gordon, 1936: 1ff.):
«Ոմն Գել-Թեշուբ մեղադրում է Պուրուլլի քաղաքի բնակիչներին գողության մեջ, բայց վերջիններս ասում են. 'Մենք երդվում ենք, որ նրանք (այսինքն՝ քաղաքի բնակիչները – Հ.Ա.) չեն գողացել այդ բաները, որ (կան) համաձայն (այս) աղյուսակի, Գել-Թեշուբի տանից եւ որ Պուրուլլիի մարդիկ չեն մտել Գել-Թեշուբի տունը»:

Տերմիններ
Աստվածաշնչի Գիրք Ծննդոցում նահապետները գործածում են որոշ բառեր կամ արտահայտություններ, որոնք չեն բացատրվում եբրայերենով, սակայն որոնց համարժեքները կարելի է գտնել հնդեվրոպական լեզուներում, նաեւ՝ խուրրիերենում: Այդպիսի բառերի եւ արտահայտությունների քննությունը նոր է սկսվում, այդ իսկ պատճառով ստորեւ կներկայացնենք դրանցից մի քանիսը, որոնց մեկնաբանությունը հավանական է թվում:
Ծննդոց.22.1-14
Աստված որոշեց փորձել Աբրահամի նվիրվածությունը իրեն եւ պատվիրեց զոհաբերել իր միակ որդի Իսահակին:
«Առ քո սիրած որդի Իսահակին եւ Մորիայի երկիրը գնա եւ այնտեղ նրան ողջակեզ արա այն սարերից մեկի վրա, որ ես քեզ կասեմ»:
Երբ Աբրահամը պատրաստվում էր զոհաբերել որդուն, Աստված կանխեց նրան, ասելով, թե ինքը համոզվեց Աբրահամի նվիրվածության մեջ եւ որդուն փոխարինեց խոյով: Եվ Աբրահամը այդ վայրն անվանեց Եհովա ջիրեհ:
Աստվածաշնչի տարբերակներում ջիրեհ բառը թարգմանված է «տեսնված» («Եհովան կերեւա»): Այնուհետեւ, այս խոսքից հետո տեքստում ասվում է. «որ այսօր ասվում է, թե այն սարում, ուր Եհովան երեւում է»: Այստեղ առկա է նույնի կրկնություն, եթե հետեւենք ավանդական մեկնաբանությանը: Մասնագիտական գրականությունում արդեն արտահայտվել են տարակուսանքներ վերոհիշյալ թարգմանության առթիվ (Keil and Delitsch, 1988: 56f.): Կարծում ենք, որ հնդեվրոպական լեզուներում առկա է աստվածաշնչային բառի համարժեքը ի դեմս սանսկրիտի cara- «վարմունք, կերպ, եղանակ», հին պարսկ. car- «հնար, ճար, միջոց», հայ. ճար «հնար, միջոց, դարման» եւ այլն, որոնք հանգում են հնդեվր. quer- «անել, գործել» արմատին (Աճառյան, 1977: 190-191):
Քննարկվող հատվածը, այսպիսով, ավելի ճիշտ կլինի մեկնաբանել որպես «Եհովա (որ) կճարի/հոգ կտանի»:

Ծննդոց 31.44-48
Հակոբի եւ Լաբանի վեճը՝ տնային կուռքերը պահելու առնչությամբ: Վեճը հարթելու նպատակով որոշում են երդվել: Հակոբը մի քար է վերցնում եւ դնում հողի վրա: Այնուհետեւ դիմում է իր եղբայրներին, որպեսզի նրանք քարեր հավաքեն եւ դիզեն մի տեղ: Այդ քարակույտի վրա Հակոբը եւ Լաբանը հաց են ուտում, ու Լաբանը այդ քարակույտը ճեղար շահադուտա է անվանում: Ճեղար, ժիղար տերմինը, մեր կարծիքով, կարելի է հանգեցնել հայ. շեղջ/շիղջ «դեզ, կույտ» բառին, որը բխում է հնդեվր. k'eu- «ուռչել» արմատից (Աճառյան, 1977: 509): Շա(հա)դուտա-ն, թերեւս, կարելի է բացատրել հայ. շահատակ «առաջամարտիկ» բառով (պահլավ. *šahratak = պարսկ. šahrtak) (Աճառյան, 1977: 484):

Հատուկ անուններ
Բացի ատենախոսության երկրորդ գլխում ներկայացված խուրրիական եւ արիական հատուկ անուններից, որոնք վրկայված են մ.թ.ա. XV-XIIIդդ. սեպագրական աղբյուրներում, կան որոշակի քանակությամբ այլ անուններ, որոնք հիշատակվում են Աստվածաշնչի տարբեր հատվածներում:

Թվականք 2.22
Այստեղ նշվում է, որ Էդոմցիների գալուց առաջ այստեղ ապրում էին խուրրիներ: Իսկ միդիանիտների անվանումը հիշեցնում է Միտաննի պետության անունը (Moisheson, 2001: 132f.):

Եզրակացություններ
Ատենախոսության երրորդ գլխում քննարկված հարցերը կարելի է ամփոփել հետեւյալ կերպ.
1) Հյուսիսային Միջագետքը այն գոտին էր, որը կապում էր Հայկական լեռնաշխարհը եւ Քանաանը ու որն ամփոփում էր երկուսի քաղաքակրթական-մշակութային արժեքները՝ կատարելով դրանց փոխանցողի դերը: Այստեղ էին ձեւավորվում վերոհիշյալ տարածաշրջաններում բնակվող ժողովուրդների միջեւ պատմամշակութային ու էթնիկական բոլոր փոխառնչությունները, որոնք ժամանակ առ ժամանակ փոխանցվում էին հարեւան տարածաշրջաններ դրանց ստեղծողների միջոցով:
2) Հյուսիսային Միջագետքում խուրրիներն ապրում էին կողք կողքի Առաջավոր Ասիայի շատ ժողովուրդների հետ (շումերներ, հնդեվրոպացի-հնդարիացիներ, սեմական ծագման աքքադցիներ, ամորեյներ, արամեացիներ, հայերի նախնիներ եւ այլն): Առկա աղբյուրագիտական մեծ հենքին վեր են հանվել դրանցից յուրաքանչյուրի՝ այստեղ հայտնվելու ժամանակն ու խաղացած դերը:
3) Աստվածաշնչի եւ սեպագրական աղբյուրների տեղեկությունների համադրմամբ պարզվել է, որ հրեաների նախահայր Աբրահամ նահապետն ու նրա անմիջական հետնորդները Հյուսիսային Միջագետքից դեպի Քանաան մ.թ.ա. II հազ. 1-ին կեսին տեղի ունեցած ժողովուրդների (խուրրի-հնդարիական) տեղաշարժերի կրողներն էին:
4) Աստվածաշնչում Աբրահամ նահապետի եւ նրա սերունդների գործունեությունը նկարագրող հատվածների քննության արդյունքում ի հայտ են գալիս զգալի քանակությամբ հյուսիսմիջագետքյան-խուրրիական սովորույթներ, տերմիններ, որոնք լավագույնս են հիմնավորում նախորդ կետում առկա եզրակացությունը:

Ամփոփում

Ատենախոսության հիմնական եզրակացությունը հետեւյալն է:
1) Բրոնզեդարի ընթացքում (III-II հազ.) Հայկական լեռնաշխարհից եւ դրան հարավից տարածքներից (Հյուսիսային Միջագետք) հնագիտորեն (միջին բրոնզեդարի համար՝ նաեւ գրավոր աղբյուրներով) վկայված են առնվազն երկու խոշոր էթնիկական տեղաշարժեր: Առաջինը մ.թ.ա. XXVII-XXVIIդդ., երկրորդը՝ մ.թ.ա. XVIII-XVIIդդ.: Առաջինի հետեւանքով Սիրիայում ու Պաղեստինում հաստատվում է Հայկական լեռնաշխարհից տեղաշարժված հոծ բնակչություն, որը վճռական դեր է խաղում նշված տարածաշրջանի վաղ բրոնզեդարյան մշակույթի կործանման գործում: Այս առաջին տեղաշարժային ալիքի կրողները, տեղի արեւմտասեմական բնակչության հետ միասին, պետք է կարեւորագույն դեր խաղային մասնավորապես Քանաանի միջին բրոնզեդարյան մշակույթի զարգացման գործում:
2) Սիրիայում եւ Քանաանում հաստատված Հայկական լեռնաշխարհի բնակչությունը, այսպիսով, հետագա մի քանի դարերի ընթացքում (մինչեւ մ.թ.ա. XVIIIդ.) կազմել է այս տարածաշրջանի բնակչության մի ստվար զանգվածը: Հաշվի առնելով նրանց գալստյան առանձնահատկությունները (մի շարք հնավայրերում հնագիտորեն վկայված են լուրջ ավերածություններ)՝ որոշ շրջաններում եկվորները պետք է կազմեին քիչ թե շատ խոշոր անկլավներ: Դրա հիմամբ կարելի է եզրակացնել, որ հետագայում Սիրիա եւ Քանաան մուտք գործած սեմական ու այլ բնակչության համար սրանք արդեն պետք է դիտվեն որպես ենթաշերտ:
3) Միջին բրոնզեդարյան տեղաշարժի ընթացքում, որում հիմնական մասնակիցները խուրրիներն ու արիացիներն էին, Սիրիայի եւ Քանաանի տարածքի մեծ մասում այս էթնոսների կողմից ստեղծվեցին մեծաքանակ մանր իշխանություններ: Այս տեղաշարժային ալիքի անդրադարձը հիքսոսների կողմից Եգիպտոսի նվաճումն էր: «Հիքսոսներ» հավաքական անվան ներքո եգիպտացիները նկատի ունեին ոչ թե մի որոշակի էթնոս, այլ Քանաանում այդ պահին ձեւավորված տեղացի ու եկվոր էթնիկ խմբերի (խուրրիներ, արիացիներ, սեմիտներ) ամբողջություն:
4) Հայ եւ հրեա ժողովուրդների միջեւ առկա մարդաբանական ընդհանրությունների հիմքում, անկասկած, ընկած է վերը նշված տեղաշարժերի հետեւանքով Քանաանում Հայկական լեռնաշխարհի բնակչության հաստատումը:
5) Հյուսիսային Միջագետքը Հայկական լեռնաշխարհը եւ Քանաանը միմյանցից տարանջատող ու միաժամանակ կապող տարածաշրջան էր, որն ամփոփում էր երկուսի քաղաքակրթական-

մշակութային արժեքները՝ կատարելով դրանց փոխանցողի դերը: Այստեղ էին հանդիպում միմյանց վերոհիշյալ տարածաշրջաններում բնակվող ժողովուրդները, այստեղ էին դրվում պատմամշակութային ու էթնիկական փոխառնչությունների միջեւ ընդհանրությունների հիմքերը:
6) Հյուսիսային Միջագետքում խուրրիական էթնոսի կարեւորագույն դերի մասին եզրակացությունը հենվում է այն անառարկելի փաստին, որ այստեղ մ.թ.ա. III հազ. կեսերից ընդհուպ մինչեւ մ.թ.ա. I հազ. կեսերը, շուրջ 2 հազ տարի, վկայված է հոծ խուրրիական բնակչություն, որը սերտ շփումների մեջ էր հյուսիսի ու հարավի եւ արեւմուտքի ժողովուրդների հետ (շումերներ, հնդեվրոպացիներ, սեմիտներ եւ այլն):
7) Աստվածաշնչի եւ սեպագրական աղբյուրների տեղեկությունների համադրումը հանգեցնում է այն եզրակացության, որ, ի դեմս հրեա ժողովրդի նախահայր Աբրահամ նահապետի ու նրա անմիջական հետնորդների, գործ ունենք Հյուսիսային Միջագետքից դեպի Քանաան մ.թ.ա. II հազ. 1-ին կեսին տեղի ունեցած ժողովուրդների (խուրրի-հնդարիական) տեղաշարժերի հետ:
8) Աստվածաշնչում Աբրահամ նահապետի ու նրա սերունդների գործունեությունը նկարագրող հատվածների քննության արդյունքում ի հայտ են գալիս զգալի քանակությամբ հյուսիսմիջագետքյան-խուրրիական սովորույթներ եւ տերմիններ, որոնք լավագույնս են հիմնավորում նախորդ կետում առկա եզրակացությունը:
9) Մի կողմից Հյուսիսային Միջագետքի խուրրիների եւ Քանաանի վաղ հրեական հասարակության, մյուս կողմից՝ խուրրիների եւ հայ ժողովրդի միջեւ լեզվաբանորեն վկայված ընդհանրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ երկու ժողովուրդների միջեւ, դրանց կազմավորման փուլում, ձեւավորվել էին զգալի ընդհանրություններ, որոնց աղբյուրը եւ կրողը Առաջավոր Ասիայում լայնորեն տարածված խուրրիներն էին: Թերեւս, Աբրահամ նահապետը, եւ ի դեմս նրա Աստվածաշնչի, Քանաանում հաստատված էթնիկական խումբը պետք է խուրրիական ծագում ունենար:

Հովհաննես Ահմարանյան

«Հայ Արիներ» Թիվ 85, 86, 87, մայիս, հունիս, հուլիս, 2007թ.